

371.3
0-33

370
2484-0L



370
2484-OL

2802-10

№ 1. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ն 1.

37.3

0-33

Վ. Յ.

Վ: 8892

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻԴԱԿԱՑԻԿԱՆ

Կ Ա Մ

ՈՒՍՄՈՒՆՔ ԴԱՍԱՀԱՆԴՈՒԹԵԱՆ

(ԶԵՐՆԱՐԿ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

1004
16034



Կազմեց Ա. Օլքեզեան



ԹԻՖԼԻՍ

Տիպ. Մ. Վարդանյան, Գանովսկ. № 3. || Տպ. Մ. Վարդանյան, Գան. № 3.

1906

2 SEP 2013

48618

ԶԱԽՄԱԽՉԵԱՆ

ՊԵՏՈՒՍԿԱՆ ԸՆՏԱԿԻՒՆ

ԵՐԵԽԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Дозволено Цензурою, Тифлисъ, 3 Мая 1906 г.

Նորում է

ԿԱԶՄՈՂՀ

Ա Թ Ա Զ Ա Բ Ե Կ

Մեր այս համառուս ձեռնարկը կազմելիս հիմք ենք ընդունել Պրագի ուսուցչապետ Վիլմանի «Didaktik als Bildungslehre, II Բ» գասական գրուածքը և առաջնորդուել ենք նոյն գրուածքից քաղուածօրէն կազմած ուսուցչապետ Տօյչէրի «Theoretische Paedagogik»-ով. բացի վերոյիշեալներից՝ «Կախճանարանութիւն» գլուխը կազմելիս առաւելապէս օգտուել ենք ենայի ուսուցչապետ Ռայնի «Paedagogik im Grundriss» գրուածքից, իսկ «Ֆօրմալ աստիճաններ» ի ուսուռնքի համար ի նկատի ենք առել դոկտոր Ադոլֆ Մատթիասի «Praktische Paedagogik»-ը:

Այս գիրքը կազմուած է այն գասախօսութիւններից, որ հեղինակը 1904 5 ուսումնական տարրուայ ընթացքում կարդացել է Գէորգեան ձեմարանի մասնագիտական բաժնում. միմիայն ներկայ դպրոցական բարենորոգման ինդիքն և նման ձեռնարկի միանգամայն բացակայութիւնը մեզ հարկադրեցին լոյս ընծայել այս գիրքը։ Հեղինակը խոստովանում է, որ իւր գրուածքը խիստ անկատար է և թերի, շատ հասկանալի պատճառներով։ Նախ որ մանկավարժական գրականութիւնը մեզանում դեռ մանկական տարիքում իսկ չէ, միւս կողմից՝ մանկավարժութիւնը, որպէս գիտական դիսցիլին թէպէտ դրուած է հոգեբանական ամուր հիմունքների վրայ, այսուամենայնիւ իւր զանազան մասերում՝ կրթութեան իդէալի, ուսման նիւթերի, ուսուցման մեթոդի և այլ ինդիքներում տակաւին ենթակայ է առածգական ըմբռնումների և միակողմանի շեշտումների։

Մեր աղբիւրները մասսամբ զուտ՝ Հերբարտ-Ցիլէրեան դըպրոցին են պատկանում, մասսամբ էլ նէօ-Հերբարտեան ուղղութեանը։ Անտի-Հերբարտեան հեղինակները անտես են արուածայն պարզ պատճառով, որ նրանք դեռ պայքարի են բռնուած

Հերբարտեան գպրոցի հետ և իրանց մասնակի հայեացքները տակաւին չեն վերածել մի կարղաւորեալ սիստեմի, մինչդեռ Հերբարտը և իւր անուան շուրջը խմբուած մանկավարժական գըպրոցը կրթութեան տեսութեան և զործնականի համար մի այնպիսի մնայուն սիստեմ է ստեղծել և այնքան հարուստ ու բազմակողմանի նիւթ հաւաքել, որ անկարելի է մանկավարժութեան մէջ մի քայլ անգամ առաջ գնալ, առանց այդ գպրոցի տեսութեան հիմնական գծերի հետ ծանօթ լինելու:

U., O.



Ե Ւ Ւ Թ Թ Թ Ե Ր Ի Ց Ա Ն Կ

ՆԵՐԱԾՈՒԹՅԻՆ

- Մանկավարժութեան մասերը.
 - Տեսական և գործնական մանկավարժութիւն.
 - Անհատական և սոցիալական մանկավարժութիւն.
 - Մանկավարժութեան պաշտօնը.
 - Մանկավարժութեան յարաբերութիւնը այլ գիտութիւնների և պատմութեան հետ.
 - Մանկավարժութեան բաժանումը.

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Հայութանս բանաթիւն (Theleologia).

Կրթութեան բարձրագոյն իդէալը.

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Մեթոդագինը (Methodologia).

U. S. I. A. B. H.

Ուսուցման նպատակը

R. L. R. B.

Առաջնային Եվրոպական

- Պատմականօրէն մեզ ժառանգութիւն հասած նիւթեր.
 - Ուսման նիւթերի բաժանումը (հիմնական և լրացուցիչ).
 - Լեզուագիտութեան կրթական արժէքը.
 - Մայրենի լեզու.
 - Հին և օտար լեզուներ.
 - Մաթեմատիկա.
 - Կրթութեան լրացուցիչ տարրերը (կրօնագիտութիւն, պատմութիւն, տշխարհագրութիւն, բնական պատմութիւն, ընագիտութիւն և քիմիա):

Գ. Գ. Ա. Խ. Խ.

Ուսման ծրագիրը

1. Նիւթերի դասաւորման պատմական սկզբունքը.
2. Ուսման նիւթերի դասաւորումը ըստ բովանդակութեան.
3. Ուսման նիւթերի դասաւորումը համաձայն տարիքի.
4. Ուսման նիւթերի փոխադարձ յարաբերութիւնը և կեղ-
րոնացումը.

Գ. Գ. Ա. Խ. Խ.

Ուսուցման ընթացքը

1. Ուսուցման ընթացքի պաշտօնը.
2. Իւրացման հոգեբանական մոմենտները.
3. Դասաւանդութեան ձևերը.
4. Իւրացման տրամաբանական մոմենտները.
5. Ուսման նիւթի օրդանական-գենետական յօդաբաշխումը.
6. Օրդանական-գենետական սկզբունքի գործադրութիւնը.

Ե. Գ. Ա. Խ. Խ.

Ուսուցման եղանակը

1. Ուսուցման եղանակի պաշտօնը.
2. Իւրացման հոգեբանական մոմենտների յաջողութեան պայմանները. ա) հետաքրքրութիւն, բ) աշխատասիրութիւն, գ) ուշադրութիւն, դ) կրթական աշխատանքի արժէքի ըմբռնումն, ե) ապահովեցնելու և զ) ամրապնդումն և վարժութիւն.
3. Իւրացման տրամաբանական մոմենտների գործադրու-
թիւնը.
4. Ուսման նիւթի յօդաբաշխման արժէքը ստացութեան, հասկացողութեան և ամրապնդման համար.
5. Դասաւանդութեան ձևերը. ա) հերիստական (գտական դաս), բ) ներկայացող դաս, գ) մեկնաբանող դաս, դ) զարդաց-
նող դաս, ե) հրահանգող դաս.
6. Դասաւանդութեան ֆորմալ աստիճանները:

Կ Ե Ր Ը Ծ Ո Ւ Խ Թ Ա Խ Կ Կ Կ

§ 1. Մանկավարժութեան մասերը

Մանկավարժութիւնն այն գիտութիւնն է, որ զբաղ-
ւում է կրթութեամբ՝ այսինքն, ուսուցանելու, դաստիա-
րակելու և խնամելու արուեստով:

Որովհետև մանուկը արտաքին տպաւորութիւնների նկատմամբ խիստ դիւրնկալ է և կարօտ հասակաւորների օգնութեանը և խնամքին, ուստի կրթութեան արուեստը հնարաւորութիւն և միջոց ունի զարգացնել նրա սաղմնա-
յին ընդունակութիւնները, կրթել նրա զգացումներն ու
ձգտումները և խնամել ու տնտեսել նրա բնական ուժերը:

Բնական է, որ նոյն խակ ամենահին ժամանակնե-
րում գոյութիւն ունենար կրթութեան ուսումնակը, թէպէտ
և այն լինէր պարզ խրատների մի հաւաքածու, որ նախ-
նիքը ձեռք բերելով իրանց դարաւոր փորձառութիւններից
և խորհրդածութիւններից՝ ժառանգաբար աւանդէին յաջորդ
սերունդներին. շատ ուշ միայն առաջ են գալիս կրթութեան
գիտութեան բազմաթիւ սիստեմներ, որոնք՝ մեծ մասամբ
յենուած լինելով փիլիսոփայական սիստեմների վրայ,
ձգտում են կերպարանափոխել մատաղ սերնդի կրթու-
թեան համար գոյութիւն ունեցող կարգերն ու հաստա-
տութիւնները, կրթական այդ կարգերն ու հաստատու-
թիւնները՝ ազգերի պատմութեան բեմը գալու և անյայ-

տանալու համաձայն, ենթակայ են եղել մեծամեծ փոփոխութիւնների:

Այն գիտութիւնը, որի նիւթն է պատճառի և հետեւանքի կապակցութեամբ ուսումնասիրել տարբեր ազգերի կրթական հաստատութիւններն ու իդէալները, ուսուցման եղանակն ու բովանդակութիւնը և այն վարդապետութիւնները, որոնք որևէ ձեռվ, միջնորդապէս թէ անմիջապէս, ազգել են կրթութեան պարագաների վրայ, կոչում է պատմական մանկավարժութիւնն, որ սոսկ մանկավարժական գիտութեան պատմութիւնը չէ, այլ քաղաքակրթութեան պատմութեան լուսաւոր էջերից մէկը:

Սակայն կրթութիւնը մարդկութեան համար մի մնացուն խնդիր է և պարտականաթիւն, որ ամեն մի սերունդ միւսի նկատմամբ պարտաւոր է կատարել. մանկավարժութեան գործն է ցոյց տալ, թէ ինչ եղանակով կարելի է այդ պարտականութիւնը կատարել. նա պէտք է բոլոր ունեցած փորձառութիւններից և տեսական ծանօթութիւններից նորմեր համերով ցուցումներ տայ, թէ ինչպէս պէտք է վարուել իւրաքանչիւր մասնաւոր դէպքում. այս բանն իւրագործելը գործնական մանկավարժութեան պաշտօնն է:

Մանկավարժութիւնը կարող է նաև մասնաւոր դէպքերը մի ընդհանուր չափի վերածել, բնական պայմանների և միջոցների ներկայութիւնը ենթադրել և գնել կրթութեան հարցերը ընդհանուր ձեռվ՝ այն է, որն է կրթութեան մնայուն նպատակը, որոնք են այն ճանապարհները և միջոցները, որ անշեղ կերպով առաջնորդում են դէպի այն. այսօրինակ խորհրդածութիւններն ու հետախուզութիւնները տանում են մեզ դէպի տեսական մանկավարժութիւնները. տեսական մանկավարժութիւնը գործնականի նկատմամբ ունի զուտ և գործադրական գիտութիւնների յարաբերութիւնը:

Մանկավարժութեան այս երեք ձիւղերն ևս, տարբեր ըստ իրանց բովանդակութեան և մեթոդի, այնուամենայնիւ

առընչութեան և շօշափման շատ կէտեր ունեն և մէկը միւսի նկատմամբ լրացուցիչ և օժանդակ գիտութիւն է հանգիսանում: Տեսական մանկավարժութիւնը չէ կարող միմիայն կրթութեան ընդհանուր սկզբունքներից և մարդու հոգեկան յատկութիւնների ուսումնասիրութիւնից հանել իր օրէնքները. նա պէտք է օգտուի պատմական մանկավարժութեան առած ծանօթութիւններից իր հայեցողութեան հորիզոնը ընդլայնելու համար. նա չէ կարող նաև անուշաղիր թողնել որ կրթութիւնը մի պարտականութիւն է ամեն ժամանակի, ուրեմն և ներկայի նկատմամբ. այլապէս ասած նա նման չէ այն տեսական գիտութիւններին, որոնք զբաղւում են մարդկային կեանքի նկատմամբ անտարբեր երևոյթներով, ինչպէս օր. տիեզերագիտութիւնը. չէ կարելի նմանապէս պատկերացնել պատմական կամ գործնական մանկավարժութիւնը, առանց տեսութեան հաստատուն հիմունքների:

§ 2. Տեսական և գործնական մանկավարժութիւն

Գործնական կրթութիւնը ըստ ժամանակի աւելի առաջ է եղել, քան կրթութեան տեսութիւնը. բայց այսօր երկուսն ևս միաժամանակ և հաւասարաչափ պէտք է ինկատի առնուեն, ապաթէ ոչ հեշտութեամբ կարելի է միակողմանութեան մէջ ընկնել. սակայն ամենից յաճախ դաստիարակները մեղանչում են տեսական մանկավարժութեան դէմ: Եթէ սորբեկսիիզմը, որ պահանջում է դաստիարակի անհատական ըմբռնումներին ազատութիւն տալ, առաջնորդող սկզբունք հոչակուի, ասնը անխուսափելի կերպով մատնուած կը լինի դաստիարակի անհատական հակումներին. նոյնչափ վասակար և միակողմանի է մանկավարժական օրեկտիսիզմը, այսինքն առարկայական կամ մասնագիտական սկզբունքը. այս դէպքում իւրաքանչիւր առարկայ առաջ է քշում իր սեփական ծրագիրը, առանց այլ մասնագիտութիւնները և ծրագրի ամբողջութիւնը ի նկատի առնելու. բայց առարկայի սեփական յաջորդութեան կարգը և մանկան հոգու

զարգացման օրէնքները միշտ համապատասխան և համընթաց չեն լինում. և ուրեմն եթէ իւրաքանչիւր մասնագիտութիւն իրան յատուկ պահանջներն անէ, առաջնորդուելով միմիայն իր առարկայի տեսակէտով, սանը կը դադարէ կրթութեան իսկական առարկան դառնալուց. բայց կը թութեան իսկական նպատակն է, ինչպէս յետոյ կը տեսնենք, սանի անձնաւորութեան ամբողջական զարգացումը:

Մասնագիտութիւնները բաժանում են գիտութեան բովանդակութիւնը անկապ մասերի. անհրաժեշտ է ուրեմն տեսութիւնը, որ ընդորկում է ամբողջութիւնը, մասերի մէջ միութիւն և ներքին կապ հաստատելու համար. սակայն նա ոչ միայն մասնագիտութիւնների մէջն է փոխադարձ կապ և միութիւն հաստատելու, այլ և ոչ մի դէպքում աչքաթող անելու չէ. որ կրթութեան վերջին առարկայական նպատակը սանն է: Տեսութիւնը հեռու լինելով կրթութեանը շարլոնականութիւն և միաձեռութիւն տալուց, սանի անձնաւորութիւնը դարձնում է կրթութեան կեղրոնք: Այսպէս ուրեմն մանկավարժութեան տեսութեան և գործնականի մէջ ոչ միայն հակասութիւն չկայ, այլ ընդհակառակը նրանք գտնուում են փոխադարձ սերտ յարաբերութեան մէջ, նրանք պէտք է փոխադարձաբար իրար վրայ ազդէն և միմեանց գործակցութիւնը որոնեն. եթէ գործնականը տեսութեան միջոցով շատ բան է շահում, ապա և ճշմարիտ տեսութիւնը անուշադիր չի թողնի իրական փորձառութիւնը. երկուսն ևս զարգանում են փոխադարձ աջակցութեամբ. տեսութիւնը առանց գործնականի դատարկ է, իսկ գործնականը առանց տեսութեան՝ կոյր:

§ 3. Անհատական եւ սոցիալական մանկավարժութիւն

Անհատական և սոցիալական կրթութիւնը իրար չեն մերժում, այլ միմեանց անհրաժեշտ լրացուցիչ մասն են կազմում: Իրականութեան մէջ չէ կարող գոյութիւն ունենալ զուտ անհատական և գուտ սոցիալական կրթու-

թիւն, որովհետեւ դաստիարակը որչափ էլ ձգտէ չեզօքացնել շրջապատի ազգեցութիւնը, հեռու պահել սանին ալրող հասարակական ըմբռնումներից, որպէս զի զօրեղ և ինքնուրոյն անհատականութիւն պատրաստէ, այնուամենայնիւ լեզուի միջոցով, ուր բիւրեղացած են հասարակական գաղափարները, սանը անհրաժեշտորէն կը ստանայ միջավայրի բարոյական և մտաւոր կերպարանքը: Երեք տեսակէտից կարեոր և անհրաժեշտ է, որ սանը ստանայ հասարակական կրթութիւն և այն՝ հասարակական կրթական հաստատութեան մէջ. նախ, գործնական տեսակէտից՝ որովհետեւ սանը պատրաստուելու է կեանքի համար և ապագայում հասարակական խմբակցութիւնների գիտակից անդամը դառնալու, անհրաժեշտ է, որ նա կրթուի և դաստիարակուի մի խմբակցութեան մէջ և ոչ անհատաբար և այդպէս ընտելանայ ու ծանօթանայ հասարակութեան բոլոր հաստատութիւնների, նրանց ծագման, գոյութեան նըպատակի և այլ պարագաների հետ, երկրորդ, առարկայական տեսակէտից, մարդկութեան ստեղծագործութիւնները և ձեռք բերած մտաւոր բարիքները պէտք է պահպանուեն և աւանդուեն յաջորդ սերունդներին, որպէս զի ապահովուի մարդկային ցեղի երիտասարդութիւնը. իսկ այս հնարաւոր կը լինի այն դէպքում, երբ կրթուող սերունդը կուսումնասիրէ այն բոլոր սոցիալական հաստատութիւնները, որոնք պահպանում և խնամում են հասարակական բարիքները. և երրորդ, մենք այսօր հնարաւորութիւն չունենք առանձին անհատներով զբաղուելու, որովհետեւ հասարակական բարիքներից ամեն մարդ պէտք է հաւասարապէս բաժին ստանայ:

§ 4. Մանկավարժութեան պատօնը

Հին սերունդը նորին պարզեցում է մարմնական կեանք, օժտուած ուրոյն յատկութիւններով և հակումներով. նոր սերունդը ժառանգում է հնից ցեղային և ազգային տիպը.

և նոյն իսկ այնպիսի գծեր, որ կապուած են կեանքի և զբաղմունքի եղանակի հետ։ Որոշ ունակութիւններ և արուեստներ, որ նախորդ սերնդի մէջ գործածական են եղել, հանդէս են գալիս յետագայ սերնդի մէջ որպէս ընդածին յատկութիւններ։ Դրան պերճախօս ապացոյց կարող են լինել այն ժողովուրդները, որ կաստաների են բաժանուած։ Նոյնը աւելի խոշոր չափով նկատելի է նաև կենդանիների մէջ։ Մարդը նման է կենդանիներին որդոց խնամքի և հոգատարութեան գործում։ կենդանական բընազդի շնորհիւ ձագերը վայելում են իրանց ծնողների պաշտպանութիւնն ու խնամքը և ընդհանրապէս ֆիզիքական կեանքը ապահովող բոլոր պայմանները։ բայց այդ չափով էլ վերջանում է նրանց մէջ եղած յարաբերութիւնը։ Մանկան անօգնականութեան շրջանը համեմատաբար աւելի երկար է տևում, քան կենդանիներինը և այդպիսով մնուցումն ու ուսուցումը ընթանում են զուգահեռաբար։ Ճնողների և որդոց մէջ հաստատում է ամուր կապ և այդպիսով մանկան երկարատե անօգնականութիւնը դառնում է առաջնակարգ բարիք մարդկութեան առաջադիմութեան համար։

Մարդն անդիտակցաբար տալիս է իր սերնդին այն, ինչ որ նա է, իսկ գիտակցաբար այն, ինչ որ նա ունի։ Ծնողների ցանկութիւնն է եղել միշտ թողնել իրանց ժառանգներին մի մնայուն աւանդ, որը կապում է իրար յաշջորդող սերունդներին։ Ամենից առաջ ժառանգաբար անցնում են նիւթական բարիքները, որոնց մէջ խտացած է մարդկային աշխատանքը։ այդ բարիքների փոխանցումն անօգուտ կը լինէր, եթէ նրանց հետ մէկ տեղ չաւանդուէր նաև նրանց գործածութեան եղանակը։ բացի նիւթական բարիքներից մտաւոր և հոգեկան բարիքներն ես ժառանգական են։ բայց մատաղ սերունդը ժառանգում է ոչ միայն մասնաւոր բարիքներ, այլ և հասարակական նախնիքների օրէնքները, սովորութիւնները և առաքինութիւն-

ները պահպանուում են և ինամւում, յաջորդ սերնդին յանձնելու համար։ Նիւթական բարիքների ժառանգումը կատարում է այլ կերպ, քան հասարակականինը։ այս դէպքում պահանջում է ընտելանուալ և հնագանդուել աւանդութեանը և հեղինակութեանը և դառնալ անդամ պետական, կրօնական, իրաւական և այլ խմբակցութիւնների։ Մանկավարժութեան պաշտօնն է մտաւոր, բարոյական և ընդհանրապէս բոլոր հասարակական բարիքները փոխադրել մի սերնդից միւսին։

§ 5. Մանկավարժութեան յարաբերութիւնը այլ գիտութիւնների և պատմութեան ենք

Գործնական մանկավարժութեանը որպէս հիմունք ծառայում են երկու հիմնական գիտութիւններ։ սոցիալական բարոյագիտութիւնը և սոցիալական հոգեբանութիւնը։ նըմանօրինակ տեսական մանկավարժութիւնը իր շէնքը կառուցանում է նոյն գիտութիւնների անհատական ձեի վրայ։ այսինքն, անհատական հոգեբանութեան և անհատական բարոյագիտութեան։ Մանկավարժութիւնն, ուրեմն, լըրթութեան վախճանակը սահմանելիս պէտք է դիմէ բարոյագիտութեանը և այնտեղից վերցնէ առաջնորդող սկզբունքներ։ մանկավարժութեան այն մասը, որ զբաղւում է կրթութեան վախճանական նպատակով, կոչւամ է վախճանարանորին (Theleologia)։ Կրթութեան վախճանական նպատակը պարզելուց յետոյ պէտք է որոշուեն նաև այն միջոցները, որոնք դիւրին և բանական եղանակով կարող են առաջնորդել դէպի ընտրած նպատակը։ այդ ծառայութիւնը կարող է մատուցանել այն գիտութիւնը, որի ուսումնասիրութեան նիւթն է կազմում մարդու հոգեկան կեանքը և նրա օրէնքները, այսինքն հոգեբանութիւնը։ այս գիտութիւնը մեզ ցոյց կը տայ, թէ ի՞նչպէս պէտք է ընտրել մտաւոր մնունդը, ի՞նչ ձեռվ պէտք է այն դասաւորել և ի՞նչ եղանակով մատակարարել սանին,

որ համապատասխանէ նրա հոգու հիմնական օրէնքներին և դառնայ նրա համար մնայուն սեփականութիւն։ Մանկավարժութեան այն մասը, որ զբաղւում է այդ միջոցները որոնելով կոչւում է մերոդաբանութիւն (Methodologia)։

Մանկավարժութեան և պատմութեան, յատկապէս քաղաքակրթութեան պատմութեան յարաբերութիւնը խիստ որոշ է. մի կողմից մանկավարժութեան պատմութիւնը քաղաքակրթութեան պատմութեան լրացուցիչ մասն է կազմում, միւս կողմից քաղաքակրթութեան տարերքն են, որ կազմում են մանկավարժութեան նիւթը. նոյն յարաբերութիւնը կայ և մանկավարժութեան ու տրամաբանութեան մէջ. եթէ ի նկատի առնելու լինենք, որ ուսուցման նպատակն է մի կողմից մտաւոր գործունէութիւն առաջ բերել, միւս կողմից մտաւոր բովանդակութիւն մատակարարել, տրամաբանութիւնը՝ որպէս գիտութեան տեխնիկա կամ մտածողութեան արուեստ, թէ միտքը մարգելու և թէ ծանօթութիւնները մշակելու գործում առաջնակարգ դեր կարող է կատարել. Բայց մանկավարժութիւնը չէ զբաղում միմիայն մտաւոր և բարոյական կրթութեամբ. մարմնական զարգացումն ևս հաւասարապէս նրա ուշադրութեան առարկան է. ուրեմն նա պէտք է որոնէ նաև բնախօսութեան և մարդաբանութեան աջակցութիւնը. իսկ որովհետեւ ոչ միայն անհատական, այլ և սոցիալական յարաբերութիւնները մանկավարժութեան նիւթն են, ուստի նա կարօտ է նաև ընկերվարական գիտութիւնների օժանդակութեամբ:

Բայց վերոյիշեալով գեռ չի սահմանափակւում մանկավարժութեան և այլ գիտութիւնների յարաբերաթիւնը. դիբակատիկան՝ դասաւանդութեան ուսմունքը, ծրաբում է իր շրջանակի մէջ նաև այն բոլոր գիտութիւններն ու արուեստները, որոնք կը թութեան նիւթն են՝ կրօնագիտութիւն, գիլիսուփայութիւն, լիզուաբանութիւն և մաթեմատիկա—պատմութիւն, աշխարհագրութիւն և բնական պատ-

մաթիւն—երաժշտութիւն, նկարչութիւն և մարմնամարդաթիւն։ Սրանց նկատմամբ մանկավարժութեան յարաբերութիւնը բոլորովին այլ է. դիդակտիկան հանդէս է գալիս իր նորմերով ու կանոններով և ցոյց է տալիս, թէ իր տեսակէտից ի՞նչպէս պէտք է աւանդաեն գիտութիւններն ու արուեստները. բայց մի առարկայ կանոնաւոր և արգիւնաւէտ կերպով աւանդելու համար դեռ բաւական չէ դիդակտիկայի ընդհանուր կանոնների հետ ծանօթ լինելը. պէտք է ուսումնասիրել նաև մասնագիտութիւնները և նրանց աւանդելու սեփական օրէնքները. իսկ այս հարկաւ մի մարդու ուժերից վեր է. ոչ ոք չէ կարող այսօր բոլոր գիտութիւնների մէջ մասնագէտ լինել, որպէս զի կարողանայ նրանց մէջ միութիւն և կապ հաստատել. բայց անհրաժեշտ է, որ սանի խմացութեան մէջ բոլոր ծանօթութիւնները ներգանակ միութիւն կազմէն, որպէս զի ամբողջական անձնաւորութիւն պատրաստուի և ոչ պատրահական և անկապ ծանօթութիւններով օժտուած մի անգոյն էակ. այս բանից խուսափելու համար, իւրաքանչիւր մասնագէտ պէտք է, բացի իր առարկան աւանդելու սեփական օրէնքներից, ծանօթ լինի նաև ընդհանուր դիդակտիկական կանոններին, որը, որպէս հնոց, հաւասարապէս լուսաւորում է բոլոր մասնագիտաութիւնները:

Աշխատանքի բաժանումը արդի գիտութեան ամենա-
էական և արդիւնաւոր սկզբունքներից մէկն է, բայց և
բաժանուած գիտութիւնների միացումը անհրաժեշտ է
ինչպէս փիլիսոփայական, այնպէս և նամանաւանդ ման-
կավարժական տեսակէտից։ Արդի դասաւանդութեան պա-
կասութիւնը այն չէ, որ նա մասնագիտական բնայթից
զուրկ է, այլ այն, որ առարկաները խիստ ցրուած են և
չեն կազմում մի ներդաշնակ միանութիւն իսկ այս կարող
է զլուխ գալ, ինչպէս ասաբիք, ՀԱՆՐԱՅԻՆ ՉՐԱՎԱՐՈՒՄ գի-
տակախկայի առաջնորդութեամբ ՊՈՂԵԿԱ ԲՈԼՈԴՈՒ



§ 6. Մանկավարժութեան բաժանումը

Թէպէտ կրթութեան գործը մի ամբողջութիւն է ներկայացնում, բայց նրա միջոցները բազմապիսի են: Սոցիալական մարմին նորոգումը կատարում է երեք տեսակ գիտակցական և գիտաւորեալ ներգործութեամբ: 1) խնամքի կամ հոգատարութիւն, որի նպատակն է մանկան մարմնական զարգացումը. մանուկը և իր առողջութիւնն է խնամքի նպատակը. մանկան խնամքը ծնողների և ընտանիքի սեպուհ գործն է: Ընդհանրապէս մարդու մարմնի խնամքով զբաղւում է առողջապահութիւնը (Hygiene), իսկ մասնաւորապէս մանկան մարմնի խնամքով զբաղւում է մանկավարժական առողջապահութիւնը, որի մի մասն է կազմում դպրոցական առողջապահութիւնը: 2) Ուսուցումն կամ դասաւանդութիւն, որի նպատակն է որոշ ուսումնական և արուեստների իւրացումը. դասաւանդութիւնն ևս խնամք է, բայց նա խնամում է միմիայն ներքին յատկութիւններն ու կարողութիւնները. որա նպատակն է մարզել զգայարանքները, զարթեցնել ընդունակութիւնները և զօրեղացնել մտաւոր կարողութիւնները. Բայց ուսուցման կամ դասաւանդութեան նպատակը միայն այդ չէ, այլ և աւանդել մտաւոր բարիքներ, որոնք ըստ ինքեան արժեք ունեն և միայն «մտքի զարգացման միջոց» չեն. այդպիսով ուսուցումը դադարում է միայն ընտանիքի սեպուհ պաշտօնը լինելուց. Ենթակայական մոմենտին աւելանում է նաև առարկայական մոմենտ. Մանուկը չէ միայն ուսուցման նպատակը: Այն ուսմունքը, որ զբաղւում է դասաւանդութեամբ կամ ուսուցմամբ, կոչում է դիդակտիկա: 3) Դասիարակութիւն. խնամքի և ուսուցման հետ դաստիարակութիւնը ունի այն ընդհանուր կողմը, որ նրա նպատակն ևս մանկան յատկութիւնների զարգացումն է, միայն թէ նա առաւելապէս մանկան բարոյական զարգացումն ի նկատի ունի. նա խնամում և կառա-

կարում է մանկան ցանկութիւններն ու ձգտումները. ուսուցման հետ նրան յատուկ է նաև բարիքների աւանդման գիտաւորութիւնը. նա չէ խնամում և պահպանում միմիայն անհատական բարիքները, այլ և սոցիալական: Դաստիարակութեան նպատակը սանեն է, բայց եւ ոչ միայն նա: Այն ուսմունքը, որ զբաղւում է դաստիարակութեամբ կոչում է առաջնորդութիւն (Hodegetika):

Խնամքը, ուսուցումը և դաստիարակութիւնը միասին կազմում են կրթութեան բովանդակութիւնը, ուստի և մանկավարժութիւնը՝ կրթութեան գիտութիւնը, բաժանում է, ինչպէս լիշեցինք երեք զմանուր մասերի: 1) Խնամքի ուսմունք (Dietetika). 2) Ուսուցման կամ դասաւանդութեան ուսմունք (Didactika). 3) Դասիարակութեան ուսմունք (Hodegetika):

Մեր գրուածքի առաջին հատորը բացառապէս նուիրուած կը լինի դասաւանդութեան ուսմունքին կամ գիտակտիկային, իսկ երկրորդը՝ խնամքի և դաստիարակութեան ուսմունքին:



Ա Ռ Ա Զ Ի Ն Մ Ա Ս

ՎԵԼՈՃԱՆԱԲԵԱՆՈՒԹՅԻՒՆ

(Theleologia)

ԿՐՈՆՔԵԱՆ բարձրագոյն իդեալը

Կրթութեան վերջնական նպատակի որոշումը մանկավարժութեան ամենակարևոր խնդիրն է. թէ կրթութիւնը ինչպիսի վախճանական նպատակ պիտի ունենայ, կախուած է վերջին ատեանում բարոյական-հասարակական աշխարհաճայեցողութիւնից: Այսպէս մենք տեսնում ենք, որ տարբեր ժամանակներում կրթութեան նպատակը խիստ տարբեր ձեռք է որոշուել. օր. «մարդը կրթուում է մարդու միջոցով մարդկութեան համար». կամ «կրթութեան նպատակն է մնայուն կերպարանք առաջ բերել սանի մէջ»: Այս սահմանումները անհրաժեշտորէն չեն բղխում կրթութեան գաղափարից. հետևապէս մեզ մնում է մի ելք, դիմել մանկավարժութեան պատմութեանը և այնտեղից բացարութիւն սպասել, բայց այս դէպքում ևս դժուար թէ որոշ, բոլորի կողմից հաւասարապէս ընդունուած եղարակացութեան հանդիպենք: Պէտք է արդեօք կրթութեան նպատակը լինի քաղաքակիրթ մարդկութեան մէջ բնական և ինքնուրոյն մարդ պատրաստել (Մուսսօ), բայց այդպիսով կրկնած կրթնէինք մանկավարժութեան անցած

սխալները. և մի՞թէ սանի համար ցանկալի կրթնէր ապրել և գործել ապագայում բոլորովին այլացեղ հասարակութեան մէջ: Պէտք է արդեօք կրթութեան նպատակը լինի ըստ Լոկլի և Բագրայի մարդկանց պատրաստել «աշխարհի և կեանքի» համար, այլապէս դարձնել օգտակար և պիտանի անդամ հասարակութեան. բայց այդպիսով գուցէ պատրաստենք ոչ ինքնուրոյն և ներքին արժանեաց տէր մարդ, որ կարողանար հարկ եղած դէպքում աներկբայ և վճռական կերպով դէմ դնել հասարակական կարծիքներին. կամ հետեւելով Պետալօցիին և հումանիստներին՝ կրթութեան նպատակը համարել «հոգու բոլոր ուժերի ներդաշնակ զարգացումը»: Նման պատավաններ տուել են մանկավարժութեան պատմութեան ընթացքում շատ մանկավարժներ և դաստիարակներ, բայց նրանք մեծ մասամբ ֆորմալ բնոյթ ունենալով չեն տանում մեզ մի քայլ առաջ. ինչ պէտք է հասկանալ, օրինակ, ինքնուրոյնութիւն ասելով. ինչ բովանդակութիւն և բնոյթ պիտի ունենայ այն, որովհետև ինքնուրոյն կարելի է լինել ինչպէս բարիք, այնպէս և չարիք գործելիս: Եթէ կրթութեան նպատակը իրական արժէք ունենալու է, ապա այն ամենից առաջ մատերիալ բնոյթ պիտի ունենայ, նա պէտք է որոշէ մտաւոր կերպաւորման և զարգացման բովանդակութիւնը:

Քիչ առաջ ծանօթացանք մի քանի ձևակերպումների հետ, որոնք բաւարարութիւն են տալիս մեր վերոյիշեալ պահանջին. այսինքն, կրթութեան բովանդակութեանը ոչ թէ ֆորմալ, այլ մատերիալ բնոյթ են վերագրում. այդպէս են օրինակ Լոկլի և Ֆիլանթրոպինիստների եւդիմոնական սկզբունքը, միուսոյի բնականութեան, Պետալօցիի և Հերդերի ճշմարիտ մարդկայնութեան սկզբունքները. դրանց վրայ կարող ենք աւելացնել նաև ուսումնականականը, որ պահանջում է մտքի և բանականութեան կատարելագործութիւն, դրական

տունէականը, որի նպատակն է վերականգնել մեղքի պատճառով աղարսուած մարդու պատկերը, և պիետիստականը, որ ձգտում է արդարութեան և Աստուածերանութեան։ Թերևս կարելի լինէր բոլոր վերոյիշեալ նպատակներից մի ամբողջութիւն կազմել և տարբեր նպատակների մէջ մի միութիւն ստեղծել. օր. հետևելով կրօնագիտութեանը շեշտել կրթութեան կրօնական բնոյթը, Լօկից Բաղրդոյից վերցնել օգտակարութեան, Պեստալօցցից և Հերդերից մարդկայնութեան սկզբունքները և այդպէս սահմանել կրթութեան համար մի ընդհանուր նպատակ, որի մէջ ամփոփուէին բոլոր մասնակի նպատակները. բայց տարբեր նպատակների այսօրինակ համախմբումը կրգառնայ պատահական մտքերի և ծանօթութիւնների մի անկանոն կոյտ և ոչ թէ գեղեցկայարմար մի սիստեմ, որի մասերը ներքին սերտ կապով միացած՝ ենթակարգուէին առաջնորդող սկզբունքին. ուստի մենք չենք կարող բաւականանալ կրթութեան բազմատեսակ նպատակներով, որոնք համապատասխանում են մարդկային գործունէութեան և կեանքի զանազան կողմերին, այլ պէտք է փորձենք ձեռք բերել մի բարձր և ամեն բան իր մէջ պարունակող ընդհանուր տեսակէտ։

Առանց կրթութեան նպատակի միութեան չէ կարող Ստեղծուել ուսման ծրագրի միութիւն և ամբողջութիւն. միայն այն ժամանակ հնարաւոր է ազատ լինել ամեն տեսակ պատահականութիւններից, երբ գիտակցւում է նպատակի միութիւնը։ Որչափ մի կողմից բնական պէտք է համարուէր, որ կրթութեան բարդ գործողութեանը համապատասխանէին նաև բազմութիւն նպատակներ, նոյնչափ անհրաժեշտ է, որ այդ նպատակները ենթակարգուէին կրթութեան մի բարձրագոյն նպատակի։ Կրթութեան նըպատակի միութիւնը երաշխաւորում է նաև մանկավարժական գործունէութեան միութիւնը և դաստիարակակին հնարաւորութիւն է տալիս կեղրոնացներու իր գոր-

ծունէութիւնը։ Բոլոր կրթական գործողութիւններն ևս պէտք է մի և նոյն հիմնական գաղափարը յենակէտ և կեղրոն ունենան. ոչ մի կրթական միջոց չէ կարող անջատ կերպով որ և է նշանակութիւն ունենալ. այլ նա իր արժէքը և կարելութիւնը կարող է ստանալ՝ նայած թէ ինչ յարաբերութեան մէջ կը մտնի կրթութեան բարձրագոյն նպատակի հետ։ Կրթութիւնը չէ կարող գլխաւոր և երկրորդական նպատակներ ունենալ, այլ միայն մի բարձրագոյն նպատակ, որն ըստ իր կարգի կարող է բաժանուել ստորագիր նպատակների, որոնք փոխադարձ գործակցւութեամբ կը նպաստեն բարձրագոյն նըպատակի յաջող իրագործմանը։

Կրթութեան բարձրագոյն նպատակը սահմանելիս, պէտք է, ինչպէս ներածութեան մէջ յիշեցինք, դիմել բարոյագիտութեանը. սակայն խնդիրն այս դէպքում ևս հեշտութեամբ չի լուծուի. որ բարոյագիտութեանը պէտք է դիմել կրթութեան նպատակը սահմանելիս։ Թէպէտ ոչ մի բարոյագիտական սիստեմ բոլորի կողմից հաւասարապէս ճանաչուած և ընդունուած չէ, այնուամենայնիւ կատած չէ կարող լինել, որ բարոյագիտական սիստեմների մի որոշ խումբ միայն ի նկատի կարող է առնուել. և յատկապէս այն խումբը, որ իր միջից մերժում է Եւդիմօնիստական ամեն մի տարր, որովհետև Եւդիմօնիզմը ինչ դիմակի տակ էլ հանդէս գալու լինի, իր մէջ վտանգ է պարունակում, ուստի իւրաքանչիւր բարոյագիտական սիստեմ կրթութեան համար անպէտք է, եթէ իր մէջ Եւդիմօնական որ և է տարր է պարունակում։ Դաստիարակի համար այսքանը պէտք է պարզ լինի, որ եթէ նա կրթութեանը իդէալական նպատակ է դնում, այնպիսի բարոյագիտութեան պէտք է դիմէ, որ աշխատանքի արժանիքը ոչ թէ այն առարկայի մէջ է որոնում, դէպի որը նա ուղղուած է, այլ ներքին տրամադրութեան՝ կամքի մէջ։ Ոչ թէ արտաքին գործը կամ առարկան կարող է բարի լինել, այլ

միայն կամքը. և այդ կամքը պէտք է դաստիարակուող անձնաւորութեան սեփականութիւնը դառնայ և բղիչ բարոյական օրէնքի բացարձակ գեղեցկութեան գաղափարից։ Հերբարտը իր բարոյագիտութեան մէջ որոշում է հինգ տեսակ բարոյագիտական գաղափարներ. ներքին ազատութեան, կատարելութեան, իրաւունքի, արդարութեան և բարեցակամութեան գաղափարները։ Այս բարոյագիտական գաղափարները միանալով անհատի գիտակցութեան մէջ, իրանց ամբողջութեամբ տալիս են անձնաւորութեան գաղափարը։ Անձնաւորութիւնը ներկայացնուում է մի միութիւն, որ բաղադրուած է օրինակելի կամքերից. վերջիններս միայն այն ժամանակ բացարձակ արժէք կարող են ունենալ, երբ նրանք մարդու մէջ հանդէս են գալիս ոչ թի անջատ-անջատ, այլ թափանցում են նրա հոգու խորքը, իշխում են առաջնորդող զգացմունքների և սրանցից բզիսող գործերի վրայ և այդպիսով ներկայացնուում մնայուն անձնաւորութեան գաղափարը. այդպիսի մնայուն անձնաւորութիւնը իւրաքանչիւր արտաքին գործունէութեան մէջ ցոյց կը տայ իր մի և նոյն բնոյթը և կեանքի բոլոր հանգամանքներում հանդէս կը դայ մի և նոյն հիմնական գծերով։ Ուրեմն միայն այն դէպքում բարոյական անձնաւորութեան մասին խօսք լինել կարող է, երբ անհատը բարոյական գաղափարների ամբողջութեան հետ մնայուն ներդաշնակութեան մէջ է գտնուում։

Եթէ ճշմարիտ է, որ բարոյական գնահատութեան խնկական առարկան կամքն է, ապա դրանից անհրաժեշտաբար հետեւում է, որ կրթութեան բարձրագոյն նպատակը պէտք է լինի կամքի բարոյական կերպաւորումը. և եթէ կրթութեան նպատակ համարենք սանի մէջ բարի կամք և մնայուն կերպարանք առաջ բերել, կրթութեան համար խիստ արժանաւոր և վսեմ նպատակ ընտրած կը լինենք, այսպէս ուրեմն կրթութեան նպատակը թերևս կարելի լիներ սահմանել հետեւեալ ձևով. դաստիարակը այնպէս պէտք է կրթէ իր սանին, որ սանի ապագայ անձնաւորութիւնը համապատասխանէ մարդկային անձնաւորութեան իդէալին։

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս

ՄԵԹ-ԱԴ-ԱԲ-ԱՆ-ԱԻ-Թ-Ի-Ւ

(Methodologia)

Ա. Գ. Լ. Ո Ւ Խ

Ուսուցման նպատակը

Կրթութեան բարձրագոյն նպատակին հասնելու միջոցներն են ուսուցումը կամ դասաւանդութիւնը, դաստիարակութիւնը և ինամքը. մի կողմ թողնելով դաստիարակութիւնը և ինամքը, մենք կը զբաղուենք բացառապէս դասաւանդութեան ուսմունքով։

Նախ պէտք է պարզենք ուսուցման կամ դասաւանդութեան նպատակը և ապա որոշենք այն միջոցները, որ անշեղ կերպով առաջնորդում են դէպի սահմանած նպատակը։ Ակներկ է, որ ուսուցման կամ դասաւանդութեան նպատակը անհրաժեշտօրէն պէտք է կապուած լինի կրթութեան բարձրագոյն գաղափարի հետ. և ուրեմն հարց կարող է ծագել, թէ ուսուցման ժամանակ առաւելութիւն պէտք է տալ մատակարարելի նիւթի բովանդակութեանը, թէ ձևին։ Եթէ դասաւանդութեան նպատակն է աւանդել որոշ նիւթ, առանց ուշադրութիւն դարձնելու այլ հանգամանքների վրայ, նա կընկնի դիդակտիկան մատերիալիզմի մէջ. վերջինիս տեսակէտից ուսուցման ինդրում

Էտականը նիւթն է, իսկ ձեզ—Երկրորդական։ Դիղակտիկական մատերիալիզմը նիւթը լաւատեսութեամբ արգէն հոգեկան ոյժ է համարում, ուստի և նրա համար մտաւոր կրթութեան չափը դառնում է նիւթի քանակը։ սակայն դիտողութիւնը ցոյց է տալիս, որ նիւթը միշտ և անպայման կերպով չի վերածուի նոգեկան ուժի, այլ յաճախ ընդհակառակը նիւթերի կուտակումը բթացնում է մարդու հոգեկան ընդունակութիւնները։ Դրա հակառակ, երբ ուշադրութիւնը առաւելապէս կեղրոնանում է այն հանգամանքի վրայ, թէ ի՞նչպէս պէտք է նիւթն աւանդուի, որ նա մտքի, զգացմունքի և կամքի ուժի վերածուի, հեռու չէ միւս ծայրայեղութեան մէջ ընկնելու վտանգը։ այս գէպում նիւթը նկատում է որպէս սոսկ միջոց հոգեկան ոյժ առաջ բերելու համար։ Դասաւանդութեան նպատակը չէ այլ ևս որոշ գիտելիքներ աւանդել, այլ առաջ բերել հոգեկան զօրութիւններ, էներգիաներ։ այս ուղղութիւնը մանկավարժութեան մէջ յայտնի է դիդակտիկական մուշտիզմ անունով։ Պեստալոցցին անգամ ընկաւ այս ծայրայեղութեան մէջ։

Երկու տեսակէտներն ևս առանձին առած ծայրայեղութիւններ են և ուրեմն խոտելի։ գիտութիւնը և արուեստները նախ հոգին կրթելու միջոց են, բայց դրա հետ մէկտեղ նրանք ըստ ինքեան բարձր արժէք ունեն։ Երաժշտութիւնն, օրինակ, կը գաղաքէր կրթութեան նիւթ լինելուց, եթէ նա միմիայն միջոց նկատուէր ականջի և ձեռների վարժութեան համար և մեր առաջ չը բանար երաժշտական գեղեցկի աշխարհը։ Հին լեզուները նոյնպէս կը գաղաքէին գասաւանդութեան առարկայ դառնալուց, եթէ նրանք միայն ֆորմալ կրթիչ նշանակութիւն ունենային։ և ընդհակառակը, բնական գիտութիւնները ոչ միայն որոշ նիւթ պէտք է մատակարարեն, այլ և զգայարանքները սրեն, գիտողութեան ընտելացնեն և միտքը հրահանգեն։ բայց այս հանգամանքը ի հարկէ չի խանգարի,

որ դասաւանդութեան միջոցին իւրաքանչիւր առարկայի ինքնուրոյն և բնորոշ յատկութիւններն առաւելապէս շեշտուեն։ Այսպէս ուրեմն ուսուցումը միայն այն ժամանակ իր նպատակին ծառայած կը լինի, երբ ի նկատի կառնուի, որ որոշ գիտելիքներ և կարողութիւններ պէտք է աւանդուեն, բայց այնպէս, որ նրանց կրթիչ և ձեւակերպող ոյժը համապատասխան արտայայտութիւն գտնէ։

Հերբարտը դասաւանդութեան անմիջական նպատակ համարում է բազմակողմանի հետարժութիւնը։ Ըստ Հերբարտի հոգեբանութեան պատկերացումն է հոգեկան կեանքի սկզբնական և հիմնական տարրը։ Պատկերացումների կապակցութիւնից և բարդումից առաջանում է մտածողութիւնը և զգացմունքները։ իսկ շահագրգիռ կամ հետաքրքրի պատկերացումներից ծագում է գործելու տրամադրութիւնը՝ կամքը։ մինչդեռ այն գիտելիքները կամ ծանօթութիւնները, որոնց հետ կապուած չէ հետաքրքրութիւնը, մեռած և անարժէք են, որովհետեւ կամքի վճիռների և գործողութիւնների համար անտարբեր են։ և որովհետեւ կրթութեան բարձրագոյն նպատակն է կամքը բարոյապէս կերպաւորել և կազմակերպել, բնական է, որ հետաքրքրութիւնը խիստ կարևոր գեր ունի դասաւանդութեան մէջ։ Ուսուցման նպատակը պէտք է լինի ուրեմն ոչ միայն գիտելիքներ մատակարարել կամ վերջիններիս մորմալ կրթիչ ոյժը հանդէս բերել, այլ եւ կենդանի հետարժութիւնները բարեցնել, բայց որովհետեւ կրթութեան նպատակն է ամբողջական անձնաւորութիւն պատրաստել և ոչ միակողմանի, անհրաժեշտ է, որ հետաքրքրութիւնը բազմակողմանի լինի։ Ծանօթութեան և մասնակցութեան կամ փորձառութեան և հաղորդակցութեան տեսակէտից կարելի է որոշել վեց տեսակի հետաքրքրութիւն՝ փորձառութեան, մտահայեցողական, էսրետիկական, համակրական, հաստակական ու կրօնական։

Օ. Գ. Ա Խ Խ

Ո Ւ Ս Մ Ա Ն Ն Ի Ի Թ Ը

§ 1. Պատմականութեան մեջ ժառանգութիւն և առաջարկած նիւթերը

Ուսուցման կամ դասաւանդութեան առարկայական նպատակն է, ինչպէս նախորդ գլխում յիշեցինք, սանին նաև մտաւոր բարիքներ աւանդել: Այժմ հարց կարող է ծագել, թէ ի՞նչպիսի մտաւոր բարիքներ պէտք է ուսման նիւթ դառնան: Հարկաւ անհնարին է, որ ամեն մի մտաւոր բարիք դասաւանդութեան առարկայ դառնայ. կեանքը և փորձառութիւնը պէտք է լրացնեն ուսուցման թողած պակասը: Միայն այն գիտելիքներն ուրեմն կարող են ուսման նիւթ լինել, որոնք ընդհանուր կրթութեան հիմնական և անհրաժեշտ տարերքն են կազմում: Այսպիսով սկզբից և եթ հասրաւորութիւն ենք ստանում այս տեսակէտից ընտրութիւն անել առարկաների մէջ, նայած նըրանց տուած նպաստին ընդհանուր կրթութեանը. բայց մենք չենք կարող միմիայն վերացական կերպով կրթութեան գաղափարը և բովանդակութիւնը վերլուծելով նիւթերի մէջ ընտրութիւն անել. ուստի պէտք է ընտրենք նաև պատմական տեսակէտը և այն ժամանակ կը տեսնենք, որ սկսած ամենահին ժամանակներից մի քանի գիտութիւններ և արուեստներ դասաւանդութեան մէջ միշտ առաջնակարգ տեղ են գրաւել, որովհետև միայն նրանց է վերագրուել ընդհանուր արժեքը. այսօր ևս միայն մի քանի գիտցիպիններ ընդհանուր կրթութեան անհրաժեշտ տարերք են համարւում:

Հին հնդիկների մէջ վեդաների ուսմունքն էր կազմում ուսուցման կեդրոնը. կրօնագիտութիւնն է հանդիսանում իշխող տարրը. նրա համար են գրագիտութիւնը, քերականութիւնը, չափագիտութիւնը, աստղաբաշխութիւնը, մաթեմատիկան և օրէնսգիտութիւնը:

Հին Եգիպտոսում քրմական դասն իմաստութիւնների առէրն ու ուսուցանողն էր. այստեղ ևս սուրբ գրքերն (թօթհերմէս) են կազմում ուսման կեդրոնը. տիրապետող գիտութիւնը աստղաբանութիւնն է, որին ենթարկում են աստղաբաշխութիւնը, երկրաչափութիւնը և օրէնսգիտութիւնը. երաժշտութիւնը պաշտամունքի լրացուցիչ մասն էր կազմում. աւանդում էր նաև բժշկական գիտութիւն, բայց այն՝ դասաւանդութեան կանոնին չէր պատկանում. օժանդակ գիտութիւններից այստեղ առաւելապէս շեշտում էր մաթեմատիկան, ինչպէս հնդիկների մէջ լեզուագիտութիւնը:

Հին Յունաստանում ուսուցման կամ դասաւանդութեան արուեստն աւելի ազատ բնաւորութիւն ունէր: Մուսայական ուսումը իր մէջ պարունակում էր կարդալ, գրել բնագիրներ անգիր անել (Հոմերոս), թուաբանութիւն, նկարչութիւն, երգ և երաժշտութիւն, պար և մարմնամարզութիւն: Սոփեստների և փիլիսոփաների հանդէս գալուց յետոյ գպրոց է մանում նաև փիլիսոփայութիւնը, որ գիտութիւնների վախճանը և պսակն էր համարւում: Աղէքսանդրեան շրջանում Encyklia paideumata-ի մէջ ամփոփում էր քերականութիւն, ճարտասանութիւն և տրամաբանութիւն (grammatika, retorika, dialectika) — թուաբանութիւն, երաժշտութիւն, երկրաչափութիւն և աստղաբաշխութիւն (arithmetika, musica, geometria, astronomia), որոնցից առաջին երեքը լեզուական գիտութիւններ են, իսկ վերջին չորսը՝ թուաբանական:

Հոռվմայեցինների մէջ ևս այն գիտութիւններն են գործածական, ինչ որ յունաց մէջ. միայն թէ այստեղ աւելանում է մի օտար լեզուի՝ յունարէնի ուսուցումը. այդպիսով առաջին անգամ լեզուի ուսուցումը կատարւում է գիտակցական ձեռվ: Քերականութիւնը դառնում է գիտութիւնների մայրը. սկսում են լատիներէնն ևս քերականօրէն աւանդել և աղէքսանդրեանների քերականական

տերմինները լատիներէնի վերածել: Ուսման նիւթ դառնում են դասական հեղինակները, յատկապէս Վիրգիլը, ազգային պատմութիւնը և իրաւագիտութիւնը: Մաթեմատիկական գիտութիւններից միայն աստղաբաշխութիւնն է առանձին խնամքի արժանանում, իսկ փիլիսոփայութիւնը բոլորպին անուշադիր թողնուում: չը նայած դրան հոռվմայեցիները աւանդում են յաջորդ սերունդներին փիլիսոփայութեան համար լատիներէն տերմինովզիա:

Միջին դարերում քրիստոնեայ ազգերը մեծ մասամբ գիտութեան համար գործ են ածում լատիներէն լեզուն և աւանդում են հոռվմայեցիների միջոցով յունարէնից փոխ առած ֆորմալ կրթութեան բովանդակութիւնը՝ եօթն ազատ արուեստները, որոնք համարւում էին աստուածաբանական գիտութեան նախադուորք: Աստուածաբանութիւնը այստեղ ևս հանդէս է գալիս որպէս գիտութիւնների թագուհի. բոլոր գիտութիւնները աստուածաբանութեան նկատմամբ աղախնի պաշտօն ունէին (ancilla theologiae): Եօթն ազատ արուեստների մէջ գերակշռող գերունէին լեզուական գիտութիւնները՝ trivium-ը (եռեակ) և այն սկզբում յատկապէս քերականութիւնը, մինչդեռ սխոլաստիկայի հանդէս գալուց յետոյ իշխանութիւնն անցնում է գիտեկտիկային: Մաթեմատիկական գիտութիւնները՝ quadrivium-ը (քառեակ) դադարում են խնամքի առարկայ դառնալուց, բայց համեմատաբար աւելի շատ ուշադրութեան են արժանանում երաժշտութիւնը և աստղաբաշխութիւնը: Գիտական կրթութեան հետ միասին ասպետական դասակարգի մէջ զարգանում է աշխարհիկ կըրթութիւնը, որի բովանդակութիւնն էին կազմում քրիստոնէութեան հիմնական ուսմունքները և ասպետական վարժութիւնները, ինչպէս և մուսայական կրթութեան մի քանի տարերք՝ բանաստեղծութիւնը և նոր լեզուները:

Վերածնութեան շրջանում իշխանութիւնն անցնում է լեզուաբանութեանը. դասական լատիներէնը դառնում

է հումանիստական կրթութեան միակ ցանկալի առարկան. հումանիստաները դատապարտում են եօթն ազատ արուեստները և համարում բարբարոսական. այս ֆորմալ գիտցիալիններից միայն ճարտասանութեանն է կարեորութիւն տրուում, այն ինչ մաթեմատիկական գիտութիւնները բոլորովին անհետանում են դպրոցներից: Դպրոցների ուսման ծրագրում երեան են գալիս օտար լեզուներից յունարէնը և եփրայեցերէնը, թէե գործնականի մէջ բաւականանում էին միայն լատիներէնով: 17-րդ դարում միայն առաջին անգամ պահանջուում է լեզուական ուսուցման հետ նաև իրական ուսուցումներ: Գիտական կրթութիւնից զատ վերածնութեան շրջանում խնամւում է նաև աշխարհիկ կրթութիւնը, որի նիւթն էր ֆրանսերէն լեզուն, պատմութիւնը և աշխարհագրութիւնը:

Լուսաւորութեան դարում առաջին անգամ կրթութեան բովանդակութիւնը գուրկէ մի կեդրոնից, լուսաւորութիւնը պահանջում էր մտքի և դատողութեան զօրեղացումն և մարզումն: Շօշափելի և օգտակար բանն է միայն անհրաժեշտ համարւում: պահանջուում են իրեր, փոխանակ խօսքերի: Լատիներէնի և ֆրանսերէնի ուսուցումը շարունակուում է, յունարէնը լատիներէնին հաւասար տեղ զրաւում: Մայրենի լեզուի և զրականութեան ուսուցումը դպրոցական կրթութեան անհրաժեշտ տարրն է զանում: աւանդում են նաև պատմութիւն և աշխարհագրութիւն, մաթեմատիկա ու բնական պատմութիւն և ընդհանրապէս ամեն տեսակ լուսաւորող, օգտակար և զբաղեցնող առարկաներ:

Մեր ժամանակը բոլոր նախորդ շրջանների ժառանգն է. բոլոր գիտութիւնների մէջ տիրում է բազմապիսութիւն և բազմակողմանութիւն. գիտութիւնները խիստ աճել են. լեզուաբանութիւնը բաժանուել է անթիւ և անհամարմանացիւերի. պատմական գիտութիւնները խիստ ընդունակուել են և դարուս առանձին խնամքի առարկան

դարձել: Բնական գիտութիւնները անչափ ընդայնուել են և մեծ յառաջադիմութիւն ցոյց տուել: Այս բոլորը ազգել և ազգում են զօրեղ կերպով արդի ուսուցման գործի վրայ. ընթերցանութեան ժամանակ մենք այժմ աւելի կարորութիւն ենք տալիս բովանդակութեանը, քան թէ ձեւն: Հին լեզուների հետ մէկ տեղ զպրոցներում աւանդում են նաև նոր լեզուներ. մայրենի լեզուին և գրականութեանը առանձին արժէք է վերագրուում. պատմութիւնը և աշխարհագրութիւնը իւրաքանչիւր մարդու համար, որ յաւակնութիւն ունի զարգացած կոչուելու, անհրաժեշտ գիտելիքներ են համարուում. մաթեմատիկան և բնական գիտութիւնները ընդհանուր կրթութեան անհրաժեշտ մասն են դարձել: Աստուածաբանութեան և փիլիսոփայութեան նշանակութիւնը և գիրքը լուսաւորութեան դարու համեմատ իմաստ բարձրացել է: Պահանջւում են դրական գիտելիքներ և արւում են նորանոր պահանջներ այս կամ այն գիտութիւնը գլորոց ներմուծելու համար:

§ 2. Աւաման Եփրի բաժանումը

Ուսման բոլոր առարկաները համազօր են և ոչ մէկը միւսների նկատմամբ գերիշող գիրք չունի, բայց եթէ մի ակնարկ ձգելու լինենք կրթութեան պատմութեան վրայ, կը տեսնենք, որ մի քանի առարկաներ գործնական կարեւութեան պատճառով կրթութեան համար առաջնակարգ և գլխաւոր միջոցներ են համարուել. և եթէ կը թութեան այդ գլխաւոր առարկաներին երը և իցէ երկրորդական տեղ է տրուել, այնուամենայնիւ նրանք ժամանակի ընթացքում ձեռք են բերել իրենց առաջնակարգութեան իրաւունքը. այդ առարկաները կազմում են կրթութեան հիմնական սարերին, այն ինչ մնացածները համարում են լրացրոցիչ սարերին: Սրանց կցւում են նաև մի քանի արուեստներ, որ ցանկալի են կրթութեան կա-

տարելութեան համար. վերջիններս ըստ տեղի և ժամանակի խիստ տարբեր են եղել:

1) Կրրութեան հիմնական սարերին են լեզուաբանութիւն և մաթեմատիկա: Լեզուի միջոցով զարգանում է մտածողութիւնը, այն ինչ զիրը և գրի գործածութիւնը սերտ կերպով կապուած են քաղաքակրթութեան հետ: Ուր որ մատաղ սերնդի զարգացման համար միջոցներ են ձեռք առնուել, կեղոննը միշտ կազմել է զրագիտութիւնը: Դասաւանդութեան սկիզբն է կազմում կարդալը և գրելը. այս երկու կարողութիւններն ևս սերտ կերպով կապուած են իրար հետ, գրել կարողանալը, մի բան պարզ, քերականօրէն և ճշգրիտ գրելը, վերջապէս իր մտքերին գրով կատարեալ արտայայտութիւն տալը մինչև այսօր իսկ որոշում են կրթութեան աստիճանները. գիտելիք և կարողութիւն այստեղ միացած են իրար հետ. այս պատճառով լեզուագիտութիւնը սկսած ամենաստորին դպրոցներից մինչեւ ամենաբարձրը դասաւանդութեան սիւթ է կազմում:

Մաթեմատիկայի մէջ ևս գիտելիք և կարողութիւն կապուած են իրար հետ. մաթեմատիկան լինելով գործնական գիտութիւն, այնուամենայնիւ իր տարրական մասում իսկ ունի զուտ գիտական բնոյթ և առաջնորդում է գէպի տեսական գիտութիւնները:

Ուրեմն կարդալը, գրելը և հաշուելը տարրական դասաւանդութեան հիմքն են կազմում:

2) Կրրութեան լրացրոցիչ սարերի նպատակը չէ, ինչպէս հիմնական տարրերինը, որոշ կարողութիւն և վարժութիւն տալ, այլ ձեռք բերել մի քանի օժանդակ գիտելիքներ և լրացրոցիչ ծանօթութիւններ. այս կարգին են պատկանում՝ կրօնագիտութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, բնական պատմութիւն, քնագիտութիւն և քիմիա:

3) Ինչ վերաբերում է արուեստներին՝ ին ժամա-

նակներից աւանդուել են երգեցողութիւն և երաժշտութիւն, իսկ աւելի ուշ նկարչութեան և քանդակագործութեան արուեստները. վերջերս դպրոց են մտել նաև գործնական տեսակէտից զանազան արհեստներ և ձեռագործութիւններ:

§ 3. Լեզուագիտութեան կրական արժեքը

Եթէ մենք իւրաքանչիւր առարկայի արժէք նրա կը ըթութեան գործին տուած նպաստի համաձայն գնահատելու լինենք, լեզուագիտութեանը պէտք է առաջին տեղը տայինք. լեզուն ժողովրդի հոգու հայելին է. (ժողովրդական հոգեբանութիւնը հիմնում է առաւելապէս լեզուի ուսումնասիրութեան վրայ). ուրեմն և դրանով բնորոշում է նրա անհրաժեշտութիւնը կրթութեան համար. լեզուի ուսման հետ յաճախ կապուած են լինում ամեն տեսակ քաղաքակրթական պատմական հասկացողութիւններ, որ այլ ճանապարհով գժուար կը լինէր ձեռք բերել, լեզուով կատարում է մտաւոր բարիքների անցումը մի սերնդից միւսին. նոյն իսկ վայրենին իր ծանօթութիւնները լեզուով է աւանդում իր որդիներին. բայց դպրոցի սեպուհ գործն է մատչելի դարձնել մատաղ սերնդին լեզուի դրաւոր յիշատակարանները. դրա համար՝

ա) Աշակերտը նախ պէտք է ձեռք բերէ դրագիտութիւն, որ լեզուագիտութեան նախադուռն է:

բ) Նա պէտք է օրինակելի նկարագրութիւնների միջոցով ծանօթանայ լեզուի գործածութեան եղանակների հետ. իսկ այս կատարում է լեզուի ուսմունքի՝ քերականութեան միջոցով:

գ) Աշակերտի լեզուն պէտք է կատարելագործուի գրի և խօսքի ձշգրիտ և արուեստաւոր գործածութեամբ. այս էլ ոճաբանութեան, ճարտասանութեան և բանահիւսութեան պաշտօնն է:

դ) Վերջապէս անհրաժեշտ է ծանօթանալ այն գրա-

կան երկերի հետ, որ ամենքի կողմից ճանաչուած են որպէս ստեղծագործութեան օրինակելի արտադրութիւններ. վերջինս կատարում է ընթերցանութեան և մեկնաբանութեան միջոցով:

ա) Ուսուցման սկիզբը կազմում է գրելը և կարդալը. երկու կարողութիւններն ես կապուած են իրար հետ և սովորեցնում են նախ հնչիւնների նշանները և ապա լեզուի բաղադրիչ մասերը՝ խօսքերը, վանկերը և հնչիւնները. Բայց գրելը նաև վարժութիւն է ձեռքի համար, իսկ գեղագրութիւնը նպաստում է նաև գեղագիտական ճաշակի զարգացմանը. այս մտաւոր և էսթէտիկական մոմենտներին աւելանում է նաև մի բարոյական վաստակ, որովհետեւ ուղղագրութիւնը սովորեցնում է ուղղամտութիւն և մի միջոց է անփութութեան և անհոգութեան առաջն առնելու:

բ) Լեզուի ուսմունքը՝ քերականութիւնը շարունակում և խորացնում է գրագիտութեան սկսածը. նա սովորեցնում է ճանաչել և հասկանալ լեզուի տարերքն ու արտայայտութեան միջոցները: Քերականական հասկացողութեան հետ ամենուրեք կապուած է քերականակոն վարժութիւնը. ինչպէս որ քերականութիւնը գրական երկեր հասկանալու բանալին է, այնպէս էլ նա լեզուի ճշգրիտ գործածութեան ուղեցոյցն է: Ամենուրեք վերլուծութեանը լրացնում է համագրութիւնը. մայրենի լեզուի քերականական ուսումնասիրութեան միջոցին գերակշռում է առաջինը, օտար լեզուների նկատմամբ՝ երկրորդը, որովհետեւ մայրենի լեզուի մէջ աշակերտին յայտնի է ամբողջութիւնը և վերլուծութեամբ պէտք է գանել քերականական տարրերը, այն ինչ որովհետեւ օտար լեզուի մէջ միմիայն մտերն են յայտնի, հարկաւոր է համագրական ճանապարհով ստեղծել ամբողջութիւնը: Քերականական քննութիւնը մայրենի լեզուին ընծայում է վստահութիւն և գիտակցական վերաբերմունք. որ և է օտար լեզու քերակա-

նօրէն սովորելը անչափ հեշտացնում է մայրենի լեզուի կազմութիւնն հասկանալու. «ով մի որ և է օտար լեզու չի հասկանում, չի հասկանայ և իր սեփականը» (Գէօթէ). այսպիսով քերականութիւնը գերադրապէս նպաստում է լեզուական գիտակցութեան կենդանանալուն և ամբանալուն:

Քերականութեան ֆորմալ կրթիչ կողմը յաճախ անուշադիր է արւում. բայց այդ զարգացման նպաստող անհրաժեշտ պայմաններից մէկն է: Քերականական կանոնները պէտք է քաղել օրինակելի գրական արտադրութիւններից և նրանց միջոցով պարզաբանել. մասերի պարզաբանութեամբ, խօսքերի ձևերից, նախադասութիւնների կազմութիւնից պէտք է հանել ամբողջ գրուածքի միտքը, ինչպէս և հեղինակեց, նրա երկերից, գործածած նախադասութեան ձևերից պարզաբանել խօսքերի իմաստը և կապակցութիւնը: Այդպիսով ստանում ենք մի անդադար ել և էջ մասնաւորից դէպի ընդհանուրը և ընդհակառակը, բարդումներ, համեմատութիւն, ընտրութիւն, մի խօսքով զանազան տրամաբանական գործողութիւններ, որով մնաւմ և զօրեղանում է մտածողութիւնը և հրահանգում հասկացողութիւնը:

Քերականութիւնն ևս ունի իր բարոյական օգուտը. նրա միջոցով մարդ ընտելանում է խնամքով գործ կատարելու, որովհետև նա սրում է մեր ուշադրութիւնը:

գ) Եթէ քերականութիւնը օգնում է հասկացողութեանը, սովորեցնում է լեզուն ուղիղ գործ ածել, ճարտասանութեան, ոճաբանութեան և բանահիւսութեան պաշտօնն է խօսքին գեղեցկութիւն, ոյժ և գրաւշութիւն տալով որ այս բոլոր միջոցները գործ է ածում, նա տիրում է լեզուին. նա իշխում է զրանով նաև մարդկանց սրտերին: Հարկաւ ոչ մի կանոն չէ կարող մէկին բանաստեղծ կամ ճարտասան դարձնել, եթէ բնական ձիրքը պակասում է. սակայն արուեստի ուսմամբ և վարժութեամբ

բնական ընդունակութիւնները կրկնապատկուել կարող են. բայց լեզուի ձևական նշանակութիւնը չը պէտք է չափազանցուի և լեզուն ընկնի դատարկ ֆորմալիզմի կամ ֆրազամոլութեան մէջ, որ սովորաբար տեղի է ունենում, երբ ձևին աւելի է կարևորութիւն տրւում, քան բովանդակութեանը:

դ) Լեզուագիտութիւնը չի ստհմանափակւում միմիայն լեզուի ֆորմալ կրթիչ կողմովը. նրա կեղրոնը և հիմքը կազմում են օրինակելի դասական երկերը և նրանց իմաստը, վէպը և գրաման, քնարերգութիւնը և պատմութիւնը մանկան երևակայութիւնը և կենդանի օրինակ զառնում նրա համար. նրանց մէջ կատարուող գործողութիւններն ու հերոսների ճակատագիրները, անձնաւորութիւններն ու իրանց ընոյթները շարժում են նրա հետաքրքրութիւնը և մասնակցութեան զգացումը: Բացի այդ բանաստեղծութիւնը սրում է նրանց յիշողութիւնը, ուղղում է երիտասարդական միտքն ու հոգին դէպի վսեմն ու գեղեցիկը. մայրենի լեզուով գրուած դասական երկերը շարժում և մնունդ են տալիս նաև ազգասիրութեան զգացմունքին. իսկ հին հեղինակները ծանօթացնում են մատաղ սերնդին անցեալի հետ: Լեզուագիտութիւնը վերաբատադրում է մի ժողովրդի անցեալ կեանքը իր ամբողջութեամբ:

Գրական երկերի ուսումնասիրութեան համար գրւում են զանազան տեսակ մեկնաբանական զրքեր, կենսագրականներ, գրականութեան պատմութիւն, բանահիւսութիւն և էսթետիկայի տեսութիւններ և այլն, սրանք բոլորն իրանց արժեքն ունեն, բայց զրական երկերի մասին խօսելիս չը պէտք է մոռանալ անմիջապէս ծանօթանալ նրանց հետ:

§ 4. Մայրենի լեզու

Եթէ դպրոցում աւանդուող իւրաքանչիւր լեզու համաձայն իր կրթական արժեքի զնահատելու լինենք, մայ-

բԵնի լեզուին պէտք է առաջին տեղը տանք. նոր իրերի հետ նա սովորում է փորձառութեան և հաղորդակցութեան միջոցով միշտ նոր խօսքեր և դարձուածքներ, իսկ սրանց միջոցով ձեռք է բերում նոր պատկերացումներ և գաղափարներ. Մանկական երգերն ու առակները, հէքիաթներն ու պատմուածքները բանաստեղծութեան առաջին ճառագայթներն են, որ տաքացնում են մանկան սիրտը, իսկ այդ կատարում է մայրենի լեզուի միջոցով: Ուշ հասակում ևս բանաստեղծութեան խոր հասկացում, ուր զգացումը և երեակայութիւնը հաւասարապէս գործակից են, ննարաւոր է միայն մայրենի լեզուի միջոցով: Հայրենի երկրի ժողովրդական բանաստեղծութիւնը մի նախադուռ է օտար ազգերի բանաստեղծութեան և առհասարակ գրական երկերի հասկացողութեան համար:

Մայրենի լեզուի առանձնայատուկ օրէնքները պէտք է ուսումնասիրութեան և վարժութեան նիւթ դառնան։ Շարադրութիւններ մեծ ծաւալով և չափով հնարաւոր է գրել միայն մայրենի լեզուով, քանի որ հին լեզունները դադարել են գիտութեան օրգան լինելուց։ Մայրենի լեզուի քերականութեան ուսումնասիրութիւնը բաւական մեծ դժուարութիւն է յարուցանում, որովհետեւ շատ բան աշակերտին ծանօթ է թւում և չի շարժում նրա հետաքրքրութիւնը. ուստի և ցանկալի և օգտակար է, որ քերականական գիտակցութիւն և վարժութիւն ձեռք բերուի մի օտար լեզուի միջոցով. մինչդեռ խօսքերի և զարձուածքների կազմութիւնը, պատկերաւոր արտայայտութիւնները, խօսքերի իմաստի փոփոխուելը և ընդհանրապէս լեզուի պատմական հասկացողութիւնը հնարաւոր է կատարեալ կերպով ձեռք բերել միմիայն մայրենի լեզուի միջոցով։ Այնուամենայնիւ արդի քաղաքակրթութեան հնաբնայատկութիւնը հասկանալու համար անհրաժեշտ է մայրենի լեզուի ուսման հետ նաև օտար լեզուների ուսումնը։

§ 5. Հիմնելու օսար լեզուներ

Հին լեզուներից, որոնք դպրոցում դասաւանդութեան նիւթ կարող են լինել առաջին տեղն են գրաւում լատիներէնը և յունարէնը այն պատմական հիմունքներով, որ նրանք ոչ միայն հին լեզուներ են, այլ և հին դպրոցական լեզուներ։ Լեզուագիտութիւնը առհասարակ մշակուել և զարգացել է այդ դասական լեզուների միջոցով։

Գպրոցական այս լեզուները որոշ առաւելութիւն ունեն, որից զուրկ են միւս լեզուները. հասկանալու արուեստը ամենից լաւ կերպով կարելի է ձեռք բերել դասական լեզուների միջոցով. սրանց արտայայտութեան եղանակը պարզ է և հաւատարիմ, սկզբնական և անպաճոյն. խօսքերը դեռ չեն կորցրել իրանց հիմնական զգայական նշանակութիւնը: Ոչ մի գեպքում լեզուի կանոնները, գործածութեան եղանակը այնպէս լաւ չի կարելի ըմբռնել ինչպէս լատիներէնի միջոցով, որի ձեռքը խիստ հարուստ են, բայց ոչ այնչափ, որ դժուարացնեն լեզուի հասկացողութիւնը. այդ առաւելութեանը միանում է և այն, որ նախադասութիւնների կազմութիւնը և կապակցութիւնը սահմանուած են տրամաբանական ձշուութեամբ: Լատիներէնը մտածողութեան համար մի վարժարան է և տրամաբանական հրահանգութեան համար անօրինակելի: Ֆորմալ կրթիչ ուժով լատիներէնը գերազանցում է յունարէնին, որն ըստ իր կարգի գերազանցում է առաջինին օրինակելի գրական ստեղծագործութիւններով: Յունարէն լեզուի արտայայտութեան նրբութիւններն ու գունաւորումը, մըտքերի կապակցութիւնն ու յաջորդականութիւննը լրացնում են լատիներէնի թողած պակասը:

Բայց մեզանից հեռու է յոյն և լատին գրականութիւնը միայն այս ֆորմալ տեսակէտից գնահատելու դիտաւորութիւնը։ Այդ լեզուների միջոցով մենք սովորում ենք մի կենդանի ամբողջութիւն։ Նրանցով իդէալական յարաբերութեան մէջ ենք մանում Հեղասի և Հոռվմի հետ։

իսկ սրանք արժանի են մատաղ սերնդի հետաքրքրութիւնը շարժելու և ներքին մասնակցութիւնը ձեռք բերելու. Նըր բանցով երիտասարդութեան առաջ բացւում է մարդկութեան անցեալը իր պարզ յարաբերութիւններով, ուր նա տեսնում է հերոսներ և հերոսական գործեր: Յոյն հեղինակները դրա հետ ունեն նաև այն առաւելութիւնը, որ լի են կեանքի և իրական ծանօթութիւններով և միւս կողմից իրանց բովանդակութեամբ թարմ են և նախւ, և ուրեմն մատչելի և ընտանի երիտասարդութեան համար:

Արդի նոր և օտար լեզուներից գործնական տեսակետից անհրաժեշտ է իմանալ նախ հարևան ազգի լեզուն. բայց այդ լեզուն ուսման ծրագրում տեղ կարող է ըսնել միայն այն ժամանակ, եթե տեղի ունի նաև մտաւոր և հոգեկան յարաբերութիւն դրացի ազգի հետ, եթե այդ լեզուի միջոցով կարելի է ծանօթանալ առաջնակարգ նշանակութիւն ունեցող գրականութեան հետ. Նոր գրականութեան գլուխ գործոցների հետ աւելի հեշտ է թարգմանութիւնների միջոցով ծանօթանալ, քան դասականների. բայց չը պէտք է մոռանալ, որ յամենայն դէպս քնառքի ընթերցումը գլուխում խիստ օգտակար է. աշակերտն ստիպուած է լինում աւելի գանդաղ և հիմնաւոր աշխատել, իսկ այդ բաւական խոշոր վաստակ է: Այնտեղ, ուր միայն նոր լեզուներ են աւանդուում, լեզուի փորմալ կըրթիչ կորմը, որ շեշտեցինք հին լեզուների նկատմամբ, կարելի և ցանկալի է ձեռք բերել նոր լեզուների միջոցով:

§ 6. Մաթեմատիկա

Մաթեմատիկայի արժէքը ոչ միայն նրա նիւթի մէջ է, այլ և գործնական կարեռութեան. նա սովորեցնում է հաշուել, չափել, կշռել, գնահատել և այլն. սրանք այնպիսի գիտելիքներ են, որ անհրաժեշտ են իւրաքանչիւր մարդու համար գործնական կեանքում: Մաթեմատիկան

ամենամեծ ձեռնարկութիւնների հիմքն է. նա գործիք է ինչպէս դրամատէրերի, այնպէս և ճարտարապետների ու արուեստագէտների ձեռքում, իսկ որպէս զուտ գիտութիւն նա անհրաժեշտ է բոլոր բնական գիտութիւններին՝ բնագիտութեանը, քիմիային, աստղաբաշխութեանը, աշխարհագրութեանը և այլն: Մաթեմատիկայի այս անսահման նիւթական արժէքին աւելանում է նաև նրա փորմալ օգուտը մաքրի և հոգու կրթութեան համար: Մաթեմատիկայի մասերի մէջ եղած անհրաժեշտ կապը, որով մի մասը միշտ միւսին ենթագրում կամ հաստատում է, սրում և զօրեղացնում է մտածողութիւնը: Մաթեմատիկական խընդիրներ լուծելիս միտքը հրահանգւում է քննելով, փորձելով և բարգումներ անելով. երեակայութիւնը այստեղ նոյնչափ մասն ունի, որչափ մտածողութիւնը: Մաթեմատիկայի տարրական մասերի մէջ իսկ երեւում է նրա գիտական առանձնայատկութիւնը. նա ի բացէ նայում թանձրացեալ բաներից և զբաղւում է մեծութիւններով ըստ ինքեան. բայց չը նայած այդ հանգամանքին նա հայեցողական է դառնում պատկերների և կոնսրուկցիաների միջոցով. նա մի միջին աստիճան է կազմում մի կողմից այնպիսի գիտութիւնների, որոնց նիւթն է տեսանելի և զգացի աշխարհը և միւս կողմից բանական գիտութիւնների. Մաթեմատիկան այդպիսով նախալարաստում և առաջնորդում է դէպի գիտական աշխատանք և յատկապէս փիլիսոփայութեան ուսումնասիրութեան համար նախաշաւիդ է հանդիսանում: Բայց մաթեմատիկայի այս անթիւ օգուտներին աւելանում է նաև նրա բարոյական նպաստը քնառութեան համար. կիսատ կամ թերի գործը այստեղ խիստ պատժւում է. այդպիսով նա կարող է յետ պահել թեթեւամտութիւնից, մակերեսութականութիւնից և առաջնորդել դէպի ինքնաճանաչողութիւն և համեստութիւն և օգնել քնառորդութեան կազմակերպուելուն:

§ 7. Կարուքեան լրացուցիչ տարերք

Ուսման նիւթի այս կարգին պատկանում է ամենից առաջ կրօնագիտութիւնը։ Հին պատմութիւնը և դասական լեզուները ծանօթացնում են մեզ դասական հնութեան հետ։ մայրենի լեզուի և պատմութեան միջոցով ծանօթանում ենք մեր ազգի հետ։ բայց ազգայնութեան և դասական հնութեան մէջ գանւում է քրիստոնէութիւնը՝ նոյնչափ կարեոր և նշանաւոր։ Եթէ արդի քաղաքակրթութեան հասկացողութեան համար անհրաժեշտ է դասական հնութեան ծանօթութիւնը, քրիստոնէութիւնը շատ աւելի կարեոր է, որովհետեւ աւելի խոր կերպով ազգել և ազդում է արդի քաղաքակրթութեան և սերունդների վրայ։ Բացի այդ, եթէ ցանկալի է որ մատաղ սերունդը մնուի և զարգանայ մաքուր կրօնական և բարոյական համոզումներով, որ դարեր շարունակ կրթել և ոգևորել է մի ժողովրդի, ապա անհրաժեշտ է կրօնի ուսուցումը, որի կեդրոնը քրիստոնէական դպրոցներում կազմում է սուրբ գիրքը։ Սրբազն պատմութիւնը սովորեցնում է, թէ ինչպէս է Աստուած յայտնուել ճշմարիտ մարդկանց և վսեմ պատկերներով ու դէմքերով պարզում է մեր առաջը բարին ու չարը, վարձն ու պատիժը. այդ պատկերներն ու դէմքերը իրանց հայեցողական պարզութեամբ և վսեմ դրօշմով գրգռելով մեր եղևակայութիւնը և առաջ բերելով համակրութեան և անձնուիրութեան զգացմունքներ, գերազանցում են այն ամենը, ինչ որ ստեղծել է ժողովուրդների բանաստեղծական հանձարը։ Կրօնագիտութիւնը տարրական ուսմանը տալիս է բարոյական յենակէտ, պահպանում է նրան գործնականով և օգտակարով սահմանափակուելուց և անմիջապէս ի նկատի ունի սանի կրօնական բարոյական կրթութիւնը։ Թէպէտ նա միայնակ չէ կարող այդ անել, առանց ծնողների և ընտանիքի աջակցութեանը։

Կրօնի և լեզուի դասաւանդութեան միջոցին արդէն տրում են բազմաթիւ պատմական ծանօթութիւններ։ պատմութեան դասաւանդութեան պաշտօնն է այդ ծանօթութիւնները լրացնել, դասաւորել և մշակել։ Պատմութիւնը մեզ սովորեցնում է, թէ ի՞նչ են արել մեր նախնիքը, երբ և ի՞նչ մեծ գործեր են կատարուել, որ ժամանակից գոյութիւն ունեն այս կամ այն հաստատութիւնները, երբ և ի՞նչ նպատակով են նրանք ստեղծուել, ի՞նչ պիսի կերպարանափոխութիւնների են ենթարկուել, մինչև որ ապագայի համար մնայուն բարիք են գարձել։ Պատմութիւնը ոչ միայն սովորեցնում է եղածը պատմականօրէն ըմբռնել և պատմականը յարգել, ոչ միայն ներկան և անցեալը հասկանալու և դատելու համար ընդհանուր տեսակէտներ է տալիս, այլ և անցեալի մեծ գործերը և մեծ մարդկէը մեր առաջ պարզելով, տալիս է նմանողութեան վեմ օրինակներ, առաջ է բերում մեր մէջ ներքին մասնակցութեան և անձնուիրութեան զգացմունք, երբ խնդիրը վերաբերում է հայրենիքին և ազգութեանը։

Հայրենիքի պատմութիւնը սերտ կերպով կապուած է հայրենի երկրի ծանօթութեան՝ հայրենագիտութեան հետ, որ ըստ իր կարգի աշխարհագրութեան համար ելակէտ է դառնում։ Մի խորհրդաւոր ձգտում կապում է մարդուն իր հայրենիքի հետ։ Խիստ սրտաշարժ է այն երեսյթը, թէ ինչպէս մարդիկ կապում են մի կտոր հողի հետ, ուր նրանք ծնուել և մնուել են։ բնաւորութեան կրթութեան համար շատ կարեոր է, որ այդ զգացումը խնամուի և պահպանուի։ Բայց որչափ բնական է հայրենիքի սէրը, նոյնչափ բնական է մարդու մէջ այն ձգտումը, որ մղում է նրան դէպի հեռուն և անձանօթը. ծեր և երիտասարդ հաւասարապէս հետաքրքրութեամբ լսում են հեռաւոր երկրների հրաշալիքների մասին։ Աշխարհագրութիւնը լրացնում և ընդարձակում է հայրենագիտութեան տուած ծանօթութիւնները, հեռաւորը բացարում է մերձակայով,

պարզում է հայրենիքի և օտար երկրների մէջ եղած յարաբերութիւնը և ցոյց է տալիս, թէ մրտեղից և ի՞նչ եղանակով են ներմուծւում օտար երկրի արդիւնքները և ուր են արտահանւում հայրենի երկրինը, յիշատակելով մի և նոյն ժամանակ հաղորդակցութեան միջոցներն ու ճանապարհները։ Աշխարհագրութիւնը ծրարում է իր շրջանակի մէջ նաև անցեալի մնացորդներն ու յիշատակները և այդպիսով կապում է ժամանակն ու տարածութիւնը։ պատմութիւնը՝ երեսյթներն ու դէպքերը կապում է ժամանակի հետ, աշխարհագրութիւնը՝ տարածութեան և տեղի։ Աշխարհագրական քարտէզն ու աշխարհագունդը առաջնակարգ միջոցներ են աշխարհագրական հասկացողութեան համար։ ուստի աշխարհագրական դասի էական նպատակներից մէկն է քարտէզն հասկանալը և գործածել սովորելը։ Սակայն անհրաժեշտ է նաև աշխարհագրական առարկաների անմիջական հայեցողութիւնը, որպէս զի կարելի լինի քարտէզի վրայ տեսածը պարզ և կենդանի պատկերացնել։ ըստ այսմ աշխարհագրութեան դասի ամենակարեն մոմենտներից մէկն է հայեցողութիւնը։ Բայց որովհետեւ միմիայն աշխարհագրութիւնը չէ, որ գործ ունի տարածութեան և տեղի հետ, այլ և ուրիշ շատ գիտութիւններ, բնական է, որ նա գիտութեան շատ ճիւղերի համար առնչութեան և շօշափման հանգոյց է դառնում։ Աշխարհագրութեան այս կեդրոնացնող ոյժը պէտք է առանձնապէս գնահատուի, որովհետև նա կապում է պատմական և բնական գիտութիւնները։

Հայրենի երկրի ճանաչողութեանը նպաստում է նաև բնական պատմութիւնը. վերջինս սովորացնում և բաւրարութիւն է տալիս բնագիտական հետաքրքրութեանը՝ ճանաչելու կենդանիները, բոյսերը և հանքերը։ Բնական պատմութիւնը սովորեցնում է գիտել և զննել և միջոց է դառնում զգայարանքները վարժեցնելու և ուղիղ գործածելու. նա սովորեցնում է նաև համեմատութիւններ անել.

Նմանները համապրել, տեսակից դէպի սեռը բարձրանալ, մամսաւորից՝ ընդհանուրը, իւրաքանչիւր օրինակ իր տեսակին ենթակարգել և սեւի առանձնայատկութիւնը համապատասխան տեսակի մէջ որոնել. այս բոլորը հրահանգիչ են մտքի համար, ինչպէս լեզուի ուսուցումը։ Բնական պատմութիւնը օգնում է նաև մայրենի լեզուին, երբ նա նըկարագրութիւնների միջոցին ուշադրութիւն է դարձնում ինչպէս պարզ հասկացողութիւններ կազմելու, այնպէս և տեսածը ուղիղ և որոշ արտայայտելու վրայ. բացի այս, բնական պատմութիւնը, հայրենիքի բնութեան առանձնայատուկ կեանքը բացատրելով, կը նպաստէ հայրենիքի սիրոյ զգացման զօրեղանալուն։

Բնագիտութիւնը բացատրում է բնութեան երեսյթներն ու նրանց պատճառները և ծանօթացնում է մարդկային ստեղծագործութիւնների հետ։ Ֆիզիկան ուսումնասիրում է բնութեան երեսյթների հիմքը և օրէնքները. նրա հարցի ձեր միշտ պատճառական է. ի՞նչ պատճառով է այսպէս լինում. այդպիսով նա սովորեցնում է դիտել, վերլուծել և փորձեր անել. այս դէպքում ևս մարդու բնածին հետաքրքրութիւնը օգնութեան է գալիս, որովհետեւ մանուկն անգամ կոտրատում է իր խաղալիքը, իմանալու համար, թէ ի՞նչ է թագնուած նրա մէջ։ Բնագիտութիւնը այս բնական հետաքրքրութիւնը պէտք է խորացնէ և լայնացնէ. նոյնը վերաբերում է նաև քիմիային։ Ֆիզիկական երեսյթները մեծ մասամբ յայտնագործուող են, մինչդեռ քիմիական ուժերը ծածուկ են գործում. այստեղ ևս դիտողութիւն և մեկնութիւն պէտք է միանան, պարզ գաղափարներ կազմելու և ուղիղ եզրակացութիւններ հանելու համար. իսկ երբ աշակերտը փորձի, դիտողութեան և համեմատութեան միջոցին կը սովորի, թէ որչափ զգոյշ պէտք է լինել եզրակացութիւններ հանելիս, թէ ինչպէս մի դէպքը գեռ բաւական չէ ընդհանուր արձէք ունեցող եզրակացութիւններ հանելու, ոչ պակաս բարոյական օգուտ ստացած կը լինի։

Գ Ա Ռ Խ Ա Գ.

Ո Ւ Ս Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր Հ

§ 1. Նիւրերի դասաւորման պատմական սկզբունքը

Ուսման նպատակին և կրթութեան բարձրագոյն իդէալին համելու համար ուսման նիւթը առաջնակարգ նշանակութիւն ունի. բայց այդ նիւթը ըստ ինքեան հոգեկան ոյժ չէ և չէ կարող դասաւանդութեան նպատակին ծառայել, եթէ չը յարմարուի սանի մտաւոր կարողութեանը և ուրեմն չը դասաւորուի որոշ տեսակէտներից: Դասաւանդութեան ծրագրի պաշտօնն է իւրացնելիք նիւթն այնպէս դասաւորել, որ նախորդը նախապատրաստէ յաջորդի դիւրին ըմբռնումը, այս պրոբլեմն անհրաժեշտ է դարձնում, որ ուսման նիւթը դասաւորուի ըստ յաջորդութեան և համարութեան:

Մանուկը հետզհետէ աճում, դարգանում և սկսում է ճանաչել իր շրջապատը, նրա մարմնական և հոգեկան ուժերի զարգացումը կատարում է հետզհետէ և ի վերջոյ նա կարողանում է ինքնուրոյն կերպով գործել իր շրջապատում և շարունակել մարդկային քաղաքակրթութեան գործը: Կենսաբանութեան այն օրէնքը, որի համաձայն անհատը իր զարգացման միջոցին համառօտ և սեղմ կերպով կրկնում է այն բոլոր շրջանները, որ կատարել է մարդկային ցեղը իր երկարատև գոյութեան ընթացքում, ուսման ծրագրի համար որոշ, բայց ոչ բացարձակ չափ կարող է դառնալ. այս տեսակէտից մանկավարժութեան պաշտօնը պէտք է լինէր մանկան կրթութիւնն այնպէս կազմակերպել, որ մանուկը համառօտ և սեղմ կերպով մի անգամ ևս կրկնէր մարդկային ցեղի զարգացման բոլոր մոմենտները և այդպէս համաէր ներկայ դրութեանը. և յիրաւի, տեսնում ենք, որ մանկան հասկացողութեանը և զգացմունքին նահապետների դարը աւելի մատչելի և ըն-

տանի է, քան հոռվմէական քաղաքացիական կոիւները. լուսնեակն աւելի մօտ է, քան մերձակայ քաղաքը: Հերբարտն ևս պահանջում է «ժամանակագրական յաջորդութիւն հնից դէպի նորը». ըստ Հերբարտի ուսման նիւթը այնպէս պէտք է դասաւորուած լինի, որ մանուկը կրթուի հին յունական, պատանին՝ հոռվմէական, իսկ երիտասարդը՝ նոր շրջանով: Հերբարտի փայփայած իդէալն է եղել դասաւանդութիւնն սկսել Հոմերոսի ողիսականով և այն յունաբէն: Հերբարտի յաջորդներից յատկապէս Ցիլերը կանգ առաւ այդ գաղափարի վրայ, որ սանը «պէտք է կրկնէ իր զարգացմանը համապատասխանող մարդկային ցեղի զարգացման բոլոր մոմենտները»:

Նիւթերի կարգաւորման այս պատմական սկզբունքը, որչափ էլ համապատասխան լինի կենսաբանութեան վերոյիշեալ օրէնքին, կրթութեան ծրագրի համար բացարձակ մասշտաբ լինել չէ կարող: Նիւթերի կարգաւորման պատմական սկզբունքի համեմատ մանուկը պէտք է նախ կարգայ հին հեղինակները, ապա նորը. բայց չէ որ Սոֆոկլէսը կամ Պղատոնն հասկանալը շատ աւելի գժուար է, քան արդի որ և է հեղինակ. թէպէտ ըստ պատմական սկզբունքի հակառակը պէտք է լինէր: Ոչ մի դաստիարակ, որչափ էլ նա հանճարեղ և գործին նուիրուած լինի, չէ կարող սանին այնքան բան մատակարարել, որչափ վերջինս, նոյն իսկ անյաջող պայմաններում, իր շրջապատից ձեռք բերել կարող է: Շրջապատի տուած բազմաթիւ ծանօթութիւններով մանուկը հետզհետէ սկսում է ըմբռնել ներկան և դառնալ նրա զաւակը: Կրթական ոչ մի արուեստ չէ կարող յանուն որ և է պատմական սկզբունքի ընդհատել այդ բնական ընթացքը կամ այն փոխարինել. այս գէպքում կրթութեան պաշտօնը պէտք է լինի նպաստել բնական զարգացման ընթացքին:

Դասաւանդութեան գործը պիտի լինի ներկան իր ամբողջութեամբ մատչելի դարձնել մանկանը. դրա հա-

մար ոչ թէ անցեալը պէտք է ելակէտ լինի, այլ մանկան շրջապատը։ Հերբարտն էր դարձեալ, որ յատկապէս շեշտում էր, թէ փորձառութիւնը և հաղորդակցութիւնը պէտք է դասաւանդութեան ելակէտ և յարաբերակէտ դառնան։ Ուրեմն միայն այն դէպքում թոյլատրելի է հնից սկսելը, երբ դրանով մի բնազբօսիկ թոփչք չէ կատարւում. իսկ կանոնը պէտք է լինի մօտիկից՝ հեռուն։ Պատմական սկզբունքն ուրեմն սահմանափակ նշանակութիւն ունի դասաւանդութեան համար և չէ կարող ուսման ծրագրի համար կոնստրուկտիւ արժէք ունենալ. միայն այնտեղ ուր հնարաւոր է, պէտք է ըստ ժամանակագրական կարգի նախկինը դասաւանդութեան մէջ ևս առաջ անցընել, եթէ այդ անհրաժեշտ է յաջորդի նախապատրաստութեան համար։ Նիւթերի դասաւորման պատմական սկզբունքը թէպէտ չէ կարող նորմատիւ լինել, բայց նա կարող է դառնալ մէկը այն տեսակէտներից, որոնցով դասաւորուելու է ուսման նիւթը. նրանով մենք ձեռք բերած կը լինենք գենետական մեթոդ դասաւանդութեան համար, բայց այդ չը պէտք է շաբլոնական ձեռով գործադրել նաև այնտեղ, ուր հարկաւոր չէ. այս տեսակէտից, օրինակ, աւելի վաղ զարդացած վէպը դասաւանդութեան մէջ պէտք կանխէ քնարերգութեանը և դրամային. դրականութեան համար թերևս ամենից ուղղի յաջորդական կարգը լինէր նախ անցնել մայրենի լեզուով պահուած հէքիաթներն ու նահապետների պատմութիւնը, յետոյ հայրենի երկրի և դասական դիւցազներգութիւնը և վերջապէս քնարերգութիւնն ու դրաման։

§ 2. Ուսման նիւթերի դասաւորումն ըստ բովանդակութեան

Պատմական տեսակէտը, ինչպէս տեսանք, որոշ նշանակութիւն ունի նիւթերի դասաւորման համար. սակայն պարագաները այնքան էլ պարզ և միօրինակ չեն, որ միայն պատմական սկզբունքը բացարձակ կօնստրուկտիւ

նշանակութիւն ունենար. մենք պէտք է քննենք նաև նիւթերի ներքին յատկութիւնը և օրէնքները և տեսմենք, արդեօք նիւթերի դասաւորման համար նրանց ներքին յատկութիւնը մասշտար չէ կարող դառնալ։

Հոգեբանական պարզ իրողութիւն է, որ պարզ նիւթը աւելի մատչելի է մանկան հոգուն, քան բարդը, որովհետեւ վերջինս պահանջում է նախ պարզ տարրերի ծանօթութիւնը և երկրորդ մաքի վերլուծական կարողութիւն, մինչդեռ աշակերտի մտածողութիւնը առաւելապէս համադրական է. այս հոգեբանական իրողութեանը համապատասխանում է այն տրամաբանական երկոյթը, որ ինչպէս մի նիւթի մասերը, այնպէս և տարբեր առարկաները բարդութեան տարբեր որակութիւններ են ներկայացնում. դասաւանդութեան պաշտօնն է նիւթի մասերը, կամ տարբեր առարկաները ըստ յաջորդութեան և համադրութեան այնպէս դասաւորել, որ պարզը կանխէ բարդին, ենթադրեալ՝ ենթադրողին, պատճառը՝ հետեանքին. այդպիսով գտած կը լինենք նիւթերի դասաւորման համար տրամաբանական տեսակէտ՝ պարզից դէպի բարդը։

Այսպէս տեսմում ենք, որ լեզուների ուսմանը որպէս հիմք և ենթադրութիւն պէտք է կանխէ մայրենի լեզուն, մաթեմատիկային՝ տարրական հաշուազիտութիւնը, կրօնագիտութեանը՝ կրօնի նախապատրաստական ծանօթութիւնները։ Լրացուցիչ գիտութիւնների յաջորդութեան ներքին տրամաբանական պայմանն աւելի որոշ է. այսպէս, բնական գիտութիւնները ենթադրում են մաթեմատիկայի ծանօթութիւնը, թէպէտ տարրական նկարագրական բնագիտութեանը անհնաժեշտ չէ մաթեմատիկան։ Տարրական բնական պատմութիւնը՝ միացած հայրենագիտութեան հետ, դառնում է հիմք աշխարհագրութեան համար. իսկ պատմական գիտութիւնների համար կարեոր է աշխարհագրութիւնը, որպէս զի ժամանակի և տարածութեան գաղափարները զուգորդուեն. գիտական բնագիտութիւնը և տիե-

գերազութիւնը յենւում են բարձր մաթեմատիկայի վրայ. Փիլիսոփայութիւնը, վերջապէս, որոշ չափով ենթադրում է բոլոր գիտութիւնների ծանօթութիւնը: Ըստ այսմ, նիւթերը համաձայն իրանց ներքին յատկութեանը դասաւորելով կրատանանք հետեւեալ պատկերը:

I Կրօն (սուրբ գրքի պատմութիւն) — մայրենի լեզու — հաշուեգիտութիւն — հայրենագիտութիւն.

II Կրօն (մարգարէութիւն) — լեզուագիտութիւն (օտար լեզու) — թուաբանութիւն — աշխարհագրութիւն.

III Կրօն (Եկեղեցական պատմութիւն) — լեզու և դրականութիւն — մաթեմատիկա, պատմութիւն.

IV Կրօն (գաւանագիտութիւն և կրօնի փիլիսոփայութիւն) — գրականութեան գլուխ գործոցներ — բարձր մաթեմատիկա, բնագիտութիւն, տիեզերագրութիւն և փիլիսոփայութիւն:

§ 3. Ռւաման նիւթերի դասաւորումը համաձայն տարիերի

Քիչ առաջ տեսանք, թէ ինչպէս պէտք է դասաւորել ուսման նիւթը՝ համաձայն առարկաների տրամաբանական յաջորդութեանը: Սակայն կրթական գործի յաջորդութեան համար անհրաժեշտ է, որ ուսման նիւթը դասաւորուի նաև սանի զարգացման համեմատ, այսինքն, բացի ուսման առարկայից, ի նկատի առնուի նաև ուսմանողի ենթական: Տարբեր տարիքում մանկան ընդունակութիւնները, հետաքրքրութիւնը, յիշողութեան և ըմբռնելու կարողութիւնները խիստ տարբեր են լինում. այս հանգամանքն, ուրեմն, պէտք է ի նկատի առնել և երկու տեսակէտներն ևս՝ թէ առարկայի և թէ ենթակայի աչքաթող չանել: Եթէ մենք ուսման նիւթը միմիայն առարկայի տեսակէտից դասաւորելու լինէինք, այսինքն այնպէս, որ նախ աւանդուէր այն, ինչ որ հարկաւոր է յաջորդի համար, պէտք է լեզուի չոր և ֆորմալ ուսմունքը՝ քերականութիւնը կանխէր կենդանի լեզուին. բայց այդպիսով ընտրած կը լինէինք դասա-

ւանդութեան համար այնպիսի ձև, որ սանի հոգուն բոլորովին անհամապատասխան կը լինէր: Մանկան հոգու ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ նրա տարիքի համաձայն փոխում են նաև նրա ընդունակութիւններն ու հետաքրքրութիւնը: Այս տեսակէտից մանկան կեանքը կարելի է բաժանել չորս շրջանի՝ (ա) նախադպրոցական մանկութիւն՝ մէկից մինչև վեց տարեկան հասակը, բ) դպրոցական մանկութիւն՝ վեցից մինչև տասը տարին, գ) պատանեկութիւն՝ տասից մինչև տասն և վեց տարին և դ) երիտասարդութիւն՝ տասն և վեցից մինչև քսան և մէկ տարեկան հասակը: Մանկութեանը յատուկ է անհաստատ և տաք բնաւորութիւն, որ չէ կարող մի բանի վրայ երկար կանգ առնել. յիշողութիւնը այս հասակում խիստ գորեղ է, երեակայութիւն՝ վառվուն, թէպէտ իսկական ուսուցումն սկսում է 6-րդ տարուց, բայց չը պէտք է մոռանալ, որ մանուկը դպրոց մտնելիս բազմաթիւ ծանօթութիւններ է հետը բերում. նա ճանաչել է իր շրջապատի իրերը, իւրացրել է մայրենի լեզուն, սովորել է անթիւ հեքիաթներ և պատմութիւններ, որովհետեւ դպրոցական մանկութիւնը նախադպրոցական շրջանից շատ քիչ բանով է տարբերում, անհրաժեշտ է, որ նա վերջինիս հետ սերտ կապ պահպանէ:

Սկզբնական պատանեկութիւնը բնորոշում է հերոսական յոյզերով, ինչպէս իրաւացի կերպով նկատում է Հերբարտը. նկատելի է մի ձգտում դէպի հեռուն և անյայտը. պատանին սիրում է թափառել ազատ բնութեան մէջ. նրա խաղերը վայրենի կերպարանք են ստանում. կուներն ու պատերազմերը, հեռաւոր ճանապարհորդութիւններն ու խիզախ արկածները գրգռում են պատանու երեակայութիւնը. հերոսական վէպերն ու պատմութիւնները մեծ ախորժակով են կարգացնում. հայրենի երկրի ծանօթութեան հետ պատանին տեղեկութիւններ է ժողովում նաև օտար երկրների մասին. դասաւանդութեան մի-

Հոցին պատահու այս հակումները պէտք է ի նկատի առնուեն. այս հասակում յիշողութիւնը և ըմբռնելու կարողութիւնը հաւասարապէս զօրեղ են. թէպէտ յիշողութիւնը և երեակայութիւնը դեռ զօրեղ են, բայց մտքի գործունէութիւնը հետզհետէ գերիշխող դեր է ստանձնում. ուստի այս շրջանում պատահին չէ բաւականանում միմիայն կրաւորական ստացութեամբ, այլ թափանցում և մարսում է ստացածը. անմիջական հետաքրքրութեանը միանում է նաև միջնորդական հետաքրքրութիւնը:

Երիտասարդութեանը յատուկ է մասնագիտական հետաքրքրութիւն և գործնական հակումն կեանքի համար. ներկայ կեանքն ու գրութիւնն են նրա ուշադրութեան և հետաքրքրութեան մէջ առաջին տեղը բռնում. պատմական հետաքրքրութիւնը տեղի է տալիս բնագիտական հետաքրքրութեանը. յիշողութիւնը աւելի թուլանում է և առաջ է գալիս որոշ չափով հակակրութիւն դէպի այնպիսի առարկաները, որոնք յիշողութիւնը ծանրաբեռնում են. զարթնում է փիլիսոփայական հետաքրքրութիւնը. ուստի և անհրաժեշտ է, որ տրուեն փիլիսոփայական գիտելիքներ, որպէս զի ձեռք բերած ուսման տարրեր տարրերի մէջ ներքին միութիւն և կապ հաստատուի. այդպիսով միայն երիտասարդը իր ապագայ գործնական կեանքի համար ձեռք բերած կը լինի առաջնորդող սկզբունքներ և պարտադիր նորմեր:

§ 4. Ուսման եիւրերի փոխադարձ յարաբերութիւնը և կենդանացումը

Ուսման նիւթերի յաջորդական դասաւորութեամբ դեռ ամեն բան վերջացած չէ. ուսման ծրագիրը անկատար կը լինի, եթէ իւրաքանչիւր դիսցիպլին անկախ միւսներից իր սեփական և առանձին ընթացքը բռնէ: Եթէ իւրաքանչիւր մասնագիտութիւն ըստ իր մասերի յաջորդութեան շատ էլ գեղեցիկ դասաւորուած լինի, բայց միւս մասնա-

գիտութիւնների հետ օրգանական միութիւն չը կազմէ, ուսման ծրագիրը թերի կը լինի: Ուսման բոլոր նիւթերի մէջ միութիւն և ներքին կապ պէտք է հաստատել. այդպիսով միայն կարելի կը լինի զարթեցնել և պահպանել բազմակողմանի հետաքրքրութիւնը:

Կրօնագիտութիւնը իր պատմական մասով՝ սրբագան և եկեղեցական պատմութեամբ կազուած է ընդհանուր պատմութեան հետ, իսկ մեկնաբանական կողմով՝ դասական լեզուագիտութեան հետ. մինչդեռ հաւատոյ և բարյական տեսութեամբ նա մտնում է փիլիսոփայութեան հետ որոշ առընչութեան մէջ:

Լեզուագիտութեան տարրեր ճիւղերն ևս պէտք է փոխարձաբար կապուեն միմեանց հետ և իրար լրացնեն: Մի լեզուի միջոցով ձեռք բերած քերականական ծանօթութիւնները պէտք է գործադրուեն նաև ուրիշ լեզուների նկատմամբ, որչափ այդ հարաբոր է: Իւրաքանչիւր օտար լեզու պէտք է մայրենի լեզուի հետ առընչութեան մէջ մտնէ, տարրեր լեզուների քերականական ձեռնարկների մէջ պէտք է միօրինակութիւն և զուգահեռականութիւն պահպանուի:

Լեզուագիտութեան և պատմութեան յարաբերութիւնն ևս ակներե է. պատմութիւնը ամփոփում և լրացնում է այն բոլոր ծանօթութիւնները, որ տալիս են լեզուագիտութիւնն ու կրօնագիտութիւնը. բայց իւրաքանչիւր լեզուի դաս մի և նոյն ժամանակ իրական ծանօթութիւնների դաս է. ուստի և լեզուի դասաւանդութեան միջոցին պէտք է խնամք տանել, որ իրական ծանօթութիւնները անսկալ և լրիւ կազմուեն. այդպիսով մայրենի լեզուն բոլոր մասնագիտութիւնների համար մի հանգոյց է դառնում. և ուրեմն իւրաքանչիւր դասի նպատակը պէտք է լինի իրական ծանօթութիւնների հետ մէկ տեղ նպաստել մայրենի լեզուի ուղիղ գործածութեանը:

Մի այլ գիտութիւն ևս, որ յատկապէս կոչուած է

իրական և պատմական գիտութիւնների մէջ կապ հաստատելու՝ աշխարհագրութիւնն է. նա մի կողմից առընչութիւն ունի պատմութեան, միւս կողմից բնական գիտութիւնների հետ. աշխարհագրութիւնը կապւում է նաև մաթեմատիկայի հետ, որ սովորաբար առանձնանալու հակումներ է ցոյց տալիս:

Բոլոր մասնագիտութիւնների հետ ամենից շատ առընչութեան կէտեր ներկայացնում է փիլիսոփայութիւնը. նա միացնում է բոլոր մասնագիտութիւններից եկած թելերը և լոյս է սփոռում հաւասարապէս ամեն կողմ:

Նիւթերի փոխադարձ յարաբերութեամբ ուսման ծրագրի մէջ բնականաբար միութիւն է առաջ գալիս. եթէ դասաւանդութեան նիւթերի մէջ փոխադարձ յարաբերութիւն պահպանուի և ուղիղ ձեռվ գործադրուի, բնականաբար այդ հանգամանքը մասամբ կեդրոնացնող ոյժ կունենայ. բայց նիւթերի փոխադարձ յարաբերութեամբ կեդրոնացումը դեռ տուած չէ, այդ կը լինի այն դէպքում, երբ դասաւանդութեան նիւթերը որոշ յարաբերութեան մէջ կը մտնեն կրթութեան բարձրագոյն իդէալի՝ բարոյական անձնաւորութեան կրթութեան հետ. Վերոյիշեալից անհրաժեշտաբար չի հետեւում, որ դասաւանդութեան իւրաքանչիւր նիւթ անմիջապէս բարոյական ներգործութիւն պէտք է անէ. խիստ աննպատակայարմար կը լինէր բարոյական տեսակէտից անտարբեր նիւթերը բարոյական նպատակի համար միջոց գարձնել. դասաւանդութեան իւրաքանչիւր նիւթ ունի իր սեփական ներքին օրէնքները և անհրաժեշտ, որ ամեն դէպքում մասնագիտութիւնների սեփական կերպաւորող ոյժն ու արժէքը երևան գայ. այնուամենայնիւ անհրաժեշտ է, որ դասաւանդութեան մասնաւոր նպատակները ենթարկուեն բարոյական կրթութեան ընդհանուր նպատակին. այս կարող է լինել նաև միջնորդական կերպով. դասաւանդութեան իւրաքանչիւր նիւթ, որ սանին ներքուստ կերպաւորում և ազնուացնում

է, միջնորդապէս նպաստում է նաև բարոյական կրթութեանը. այն ամեն ուսմունքներն ու վարժութիւնները, որ սանի մտքերը ժողովում ու խորացնում են, ծառայում են բարոյական կեդրոնացմանը, եթէ նոյն իսկ բարոյական նպատակի հետ անմիջապէս որ և է նիւթական կապ չունեն: Այն նիւթերը, որոնք միմիայն սանի իմացութիւնն ու ծանօթութիւններն են շատացնում, բնականաբար աւելի հեռու են գտնուում բարոյական կրթութեան կեդրոնից, քան սրանք, որ անմիջապէս շօշափում են սանի բարոյական կողմը: Այս տեսակէտից դասաւանդութեան կեդրոնը կը կազմեն հայրենական նիւթերը, որոնք ոչ միայն իմացութեան հետ գործ ունեն, այլ և առաջ են բերում մասնակցութեան զգացում և կարող են խորապէս շարժել սանին բարոյական տեսակէտից: Միւս նիւթերն ևս այն չափով կը ստանան կարևորութիւն և արժէք, որչափ հեռու կամ մօտ են գտնուում բարոյական կեդրոնին: Ուրեմն այն ժամանակ միայն ամբողջ դասաւանդութիւնը կը կազմէ միութիւն, երբ գիտութեան տարբեր ճիւղերի մէջ կապ կը հաստատուի և երբ իւրաքանչիւր մասնագիտութիւն իւր չափով և հնարաւորութեամբ կաշխատէ դասաւորուել ընդհանուր նպատակի շուրջը:

Գ Ա Ռ Խ Ա Գ.

Ո Ւ Ս Մ Ա Ն Ը Ն Թ Ա Ց Ք Ը

§ 1. Ռւսման ընթացքի պատօնը

Խնամքը ի նկատի ունի սոսկ սանի ֆիզիկական յատկութիւնները և ուրեմն սանի անձնաւորութիւնն է խնամքի նպատակը: Դասաւանդութեան միջոցին այս ենթակայական մոմենտին աւելանում է, ինչպէս տեսանք, նաև

մի առարկայական մոմենտ, որովհետեւ իւրաքանչիւր ուսումն մի և նոյն ժամանակ բարիքների աւանդումն է։ Այս երկու տեսակէտներն ևս ի նկատի ունենալով մենք աւանդելիք նիւթին որոշ ձեսկերպութիւն տուինք ուսման ծրագրի մէջ։ Ուսման մանրամասն ծրագիրը կազմելիս բացի վերոյիշեալ մոմենտներից պէտք է հարկաւ ի նկատի առնել նաև այլ հանգամանքներ, ինչպէս՝ դպրոցի տեսակը, ուսման տարիները և այլն։

Նախ քան դասաւանդութեան բուն մեթոդին անցնելը, պէտք է աշխատենք պատասխանել այն հարցին, թէ ընդհանրապէս ի՞նչ ձեռվ պէտք է աւանդել ուսման նիւթը, կամ մատչելի դարձնել սանի մտածողութեանը. այլապէս ասած ի՞նչ ձեւ պէտք է ունենայ դասաւանդութիւնը սանի տեսակէտից։ Ի նկատի ունենալով ենթական սանը, կարելի է ընդհանուր կանոններ սահմանել ուսման նիւթի ձեսկերպման համար. այդպիսով կը ստանանք դիդակտիկական ձեւակերպումն կամ ուսման ընթացք, որի պաշտօնն է ձեսկերպել նիւթը իւրացման հոգեբանական և տրամաբանական տեսակէտներից և համուշ բերել նիւթի կերպաւորող ոյժը։ Ուսման ընթացքը կամ դիդակտիկական ձեսկերպումը պէտք է զանազանել դիդակտիկական արուեստից կամ ուսուցման մեթոդից՝ նեղ մտքով առած, որ հրահանգներ է տալիս իւրաքանչիւր մասնակի դէպքի համար, իւրաքանչիւր սանի անհատականութեան համաձայն։ Ուսման ընթացքը ընդհանուր արժէք ունի և ուրեմն պարտադիր է ամենքի համար. մինչդեռ դասաւանդութեան մեթոդի պաշտօնն է ուսման ընթացքի հոգեբանական և տրամաբանական մոմենտները գործադրել մասնաւոր դէպքերում։ Բնականաբար գործադրութեան եղանակը, ունենալով նոյնպէս ընդհանուր սկզբունքներ, ուսուցանողին ազատութեան աւելի մեծ շըջան է տալիս ուստի և ուսուցման մեթոդը կամ դիդակտիկական արուեստը համեմատաբար աւելի անհատական բնոյթ ունի,

քան նիւթի դիդակտիկական ձեսկերպումը։ Ուրեմն ուսման ընթացքը մի միջին տեղ է բոնում նիւթի դասաւորման՝ ծրագրի և մեթոդի մէջ։

§ 2. Խւացման հոգեբանական մամնները

Եթէ որոշուած է իւրաքանչիւր մասնագիտութեան տեղը և յարաբերութիւնը միւս մասնագիտութիւնների նկատմամբ և բարոյական կեղոնացման տեսակէտից, նիւթի աւանդման միջոցին ի նկատի պէտք է առնուի ոչ միայն սանի տարիքը այլ և իւրացման հոգեբանական մոմենտները. այս պահանջում է անպայման ուսուցման մեթոդը. բայց այդ անհրաժեշտ է նաև ուսման ընթացքի համար։

Իւրաքանչիւր մտաւոր իւրացման մէջ պէտք է տարբերել երեք մոմենտ. ա) սացուրինն, որի ընթացքում ենթական կրաւորական դեր ունի. արտաքին աշխարհը ներգործում է մեր զգայարանքների և երևակայութեան վրայ և մենք զգում ենք. բ) մտածողութիւնն, որ զուտ հոգեկան վիճակ է. մարդն իր տեսածն ու լսածը պատճառի և հետեանքի և այլ տեսակէտներից կապակցութեան մէջ է դնում. ծանօթութիւնների այսօրինակ իւրացումը կոչում է հասկացողութիւն։ Թէսլէտ ստացած ծանօթութիւնները միշտ ուղիղ կերպով չեն հասկացում և բացատրում, բայց որ և է ձեփ հասկացողութիւն պէտք է որ անպայման տեղի ունենայ. ուսուցման պաշտօնն է այս դէպքում՝ նպաստել ուղիղ հասկացողութիւններ կազմելուն. գ) գործունեութիւնն, որով ստացութեամբ ձեռք բերածը և հասկացողութեամբ սեփականածը գործադրութիւնն է գտնում. այս դէպքում ենթական ներգործական վիճակ է ընդունում. Տպաւորութիւն, գաղափար և գործողութիւն զարգացման մի և նոյն ընթացքնեն ներկայացնում. զարգացման բոլոր մոմենտներն եւ գործողութիւններ են. իմացական դիտութիւնների մէջ զերակշում է առաւե-

լապէս երկրորդ մոմենտը, արուեստների մէջ առաջինը և վերջինը. բայց այս երեք մոմենտներից և ոչ մէկը առանձին հանդէս չէ գալիս: Այսպիսով իւրացման համար ստանում ենք մի եռանդամ շղթայ, ա) ստացութիւն, բ) հասկացողութիւն, գ) գործադրութիւն, որոնց համապատասխանում են՝ ուշադրութիւն, կապակցութիւն և վարժութիւն կամ՝ դիտել, ըմբռնել, իրազործել և կամ իմացողութիւն, հասկացողութիւն և ամերտարուեստութիւն: Դաստանդութեան մէջ ևս այս երեք անդամներին համապատասխանում են երեք մոմենտներ՝ ա) ներկայացումն (էմպիրիկ մոմենտ), բ) բացարութիւն (տրամաբանական մոմենտ), գ) հաստատումն և վարժութիւն (տեխնիկական մոմենտ): Այս հոգեբանական երբորդութիւնը՝ ստացութիւն, հասկացողութիւն և գործադրութիւն, իրանց համապատասխանող գաստանդութեան ձևերով՝ ներկայացնող, մեկնաբանող և հրահանդող կամ վարժեցնող դասերով կազմում են ուսուցման այն հիմնական սիւները, որոնց վրայ յենուում են դիդակտիկական ձևակերպումը և արուեստը,

§ 3. Դաստաւանդութեան ձեւերը

Թէպէտ ուղիղ է, որ իւրաքանչիւր դասի ընթացքում տեղի է ունենում թէ ստացութիւն, թէ հասկացողութիւն և թէ վարժումն (իւրացման հոգեկան մոմենտները), այնուամենայնիւ դրանից դեռ չէ հետևում, որ այդ բոլոր մոմենտներն էլ ամեն գէպում հաւասարաչափ գործադրուել կարող են: Առաջ արդէն յիշատակեցինք, որ մանկութեանը յատուկ է առաւելապէս ստացական վիճակ, պատանեկութեանը՝ ստացութիւն և հասկացողութիւն, երիտասարդութեանը՝ հասկացողութիւն և գործադրութիւն. գասաւանդութեան մէջ էլ նայած նիւթի ընաւորութեանը, երբեմն մի մոմենտն է գերակռում, երբեմն՝ միւսը. այս գերակշռութեան տեսակէտից կարելի է որոշել գասաւանդութեան մի քանի ձևեր:

Ստացութիւնը կատարւում է կամ գգայարանական տպաւորութեամբ, ուրեմն հայեցողութեամբ և կամ նախկին պատկերացումների վերարտադրութեամբ: Առաջին դէպքում ուսուցչի պաշտօնը կը լինի ցոյց տալ և այս կը լինի ցուցական դաս (գէյկտական). Երկրորդ գէպքում ուսուցիչը կամ նկարագրում է և կամ պատմում. այս էլ կը լինի ներկայացնող դաս: Նկարագրում են առարկաները կամ գրութիւնները, իսկ պատմում են գէպքերը կամ գործողութիւնները: Մրանցից իւրաքանչիւրն ունի իր արուեստը. ընտիր հեղինակներից և պատմագիրներից կարելի է սովորել պատմելու արուեստը: Պատմական գանագան գէպքերը հայեցողական դարձնելու համար մեծ ծառայութիւն կարող են մատուցանել պատկերները, որոնք ներկայացնում են զանազան տեսարաններ, գործող անձինք և գործողութեան հանդիսավայրեր. այդպիսով նկարագրութեան և պատմութեան հետ կը կապուի նաև հայեցողութիւնը:

Հասկացողութիւնն ևս լինում է անուանական և իրական. լեզուի միջոցով արտայայտուած մտքերի ըմբռնումը կոչում է անուանական հասկացողութիւն. իսկ այն միջոցը, որով անուանական հասկացողութիւնը հնարաւոր է գանում՝ մեկնաբանութիւն. և որովհետեւ ամենահին ժամանակներից սկսած ուսուցման նպատակն է եղել հնարաւոր դարձնել որոշ կանոնական գրուածքների հասկացողութիւնը, բնական է, որ գասաւանդութեան մեկնաբանական ձևը ամենից շուտ պէտք է զարգանար. բայց որովհետեւ ոչ միայն գրաւոր երկերը, այլ և գրաֆիկ և պլաստիկ արուեստների արտադրութիւնները կարող են մեկնաբանուել, մեկնաբանական դասը միանում է ցուցականի հետ:

Իրական հասկացողութեան նպատակն է առարկայի էութիւնը ըմբռնել. իսկ առարկայի էութիւնը կարելի է ըմբռնել նրա հիմքը և պատճառը որոնելով. իմանալու

համար, թէ մի բան ի՞նչ է, պէտք է ստուգել, թէ նա ինչու այդպէս է։ Սկզբունքի մէջ ծրարուած է միաժամանակ մասնաւորը, սպասելով անհատականացուցիչ որոշմանը, ինչպէս և ընդհակառակը, սկզբունքը արտայայտուած է մասնաւոր օրինակի մէջ, սպասելով վերացուցմանը։ Իւրաքանչիւր դասաւանդութիւն, որ ձգտում է հասրաւոր դարձնել իրական հասկացողութիւնը, պէտք է ջանայ զարգացնել ծրարուածը։ այս տեսակէտից դասաւանդութեան այն ձեր, որի նպատակն է իրական հասկացողութիւնը, կարելի է զարգացնող դաս անուանել։

Ստացածը և հասկացածը պէտք է նաև ամբապնդուի. այս կատարւում է թէ արուեստների և թէ գիտութիւնների մէջ գործադրութեամբ և վարժութեամբ. դասաւանդութեան այս նպատակին հասնելու միջոցներն են հարցերը, վարժութիւնները և խնդիրները։

Եթէ ուսման նիւթերը դասաւանդութեան ձեւերի տեսակէտից դիտելու լինենք, կը տեսնենք, որ պատմութեան, աշխարհագրութեան և ընական պատմութեան դասերի մէջ մեծ յաջողութեամբ կարող է գործադրուել դասի ներկայացնող ձեր, միացած յաճախ ցուցական դասի հետ։ Լեզուական դասն ըստ իր էլութեան մեկնաբանական է, բայց դասաւանդութեան զարգացնող ձեն ևս կարող է և պէտք է այստեղ գործադրել։ չը պէտք է մոռանալ նաև, որ վարժութիւնը և ամբապնդումը լեզուի դասի էական նպատակներից մէկը պէտք է լինի։ Փիլիսոփայութեանն ու մաթեմատիկային համապատասխանում է դասի զարգացնող ձեր։ Բնագիտութեան դասաւանդութիւնը մեծ մասամբ ներկայացնող և ցուցական է, բայց նա կարող է նաև զարգացնող ձե ընդունել։ Կրօնագիտութեան մէջ երեք ձեերն ևս հաւասարապէս կարող են հանդէս դալ։ Որպէս զի ուսման նիւթերի ներքին կերպաւորող ոյժը հանդէս դայ, հարկաւոր է, որ դասաւանդու-

թեան վերոյիշեալ բոլոր ձեերն էլ գործադրուեն իրանց տեղումը։

§ 4. Խւացման տամարանական մասնաբները

Իւրացման հոգեբանական մոմենտներն ուսումնասիրելիս մենք ի նկատի առանք ուսանողի ենթական և ըստ այնմ սահմանեցինք դասաւանդութեան մի քանի ձեեր։ Եթէ այժմ մեր հայեացը ուղղելու լինենք բացառապէս ուսման առարկային, անհրաժեշտաբար հարց է ծագելու, թէ ուսման նիւթն աւանդելիս ի՞նչպիսի ներքին տրամաբանական յաջորդականութիւն պէտք է պահպանել. այս ինդիրում մեզ տրամաբանութիւնն է առաջնորդ հանդիսանալու։

Կարե ի է մասնաւորից դէպի ընդհանուրը բարձրանալ, կամ ընդհակառակը, կարելի է պարզից դէպի բարդը դիմել կամ ընդհակառակը։ Տրամաբանութեան մէջ այս երկու հակառիք մեթոդները կոչում են անալիզ և սինթէզ (վերլուծութիւն և համադրութիւն)։ Անալիզը մեզ տանում է թանձրացեալից դէպի վերացականը, մասնաւորից դէպի ընդհանուրը, պայմանաւորուածից դէպի պայմանաւորողը։ Սինթէզն, ընդհակառակը, սեռական կամ բարձր գաղափարներից և ընդհանուր օրէնքներից դէպի այն տարրերը, որ վերջիններս պարփակում են իրանց մէջ. անալիզը վերացնում է գաղափարները, սինթէզը՝ սահմանաւորում։ Նա եզրակացութիւնը ընդհանրացնում է, սա մասնաւորում։ Անալիզն ընթանում է ինդուկտիւ եղանակով, այսինքն, դիտում է առարկաներն ու երեսյթները, նրանց համեմատութեան մէջ է դնում և ըստ այնմ եղանակացութիւններ հանում և օրէնքներ սահմանում. մինչդեռ սինթէզը գեղուկտիւ է ընթանում և ելակէտ ունի ընդհանրացնուր օրէնքները և հետամուտ է, թէ որ դէպում և ի՞նչ չափով վերջիններս իրագործուել կարող են։

Անալիզը պատճառական յարաբերութեան տեսակէտից յետքնթաց է (ոեզրեսսիւ) և քննում է եղրակացութիւններն ու օրէնքները համաձայն նրանց հիմունքի. սինթէզը, ընդհակառակը, յառաջընթաց է (պրոգրեսսիւ) և տանում է պատճառից դէպի հետևանքը:

Դասաւանդութեան մէջ մենք արդէն գտնում ենք անալիզը և սինթէզը գործադրուած յատկապէս իրական համացողութեան՝ զարգացնող գասի մէջ, որ զարգացնում է սկզբունքը մասերից և ընդհակառակը մասնաւորը՝ սկզբունքից: Անալիզը և սինթէզը կարող են հեշտութեամբ գործադրուել նաև անուանական համացողութեան համար մեկնաբանական գասի մէջ: Գրականութեան կամ արուեստի արտադրութիւնների մեկնութիւնը հասցնում է ընդհանուր արժէքի և նշանակութիւն ունեցող ըմբռնումների և օրէնքների. ուրեմն նա ընթանում է վերլուծական եղանակով. եթէ, ընդհակառակը, լեզուի և բանահիւսութեան կանոնները գործադրելով ստեղծում է մի գրական երկ, գործադրում է համագրական մեթոդը, որովհետև այս դէպքում երևում է ընդհանուրի գործադրութիւնը մասնաւոր դէպքում: Ով որ արտայայտութիւնից դէպի միտքը և արտայայտութեան եղանակներից դէպի բովանդակութիւնն է դիմում, վերլուծաբար է ընթանում. իսկ ով իր մտքի համար համապատասխան արտայայտութեան ձեեր և միջոցներ է որոնում՝ համագրաբար:

Դասաւանդութեան ձեերից ցուցակնը համագրական է, երբ, օրինակ, ուսուցիչը աշակերտի աչքի առաջ զարգացնում է (կազմում) հայեցողութեան առարկան, ընդհանուրից դէպի մանրամասնութիւնները գնալով, ինչպէս, օրինակ, մի աշխարհագրական քարտէզ կազմելիս. ընդհակառակը ցուցական գասը կը գառնայ վերլուծական, եթէ ուսուցիչը պատրաստի ունի առարկան կամ պատկերը և այն բացատրում է մասերից:

Ներկայացնող դասը առաւելապէս համագրական է, բայց նա կարող է դառնալ նաև վերլուծական, եթէ յենակէտ ունի սամի մտքի շրջանը: Մեկնաբանական դասը վերլուծական է, մինչդեռ զարգացնող դասը թէ վերլուծական և թէ համագրական: Ամրապնդումը միշտ համագրական է լինում: Վարժութիւնը կարող է լինել թէ վերլուծութեան և թէ համագրութեան միջոցով: Այսպէս տեսնում ենք, որ գասաւանդութեան մէջ անալիզը և սինթէզը յաձախ գուգորդուած են լինում. ոչ մէկը չէ կարող առանձին վերցրած յաջողութեամբ և արդիւնաւէտ կերպով գործադրուել. ուսուցչի պաշտօնը պէտք է լինի այս դէպքում իւրաքանչիւրն իր տեղում գործադրել, կամ երկուսը միացնել, եթէ հարկը պահանջում է: Ճառախօսը կարող է առանց կանոնանելու՝ միայն մի ուղղութեամբ, մի մեթոդով առաջ ընթանալ, բայց գասատուն պէտք է յաճախ ընդհատումներ և շրջումներ անէ և առարկան այլ տեսակէտից դիտէ, որովհետև նրա նպատակն է հնարաւոր դարձնել պարզ տպաւրութիւններ, ուղիղ հասկացողութիւն և անսայթաք վարժութիւն: Վերլուծութեան կամ համագրութեան բացարձակ գործադրութիւնը չարիք կը լինէր գասաւանդութեան համար. գիտութիւններն ևս հաւասարապէս յարգում են երկու մեթոդներն էլ և նրանց որոշ կապակցութեան մէջ գնում: Անալիզը հետախուզութեանը հաստատուն պատուանդան է տալիս, սինթէզը՝ պերսպեկտիւ. երկու մեթոդների արժէքն ու արդիւնքը ի նկատի առնելով, թերեւ կարելի լինէր սահմանել հետևեալ բանաձեւ. «անալիզ» եթէ հարկաւոր է և սինթէզ՝ երբ կարելի է»:

§ 5. Աւաման Եփրի օրգանական-գենետիկան յօդաբաւիսումը

Իւրացման հոգեբանական և տրամաբանական մոմենտները մեզ ցուցումներ են տալիս, թէ ինչ ձևով պէտք է յօդաբաշխութիւնը, որ մատչելի դառնայ սանին և հեշտացնէ ուսման գործը:

Տպաւորութեան պարզութիւնը պահանջում է, որ
աւանդելի նիւթը մատակարարուի որպէս միութիւն, որ-
պէս զի հեշտութեամբ կարելի լինի աչքածել ամբող-
ջութիւնը։ Հասկացողութեան գործը դիւրացնելու համար
պէտք է նիւթի աւանդման մէջ որոշ յաջորդականութիւն
պահպանել, այնպէս, որ նախորդը նախապատրաստէ յա-
ջորդը, այսինքն նրանց մէջ հաստատուի պատճառի և հե-
տեանքի, միջոցի և նպատակի, հիմունքի և արդիւնքի
կապը։ Վարժութեան գործին կարելի է նպաստել կազ-
մելով հաստատուն շարքեր, որոնց անդամները որոշ նշան-
ներով իրար մատնացոյց անեն. իսկ ամբապնդման յաջո-
ղութեան և դիւրութեան համար անհրաժեշտ է կազմել
բազմաթիւ տարրեր, որպէս զի վերջիններս իրար հետ
բազմօրինակ բարդումներ առաջացնեն։ Անալիզը պահան-
ջում է սահմանեալ միութիւններ, իսկ սինթէզը այնպիսի
շարքեր, որոնք մի և նոյն ելակեան ունենան։

Սակայն, եթէ ուսման նիւթը միայն այս գիդակախ-
կական տեսակէտից յօդաբաշխելու լինենք, անհրաժեշտա-
բար կընկնենք դիգակտիկական ֆօրմալիզմի մէջ։ Ուսման
նիւթի յօդաբաշխումը իր նպատակին դեռ հասած չի լինի,
եթէ նա առաջնորդուում է միմիայն դիգակտիկական տեխ-
նիկայի սկզբունքներով, այլ միայն այն ժամանակ, եթք
նա օրգանական-գենետական բնոյթ կը ստանայ, այսինքն,
եթք կը ցուցադրուեն նրա օրգանական միութիւնները և
գենետական յաջորդութիւնները. այդպիսով միայն նիւթի
գենետական և կերպաւորող ոյժը, որ համապատասխան
գիտութիւնն ու արուեստը ի կեանս է կոչել և պայմա-
նաւորում է նրա զարգացումը, ուրեմն և նրա աւանդե-
լու եղանակը, հանդէս կը գայ նիւթի բոլոր մասերում.
այլասէս ասած, պէտք է հակառակ ֆօրմալ սկզբունքների
իւրաքանչիւր առարկայի ինքնայտուկ բնոյթն ուսումնա-
սիրել, նրա բնական յօդաբաշխմանը հետեւ և այդպիսով
նրա յատուկ կերպաւորող ոյժը երեան համել։

Օրգանիզմներ են կենդանի էակները, որոնք առա-
ջացնում են նոր օրգանիզմներ. մենք ուսումնասիրում ենք
այդպիսի օրգանիզմները իրանց սկզբնական ֆազիսից.
օրինակ, բոյսի ծագումը և զարգացումը իր սաղմից, կամ
կենդանու զարգացումը իր ձուլից։ Սակայն օրգանական-
գենետական գաղափարը չէ սահմանափակւում միմիայն
կենդանի էակներով. սկսած ամենահին ժամանակներից,
սովորութիւն է եղել մարդկային ընկերութիւնը համեմա-
տել կենդանական մարմնի հետ. մարդկային ընկերութիւնը
համարուել է մի օրգանիզմ, որ իր մէջ ամփոփում է զա-
նազան օրգանական միութիւններ՝ ընտանիք, ցեղ, ժողո-
վուրդ, պետութիւն, եկեղեցի և այլն. այս խմբակցու-
թիւններից իւրաքանչիւրը կազմուած է մի քանի կամ
բազմաթիւ օրգանիզմներից, այսինքն անհատներից, որոնցից
իւրաքանչիւրն իր սեփական արժէքն ունի և սօցիալական
խմբակցութեան մէջ միենոյն ժամանակ նպատակ է։ Բայց
մարդկային ստեղծագործութեան արդիւնքներն ևս օրգա-
նական բնոյթ են կրում. արուեստագէտը ներկայանում է
որպէս ծնող կամ ստեղծող, որի ստեղծագործութեան
արդիւնքը նման է օրգանական էակներին. նա ևս միա-
կան բնոյթ ունի, աճել ու զարգացել է մի հիմնական տրա-
մադրութիւնից ու մտքից և առաջին սպամը, որ բեղմնա-
ւորում է արուեստագէտի հոգին, հետզհետէ սնւում և
հասունանում է կենդանական օրգանիզմի նմանութեամբ։
Այսպէս են ոչ միայն անհատական, այլ և հասարակական
ստեղծագործութիւնները. լեզուն մի օրգանիզմ է. նա ա-
ճում և զարգանում է և ենթակայ չէ անհատների կամա-
յականութեանը, քանի դեռ նա կենդանի է. նա ունի իր
մէջ օրգանական և անօրգանական տարրեր, որոնցից աշ-
խատում է հետզհետէ ազատուելու թուական և տարածա-
կան մեծութիւնների գաղափարը նոյնպէս օրգանական
բնոյթ ունի։ Ուրեմն բնութեան կենդանական օրգանիզմ-
ների հետ, մտաւոր և հասարակական կեանքում ևս զըտ-

նում ենք սօցիալական, գեղարուեստական և մտաւոր օրգանիզմներ, որ կարելի է նոյնպէս գործնական, բանաստեղծական և տեսական անուանել: Այս երեք կարգի օրգանիզմներն էլ ուսումնասիրելիս, պէտք է մեր հայեացքը ուղղենք նրանց ծնունդին, գենեգիսին, որովհետև առարկայի մասին մեր ունեցած գաղափարը այն ժամանակ լրիւ և պայծառ է լինում, երբ մեզ յայտնի է նրա ծագման պատմութիւնը:

§ 6. Օրգանական-գենետական սկզբաների գործադրութիւնը.

Բնական պատմութեան առարկան կենդանական և բուսական թագաւորութեան օրգանիզմներն են. իւրաքանչիւր բարդ օրգանիզմ կազմուած է պարզ օրգանների միութիւնից. օրգանիզմների գործունէութիւնը պէտք է բացատրել պարզ օրգանների գործակցութեամբ, իսկ իւրաքանչիւր օրգան պէտք է բացատրուի իր գործածութիւնից: Բայց բնական պատմութիւնը չէ բաւականանալու միմիայն առանձին կենդանիների ուսումնասիրութեամբ, այլ նրանց համեմատութեան մէջ է դնելու և սիստեմներ կազմելու. սակայն սիստեմներ կազմելու միջոցին ևս չը պէտք է մոռացութեան մասնուեն կեանքի միութիւնները. այսպէս օրինակ փշատերեկ և տերևաւոր ծառերի անտառները մի միութիւն են կազմում, նոյնպիսի միութիւն են կազմում մարդու ձեռքով հաստատուած և խնամուած բուսական կեանքի ուրիշ ներկայացուցիչները, ինչպէս այդի, պարտէզ, ագարակ և այլն: Բնական պատմութիւն աւանդելիս անպայման պէտք է կեանքի այս միութիւնները ի նկատի պնուտեն, որովհետև բոյսերը և կենդանիները միայն այն գէպումն են աշակերտի համար իրազննական և հաւկանալի դառնում, երբ հանդէս են գալիս իրանց բնական խմբակցութեան մէջ: Բոլոր վերոյիշեալ միութիւնները այլ միութիւնների հետ միասին կազմում են աւելի բարձր

տեսակի միութիւն՝ հայրենիքը, որ բացի ֆիզիքականից, իր մէջ պարունակում է նաև բարոյական մոմենտ: Հայրենագիտութիւնը սկիզբն է դառնում աշխարհագրութեան մէջ ևս պէտք է որոնել այդպիսի միութիւններ և հայրենի երկրի միութիւնների հետ երկրաբանական, բուսաբանական, կենդանաբանական, ցեղական տեսակէտներից յարաբերութեան մէջ զնել:

Սօցիալական օրգանիզմների ծագումն ու զարգացումը ուսումնասիրում է պատմութիւնը: Հայրենի պատմութեան միջոցով պէտքէ բացատրուի պետութեան ծագումն ու զարգացումը. առանձնապէս պէտք է շեշտուեն այնպիսի շրջանները, որոնց մէջ շղթայուած են զարգացման բազմալիսի օղակները: Պատմական քարտէզը ցոյց կը ւայ սլատմութեան մեծ հանգիստները և այդպիսով կը պարզէ պետութիւնների զարգացումը և անկամը. այս տեսակէտից իսրայէլի ժողովրդի պատմութիւնը գենետական մտածողութեան համար անօրինակելի է:

Դասական հեղինակների ստեղծագործութեան արգիւնքներն ևս, եթէ նրանք դասաւանդութեան նիւթ են գառնում, պէտք է որպէս միութիւն գնահատուեն. մտքի ստեղծագործութեան արդիւնքի ծագման պատմութիւնը ամենահետաքրքիր և օգտակար զբաղմունքներից մէկն է և լոյս է սփոռում ամրողի հանկացողութեան վրայ. սակայն դասաւանդութիւնը քիչ գէպում կարող կը լինի այդպիսի մանրամատնութիւնների մէջ մտնել. բայց անհրաժեշտ է, որ մի քանի ընտիր հեղինակներ այս տեսակէտից ուսումնասիրուեն. և եթէ պատմական յաջորդականութեան տեսակէտից նկատուեց, որ ժողովրդական բանաստեղծութեան ձևերը պէտք է կանխեն արուեստականներին, այդպիսով պահպանուած կը լինի միենոյն ժամանակ գենետական սկզբունքը:

Նոյնը պէտք է լինի նաև գեղարուեստների մէջ. այսպէս օրինակ, քանդակագործութեան մէջ նախ պէտք

է ուսումնասիրուի դօրէական, յետոյ յօնիական, ապա կորնթական և այսպէս յաջորդաբար հոռվմէական և վերածնութեան ոճերը. իւրաքանչիւր ոճ առանձին վերցրած մի միութիւն պէտք է ներկայացնէ. արուեստագէտի կամ բանաստեղծի հիմնական տրամադրութիւնը, կերպաւորող սկզբունքը, որ պայմանաւորում է արտագրութեան միութիւնը, պէտք է դասաւանդութեան մէջ ևս երևան գայ և այնպէս կենդանի կերպով ըմբռնուի, ինչպէս որ հեղինակը այն յղանալիս կենդանի զգացել է: Այս տեսակէտից պէտք է խնայել գեղարուեստի արտագրութիւնը և այն քմանաօրէն չանդամահատել, որովհետև այդպիսով կորչում է օրգանական միութիւնը. իւրաքանչիւր գրական գործ ուսումնասիրելիս պէտք է դիտել նրա միութիւնը, ամբողջութիւնը. իսկ եթէ փոքրիկ բանաստեղծութիւններ են աւանդում, նրանք բոլորը կամ մի միութիւն պէտք է կազմեն և կամ առնուազը միական խմբեր:

Տիեզերագրութեան մէջ ևս տիեզերական մարմինների և նրանց շարժումների մասին խօսելիս, որչափ այդ դպրոցում հնարաւոր է, պէտք է գործագրուի գենետական սկզբունքը. բայց ոչ իրերի ծագման՝ ըէալ գենետական, այլ մեր հայեացքների զարգացման՝ գիտական գենետական սկզբունքը. այլապէս ասած դասաւանդութեան սկիզբը պէտք է կազմէ տիեզերական մարմինների և նրանց շարժման թողած զգայարանական տպաւորութիւնը, ըստ որում երկիրը մի տափարակ մարմին է, իսկ երկիրը ներկայանում է մի կիսագունոտ, որի մէջ շարժում են լուսինն ու արեգակը և ամրացած են աստղերը. սակայն այս անթրոպոցենտրական տեսակէտը շուտով պէտք է տեղի տայ այլ տեսակէտի. այդ մարմինների և նրանց յարաբերութեան նկատմամբ արդէն նները այլ եղբակացութեան էին եկել. երկիրը պատկերացնում էին մի գունոտ, որի շուրջը պատում են մնացած մոլորակները. այսպիսով ձեռք է բերում գէօցենտրական տեսակէտ.

բայց այս տեսակէտն ևս տեղի է տալիս - բոլոր մոլորակներն էլ երկիրներ են և մերինից անսահման հեռու. ուրեմըն ինչպէս կարող են նրանք պատել երկրի շուրջը. երկիրը դառնում է միւս մոլորակներին համատեսակ, իսկ արեւը դառնում է մեր մոլորակային սիստեմի կենդրոնը, այդպիսով ձեռք է բերում հելիոցենտրական տեսակէտը, և այս տեսակէտից պէտք է քննուեն առաջուայ դիտողութիւնները, այսինքն՝ արեգակի շարժումը, լուսնի ֆազերը և երկրի եղանակների փոփոխուելը և այլն. այս գէպքում գիտական գենետական տեսակէտը կը միանայ պատմական սկզբունքի հետ:

Գ. 1. Ո Խ Խ Խ Խ

Ո Խ Ս Ո Ւ Ց Մ Ս Ն Ե Ղ Ա Կ Հ

§ 1. Ուսուցման եղանակի պահօնը

Մինչև այժմ մենք սահմանեցինք ուսումնան նիւթը, ծրագիրը և ընթացքը: Ուսուցման ընթացքի և եղանակի, կամ դիդակտիկական ձեսկերպութեան և դիդակտիկական արուեստի միմեանց նկատմամբ ունեցած յարաբերութիւնը առաջուց արգէն սահմանել ենք (տես վլ. Դ. § 1.) Ուսուցման եղանակի կամ մեթոդի տեսութիւնը՝ մեթոդիկան, ի նկատի է առնելու ուսուցչի և աշակերտի անձնաւորութեանց առանձնայատկութիւնները և հրահանգներ է տալու դասաւանդական և մեթոդական միութիւնների համար: Բայց մենք չենք կարող ընդհանուր դիդակտիկայի սահմաններից դուքս գալ և ի հաշիւ առնել սեռերի, անհատականութեանց, տարիքի և ընդունակութիւնների տարբերութիւնները. այս բոլոր հանդամանքնե-

ըը մասնաւոր դիդակտիկական արուեստի, մասնաւոր մեթոդիկայի գործն է. ընդհանուր մեթոդիկան կարող է զբաղուել ուսուցչի և աշակերտի անհատականութեամբն ընդհանրապէս: Այս ընթացքը, որ մենք սահմանել էինք դիդակտիկական ձևակերպութեան միջոցին, պէտք է գործադրենք նաև դիդակտիկական արուեստի մէջ, այսինքն, պէտք է որոշենք ուսուցման եղանակի մէջ ևս հոգեբանական և տրամաբանական մոմենտներ, ուսման նիւթի ճիւղաւորումը և դասաւանդութեան ձևերը.

§ 2. Խւացման հոգեբանական մոմենտների յաջողութեան պայմանները

ա) Հ Ե Տ Ա. Ք Ր Ո Ւ Թ Ի Ւ

Որպէս զի դասաւանդութիւնը արդիւնաւոր լինի և խւացումը բազմակողմանի, աշակերտի կողմից պէտք է ձգտումն կամ հետաքրքրութիւն նկատուի դէպի ուսման առարկան. հետաքրքրութիւնը սովորաբար ընական ընդունակութեան հետևանք է լինում. հետաքրքրութիւնը պէտք է տևական լինի և հետզհետէ ընտելացնէ աշխատանքի, այլապէս ասած, աշխատանքը պէտք է սովորութիւն դառնայ, կամ որ նոյնն է, պէտք է աշխատասիրութիւն ձեռք բերուի: Բայց որպէսզի աշխատասիրութիւնը յարատե լինի և ծառայէ կրթութեան նպատակին, անհրաժեշտ է հոգեկան ուշադիր վիճակ, ինչպէս և հասկացողութիւն ձեռք բերել կրթական աշխատանքի արժէքի համար: Այս չորս մոմենտները՝ ձգուումն կամ հետաքրքրութիւնը, աշխատասիրութիւնը, ուշադրութիւնը և կրթական աշխատանքի արժէքի հասկացողութիւնը համապատասխանում են այն պայմաններին, որ Արիստոտէլն անհրաժեշտ է համարում բարձրագոյն առաքինութեան համելու համար (physis, ethos, logos): Այս չորս հանգամանքները լրացնում են տարբեր հասակները բնորոշող յատկութիւնները (տես գլուխ Գ.

§ 3). մինչդեռ ուսման առաջի տարիներում իշխու և է ընական ձգտումը, յաջորդ շրջանում աւելանում է աշխատասիրութիւնը և ուշադրութիւնը, իսկ վերջը ձեռք է բերում նաև հասկացողութիւն աշխատանքի և նրա արդիւնքի համար:

Հետաքրքրութիւնը սովորաբար ընական ընդունակութեան հետևանքն է լինում. յայտնի է, որ բոլոր աշակերտները հաւասարապէս չեն օժտուած ընական ընդունակութիւններով, ինչպէս ազգային տիպը կամ մարմնական յատկութիւնները, նոյնպէս և մտաւոր ընդունակութիւնները ժառանգաբար անցնում են սերնդէ սերունդի Քաղաքս կիրթ ազգերի մէջ յաջորդ սերունդներն իրանց նախորդներից ժառանգում են զանազան որոշութիւններ կամ ընդունակութիւններ, որ նրանց այս կամ այն կոչումին, կամ ընդհանրապէս քաղաքակրթութեան գործը շարունակելուն ընդունակ է դարձնում. մինչդեռ վայրենիները միանգամից անկարող են սեփականել բարձր քաղաքակրթութեան արդիւնքները: Յայտնի է նոյնպէս, թէ որչափ մեծ տարբերութիւն և աստիճաններ կամ հանձարի, որ իր համար սեփական և նոր ուղի է հարթում, միջակ ընդունակութեան, որ միմիայն առաջնորդութեան է կարօտ և իդիոտութեան մէջ, որին չէ կարող օգնել կրթական ոչ մի արուեստ: Հոգեկան ընդունակութիւնների գրլիաւոր տեսակները որոշելու համար, պէտք է ի նկատի առնել իմացական հետաքրքրութեան զանազան կողմերը. որոշ մարդկանց մէջ գերիշտում է իրական իմացման ձրգուումը՝ ճանաչել շրջապատի իրերը. ուրիշներն առաւելապէս հետաքրքրուում են առարկաների պատճառով, իսկ երբորդ խմբի մարդիկ հակուած են իրենց տեսածը կամ զգացածը նկարագրելու կամ ներկայացնելու՝ ստեղծագործելու: Մանկական հասակում հետաքրքրութեան այս երեք տեսակներն ևս յաջորդաբար երևան են գալիս: Մենք գիտենք, որ հետաքրքրութեան այս երեք տեսակները՝ էմ-

պիրական, մտահայեցողական և արուեստական առարկաւ կայօրէն հանդէս են գալիս էմպիրական, բանական գիտութիւնների և արուեստաների մէջ. խկ այդ նոյն շարքի ենթակայական կողմը, ինչպէս գիտենք, կազմում են ստացութիւնը, հասկացողութիւնն ու գործադրութիւնը. և ուրեմն նայած թէ իւրաքանչիւր անձնաւորութեան մէջ այս յատկութիւններից ո՞րն է գերիշխում, ըստ այնմ կորոշուի նրա հետաքրքրութեան տեսակը:

Դասաւանդութեան սեպուհ պարտականութիւնն է ուսանելու ձգուումը՝ հետաքրքրութիւնը խնամել և գորեղացնել, որովհետև հետաքրքրութիւնը ոչ միայն միջոց է, այլ և նպատակ (տես II մաս Ա. գլուխ). և Հերբարտն իրաւաւացի կելպով նկատում է, որ առանց հետաքրքրութեան ձեռք բերած նիւթը մեռած և անօգուտ կապիտալ է: Ուսման ծրագիրը կազմելիս մենք արդէն ի հաշիւ ենք առել սանի հետաքրքրութիւնը. ուսման ընթացքն ևս նպաստում է հետաքրքրութեան գորեղանալուն. օրգանական-գենետական սկզբունքը մեծ կարևորութիւն է ստանում առաւելապէս այն աեսակէտից, որ նա հետաքրքրութիւնը կենդանի պահել կարող է: Բայց մենք չենք կարող ընդհանուր գիտակտիկայի սահմանում մի առ մի թուել այն միջոցները, որով կարելի է զարթեցնել և կենդանի պահել հետաքրքրութիւնը. մասնաւոր գիտակտիկան միայն կարող է ի նկատի առնել շատ բարդ հանգամանքներ, որ մենք այսուղ շօշափել անկարող ենք. բոլոր աշակերտները միանման չեն. կան նաև միակողմանի զարգացած աշակերտներ, որոնք, սակայն, չը պէտք է միակողմանի կերպով գատապարտուեն. բացի այդ չը պէտք է անտես առնել նաև հոգեպէս յետամնաց մանուկներին:

Ուսման ծրագիրն ու ընթացքը ընդհանուր ձեռք են սահմանում և չեն կարող աշակերտների անհատականութիւնն ի նկատի առնել. նրանք կենդանի և զօրեղ կը գաւանամ, եթէ համապատասխան գործադրութիւնները միանալ են առաջանական գործադրութիւնները, որոնք սակայն չեն պահպան կատարուել և առաջանական գործադրութիւնները առաջանական գործադրութիւնները առաջանական գործադրութիւնները, որոնք յաճախ չափից շատ են աշխատում և պակաս գնահատութեան առաջանական գործադրութիւնները, որոնք յաճախ չափից շատ են աշխատում և պակաս գնահատութեան առաջանական գործադրութիւնները:

այս դէպքում մեծ գործ կարող են կատարել ուսուցման արուեստը և ուսուցչի անձնաւորութիւնը. կենդանի խօսքն արգէն աւելի զօրեղ է ներգործում, քան մեռած տառը և ուսուցչի հետաքրքրութիւնը աշակերտի մէջ ևս հետաքրքրութիւն է զարթեցնում: Ով որ կամենում է ուսուցանել, չը պէտք է մեքենայաբար վարուի, որովհետև «ով որ ուսուցանում է առանց ի նկատի առնելու աշակերտի անհատականութիւնը, նուագում է մի այնպիսի գործիք, որի բոլոր լարելը բացակայում են» (Սոյ): Ուսուցիչը այն ժամանակ միայն կարող է արդիւնաւոր կերպով ուսուցանել, եթէ հանդէս կը գայ որպէս ամբողջ մարդ և իր անձնաւորութեամբ կը թափանցէ ամբողջ դասաւանդութիւնը. այդ դէպքում միայն ուսուցչի և աշակերտի մէջ կը հաստատուի ներքին կապ, որ և բարոյական զօրեղ ներգործութիւն կարող է ունենալ. ահա այս հանգամանքն ի նկատի ունեն շատերը, երբ պահանջում են, որ իւրաքանչիւր ուսուցիչ իր «սեփական մեթոդն» ունենայ: Բայց աշակերտի անհատականութեան նկատառումը յաճախ դժուարանում է այն պատճառով, որ նրա առանձնայատուկ հակումները սկզբնական շրջանում զարգացած չեն լինում և ամենափորձուած ու բարեխիղճ ուսուցիչն անգամ, եթէ դպրոցում մասնագիտական սիստեմով է դասաւանդում, կը դժուարանայ որոշել աշակերտների առանձնայատուկ ընդունակութիւնները և հակումները, մանաւանդ եթէ Կա զործ ունի միաժամանակ բազմաթիւ աշակերտների հետ. այդպիսի գալը զուրկ կը լինի բարոյական ներգործութիւնից, մինչդեռ դասաւանդութիւնը խիստ զօրեղ կրթական ոյժ է ունենում, երբ հանդէս են գալիս ուսուցչի և աշակերտի անհատականութիւնները անխարդախ կերպով. հակառակ դէպքում, ամենից շատ վախկոտ, թոյլ և յետամնաց երեխաները, որոնք յաճախ չափից շատ են աշխատում և պակաս գնահատութեան առաջանական գործադրութիւնները:

բ) Ա Շ Խ Ա Տ Ա Ց Ի Թ Ո Ւ Ի Ւ Ն

Աշխատասիրութիւնն ևս, այսինքն՝ աշխատանքին ընտելանալը խիստ կարևոր կրթական մոմենտ է. աշխատասիրութեան միջոցով նախ պէտք է իւրացուի ուսման նիւթը. ուրեմն աշխատասիրութիւնը անհրաժեշտ է ուսման յաջող ընթացքի համար. բայց աշխատասիրութիւնը դասաւանդութեան համար սոսկ միջոց չէ, այլ և նպատակ. ուրեմն ուսման արուեստի պաշտօնը չպիտի լինի «խաղալով սովորեցնել». սակայն ուսման արուեստը պէտք է հոգ տանէ, որ աշխատանքի բեռը համապատասխան լինի աշակերտի ուժերին, այդ բեռը ոչ շատ թեթև պէտք է լինի և ոչ էլ շատ ծանր, որովհետեւ աշակերտի ուժերը հետզհետէ պէտք է զարգանան և զօրեղնան և ոչ թէ ժամանակից առաջ բեկուեն. նախադասելի է դանդաղ, բայց տևական աշխատանքը: Աշխատանքի որոշ սահմանում պէտք է կանդ առնել և հաշիւ տալ, թէ որչափ բան կատարուած է և ինչքան գեռ մնում է կատարելու, որովհետեւ աշխատանքը մարդու յուսադրուց է, երբ նրա սահմանները տեսանելի են և վհատեցնում՝ երբ անսահման է թւում: Աշակերտի աշխատասիրութիւնն առաւելապէս այնտեղ է երևան գալիս, ուր կենդրոնացած է նրա հետաքրքրութիւնը, սակայն նա չպէտք է միշտ հետաքրքրութեան արդիւնքը լինի, այլ պէտք է նաև այն դէպքում հանդէս գայ, երբ դասաւանդութեան նիւթը պակաս հետաքրքիր է կամ բընտ հետաքրքիր չէ. այդ բանը անհրաժեշտ է հէնց այն պատճառով, որ դասաւանդութիւնը սովորաբար հակումն է ցոյց տալիս միօրինակութիւն և միաձեռւթիւն պահպանելու. ուրեմն անհրաժեշտ է աշխատասիրութիւնը, որպէսզի դժուարութիւնները յաղթուեն, մինչև որ հետաքրքրութիւնն առաջ գայ որպէս հետևանք. արդէն դպրոցում իսկ նկատելի է աշակերտների մէջ «միակողմանի հետաքրքրութիւն», որի առաջն առնելու են մի կողմից ուսման

ծրագիրն ու ընթացքը՝ ուսման նիւթերի մէջ փոխադարձ կապ հաստատելով, միւս կողմից ուսուցիչը՝ իր դիդակտիկական արուեստով:

գ) Ո Ւ Շ Ա Դ Ր Ո Ւ Ի Թ Ի Ւ Ն

Եթէ աշակերտը ուսման նիւթը հետաքրքրութեամբ է իւրացնում, նշանակում է ուսուցչին ուշադրութեամբ է հետևում. ուրեմն ուշադիր լինե՝ նշանակում է հետաքրքրութեամբ իւրացնել. Եթէ առարկան ըստ ինքեան հետաքրքիր է՝ ուշադրութիւնն անմիջական է լինում, ինչպէս օրինակ ներկայացնող դասի՝ ընական պատմութեան, աշխարհազրութեան և պատմութեան դասերի ժամանակ. իսկ եթէ առարկան հետաքրքիր է դասնում ուրիշ հանգամանքների հետ առնչութեան մէջ մտնելով, օրինակ, երբ այն նախապատրաստութիւն է յաջորդի, հիմք ապագայ հասկացողութեան կամ ենթագրութիւն գործադրութեան համար, ուշադրութիւնը միջնորդական է դասնում: Դասաւանդութեան մէջ ուրեմն ուշադրութիւնը կարելի է արթուն պահել կամ անմիջապէս առարկայի միջոցով և կամ այն հետաքրքիր նիւթի հետ առնչութեան մէջ գնելով:

Եթէ առարկան անմիջապէս հետաքրքիր է, ուշադրութիւնը արթուն կարելի է պահել տպաւորութեան համապատասխան զօրեղութեամբ. բայց այդ դէպքում մի միջն չափ պէտք է պահպանել, որովհետեւ ազօտ տպաւորութիւններն անկարող են ուշադրութիւնը ու ուշադրութիւնները: Ուշադրութեան արգելք կացող են հանդիսանալ նաև հակադիր պատկերացումները և պատկերացումների խումբը. Հերբարտն ուշադրութեան կենդրոնացման համար պահանջում է ա) տպաւորութեան զօրեղութիւն. բ) տպաւորութեան խնայողութիւն. գ) խուսափումն հակադիր պատկերացումներից, որ կարող են խանգարել մի անգամ շահագրգուռած պատկերացումները և դ) հաւա-

սարակշուրիւն մի անգամ շահագրգոռւած պատկերացումների մէջ:

Տպաւորութեան զօրեղութիւնը պայմանաւորւում է զգայարանական տպաւորութեամբ. պայծառ գոյները, բարձր հնչիւնները աւելի պարզ են տպաւորւում, քան աղօտ գոյները և մեղմ հնչիւնները. պատկերն աւելի հեշտ է գրաւում ուշադրութիւնը, քան նկարագրաւթիւնը: Տպաւորութեան խնայողութեան համար պէտք է միենոյն առարկայի վրայ երկար կանգ չառնել, որովհետեւ միակերպութիւնը տաղտկալի է և բժացնում է տպաւորութիւնը: Դասախոսութիւնը չպէտք է ձգձըգուի և զուրկ լինի բազմօրինակութիւնից, ապա թէ ոչ աշակերտի մտքերը կըզբաղուեն կողմանակի բաներով և ուշադրութիւնը կցըուի: Աակայն ուշադրութիւնը անհաստատ կը լինի, եթէ դասաւանդութիւնը խիստ արագ է ընթանում և տպաւորութիւնները իրար վայրկենաբար են յաջորդում: Հակադիր պատկերացումներից խուսափելու համար օգտակար է յամբաքայլ յառաջընթացութիւնը. իսկ պատկերացումների մէջ հաւասարակցութիւն հաստատելու համար դասի մէջ պէտք է հանգստեան կէտեր որոշուեն, որպէսզի աշակերտի միտքը կանգ առնել և ամփոփուել կարողանայ:

Ուսման բոլոր նիւթերը հաւասարապէս անմիջական հետաքրքրութեան առարկա չեն. այդ գէպքում ուշադրութիւնը պէտք է գրաւել. առարկան որ և է կողմով իր գործադրութեան շրջանի կամ այլ հետաքրքիր նիւթերի հետ, առընչութեան մէջ գտելով. արուեստների կը գործնական գիտութիւնների մէջ գերակշում է միջնորդական հետաքրքրութիւնը:

դ) ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԺԵՔԻ ԸՄԲՈՆՈՒՄԸ

Կրթական աշխատանքի արժեքի ըմբռնումը հետաքրքրութեան, աշխատասիրութեան և ուշադրութեան հետեանքն է լինում. այդ հասկացողութիւնը պէտք է աղ-

նիւ լինի, այսինքն, ազնիւ դրդիչները պէտք է նրա մէջ գերիշխող լինեն. բանքարը չը պէտք է թագցնել, այլ ազնիւ ձեռվ գործադրել. գիտութիւններ և արուեստներ պէտք է ձեռք բերել հասարակութեանը օգտակար ձեռվ ծառայելու համար, բայց նոյնչափ արժանաւոր և վաեմ դործ է աշխատել նաև իր կատարելութեան համար. համեմատաբար աւելի պակաս արժէք ունի բացառապէս իր սեփական շահի նկատառումը:

Թէ արգեօք հետաքրքրութիւնը, ուշադրութիւնը և աշխատասիրութիւնը դասաւանդութեան ընթացքում ինչ ձեռվ պէտք է գործադրուեն, կզարդուի, եթէ ի նկատի առնենք իւրացման հոգեբանական մոմենտները և միմեանց նկատմամբ կիրաւնենք. կտեսնենք, որ ա) ուսման նիւթը պէտք է ուշադրութեամբ և հետաքրքրութեամբ ստացուի. բ) հակացողութիւնը պէտք է հետաքրքրութեամբ, ուշադրութեամբ և աշխատասիրութեամբ ձեռք բերուի. գ) ըստացածի և հասկացածի ամրապնդումը և գործադրութիւնը աշխատասիրութեամբ կատարուի և պահպանուի:

և պ պ ե ր Յ ե պ ի Ա

Հեղբարտը որոշում է երկու տեսակ ուշադրութիւն՝ սկզբնական և ապարեցեպտիւ: Սկզբնական ուշադրութիւնը հետեանք է ստացութեան և սովորաբար կապուած է լինում անմիջական հետաքրքրութեան հետ, մինչդեռ ապարեցեպտիւ ուշադրութիւնը հետեանք է մտաւոր իւրացման: Ապարեցեպտիւ ուշադրութիւնը իր մէջ պարունակում է հոգեբանական երեք մոմենտներ. ա) նախ պէտք է ստացուեն պատկերացումներ. բ) պէտք է վերաբուժութեան նոյնատեսակ նախկին պատկերացումները և գ) միան միմեանց հետ: «Ապարեցեպտիւն պէտք է ամբողջ գասաւանդութեան միջոցին գործունէութեան մէջ լինի, որովհետեւ դասաւանդութեամբ միմիայն խօսքեր են մտակարարուում, այն ինչ խօսքի իմաստին համապատաս-

խանող պատկերացումները ունկնդրի ներսիցն են բղխում. եթէ ապակեցեպտիւ ուշադրութիւնն իր գերի մէջն է, պէտք է ըստ կարելոյն աշխատել այն չխանգարել. ապակերցեպտիւ ուշադրութիւն առաջ բերելու համար, աշակերտին, նախ քան աշխատանքն սկսելը, պէտք է փոխադրել այն մտաւոր շրջանը, որին պատկանում է կատարելիք աշխատանքը» (Հերքարտ):

Զպէտք է մոռանալ, սակայն, այն հանգամանքը, որ յաճախ աշակերտի կամ ունկնդրի մէջ կարող է բացակայել այս ազատ և ներքին գործունէութիւնը՝ ապակեցեպցիան. ուսուցման արուեստի պաշտօնն է այս դէպքում օժանդակ միջոցներ ստեղծել մատակարարելի նիւթի մըտաւոր իւրացման համար. նա պէտք է նոր նիւթը պատկերացնելի դարձնէ՝ նախկին ծանօթութիւնների և պատկերացումների հետ նոյնութեան, նմանութեան, հակառագրութեան և այլ տեսակէաններից առընչութեան մէջ դնելով, որովհետև միմիայն վերաբարպեալ պատկերացումներն են հնարաւոր դարձնում ստանալիք նիւթի մտաւոր իւրացումը. ապակեցեպտիւ միջոցներ կարելի է գտնել աշակերտի մտքի շրջանում. այսպէս օրինակ, հայրենի երկրի ծանօթութիւնը յենակէտ կարող է գտնալ ընդանուր աշխարհագրութեան իւրացման համար:

Ապակեցեպցիան, ինչպէս տեսնում ենք, ընթանում է հոգեբաննօրէն. սակայն առարկանների էութեան մէջ ևս կարելի է գտնել ապակեցեպտիւ միջոցներ. Իթէ պարզում է առարկանների յարաբերութիւնը ըստ ստորակարգութեան, եթէ որոշում են մի գաղափարի յատկանիշները, կամ բարձր (սեռական) գաղափարներից սահմանումով եզրակացութիւններ հանուում, եթէ վերլուծական ճանապարհով սիստեմներ են կազմւում կամ համագրական ճանապարհով հետևանքն ու ներդործութիւնը որոնուում, ապակեցեպցիան ընթանում է տրամաբաննօրէն. մտքի այսօրինակ տրամաբանական գործողութիւնները հնարաւոյ

են դարձնում մտաւոր իւրացումը՝ արտայացութեան ձևից, գաղափարից, հիմքից, հետևանքից և այն (անուանական և իրական հասկացողութիւն): Այս գէպքում ևս մտաւոր իւրացումը կատարւում է վերաբարպեալ պատկերացումների միջոցով. սակայն, ինչպէս ասացինք, ապակեցեպցիան ընթանում է տրամաբաննօրէն:

Զը պէտք է մոռանալ, որ ապակեցեպցիան յաճախինքն իրանից է կատարւում. և սովորաբար գասաւանդութեան միջոցին այդպէս էլ լինում է. ուրեմն ուսուցիչը չը պէտք է միշտ ապակեցեպտիւ միջոցներ առաջարկէ, ապա թէ ոչ, կաշխատի պարզել այն, ինչ որ արդէն պարզ է:

Դ) ԱՄՐԱՊՆԴՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Դասաւանդութեան ընթացքի յաջողութիւնն ու արագութիւնը կախուած է, ինչպէս տեսանք, ապակեցեպցիայի յաջողութիւնից. սակայն հարկաւոր են նաև միջոցներ, որ ստացուած նիւթը ոչ միայն իւրացուի, այլ և ապաւորուի ու ամրապնդուի մտքի մէջ. այս նպատակին կարելի է համել վարդութեամբ և գործադրութեամբ. յիշողութիւնը չը պէտք է արհամարհուի յօդուտ հասկացողութեան. որոշ չափով ճշմարտութիւն է պարունակում հին լատինական խօսքը. «tantum scimus, quantum memoria tenemus» (այն գիտենք, ինչ որ մտքում պահում ենք): Հին ժամանակը, ինչպէս գիտենք, յիշողաբար իւրացմանը մեծ կարենութիւն էր տրւում և շատ ժամանակ էր նուիրւում անզիր անելուն. մի անգամ սովորածը յիշողութեան մէջ ամուռ պահելու համար միակ միջոցն էր համարւում կրկնութիւնը. այդ բանը դարձեալ վկայում է լատինական խօսքը. «repetitio est mater studiorum» (կրկնութիւնն է մայր ուսումնակների), որ իր մէջ որոշ չափով ճշմարտութիւն է պարունակում: Սակայն նոր ժամանակը սահմանափակել է յիշողաբար իւրացնելիք նիւթի ծաւալը. մենք այժմ ոչ

ժամանակ և ոչ միջոց ունենք մեր բոլոր սովորած բաները յիշողութեան մէջ պահելու, այդ պաշտօնը մեզ համար կատարում են հանրագիտակ բառարանները (էնցիկլոպեդիաները). սակայն այդ գեռ չէ նշանակում, որ յիշողութիւնն այլ ևս պաշտօն չունի կատարելու, այլ յիշողութեան աշխատանքի առարկայ պէտք է լինի այն, ինչ որ գործադրուելու է. իսկ վարժութիւն պէտք է ձեռք բերել գործադրութեան միջոցով և որա համար: Ինչ որ գործադրութեամբ կարող է ամրապնդուել, պէտք չէ, որ առանձնապէս վարժութեան նիւթ դառնայ. սակայն, ինչ որ անհրաժեշտ է, որպէս զի գործադրութիւնը հնարաւոր դառնայ, պէտք է նախօրօք ամրապնդուած լինի:

§ 3. Խւացման տամաբանական մամնեների գործադրութիւնը

Ուսման ընթացքը սահմանելիս արդէն գտանք, որ հաւասարաչափ կարևոր են, թէ վերլուծական և թէ համագրական մեթոդները: Այժմ պէտք է բացատրուի, թէ ինչ ձեռվ պէտք է գործադրուեն այդ մեթոդները:

Կարելի է սկսել ընդհանուրից և համնել մասնաւորին, մտքից՝ արտայայտութեանը կամ ընդհակառակը մասնաւորից դիմել ընդհանուրին, արտայայտութիւնից՝ դէպի միտքը: Վերլուծութիւնը հնարաւորութիւն է տալիս թանձրացեալը մտաւորապէս մշակելու և վերացման ու ընդհանրացման միջոցով առաջնորդում է դէպի ընդհանուրը. վերացականը պատկերացւում է թանձրացեալի միջոցով. ընդհանուրը (խօսք, գաղափար, միտք) անբովանդակ է մնում, եթէ օրինակի հետ առընչութեան մէջ չէ մտնում. Թանձրացեալն ևս ըմբռնւում է վերացականի միջոցով, որովհետեւ միմիայն ընդհանուրն է հնարաւորութիւն տալիս աչքածել և կարգաւորել օրինակները, մտքով թափանցել և տիրել նըանց. գասաւանդութեան համար հաւասարապէս կարևոր են ինչպէս մտքերը հայեցողական դարձնելը, նոյնչափ և հայեցածը՝ գննածը մտաւորապէս մշա-

կելը. մտաւոր իւրացումը կատարւում է այս անընդհատ ելեւջով, չնորհիւ ապահեցեպցիայի և տրամաբանական յարաբերութեանց (գերադասութիւն, ստորադասութիւն և համադասութիւն) պարզաբանութեան:

Հարց կարող է ծագել, թէ դասաւանդութեան միջոցին այս երկու տրամաբանական մեթոդներից որին պէտք է գերապատութիւն տալ: Եթէ ինկատի առնելու լինենք, որ մտաւոր իւրացումը կատարւում է ստացութեամբ, հասկացողութեամբ և ամրապնդմամբ, (էմպիրական, տրամաբանական և տեխնիքական մոմենտներ) ակներև կը դառնայ, որ ընդհանրապէս պէտք է թանձրացեալից սկսել և դիմել դէպի վերացականը, հայեցողութիւնից դէպի գաղափարը, երևոյթից՝ օրինակից՝ կանոնը, անհատից՝ սեռը, դիտողութիւնից՝ մտածողութիւնը. սակայն կարող է դէպի պատահել, երբ կարելի կը լինի նաև հակառակ ընթացք բռնել. երբ օրինակ, գաղափարը տուած է, կարելի է սահմանել նրա բովանդակութիւնը և առաջ գնալ մինչև հայեցողութիւնը:

Եթէ լեզուի գասաւանդութիւնը մի և նոյն ժամանակ իրական ուսուցումն է լինելու և ընդհակառակը իւրաքանչիւր իրական ուսուցումն նպաստելու է լեզուական գիտակցութիւն և հմտութիւն ձեռք բերելուն, բնական է, ոս այդպիսով կը կապուեն հայեցողութիւնը և գաղափարը: Օտար լեզուներ սովորելիս ցանկալի է, որ խօսքերը հայեցողական՝ իրազննական գառնան պատկերների միջոցով. քերականութեան մէջ կանոնն ընդհանուրն է, օրինակը մասնաւորը. աններելի և գատապարտելի սխալ կը լինէր նախ տալ կանոնը, ապա օրինակը:

Մաթեմատիկայի մէջ թէօրիան ընդհանուրն է, օրինակը՝ մասնաւորը. մինչդեռ քսեման կապում է երկուսը, որովհետեւ նա հայեցողական է և մի և նոյն ժամանակ արտայայտում է ընդհանուրը. մաթեմատիկայի մէջ ու-

րեմն հեշտութեամբ կարելի է ընդհանութը հայեցողական դարձնել:

Ինչպէս մաթեմատիկայի մէջ գերիշխում է վերացականը, այսպէս էլ պատմութեան և ընական զիտութիւնների մէջ՝ թանձրացեալը. սակայն պատմութիւնն էլ յաճախ գործ է ածում ընդհանուր և վերացական գաղափարներ, որ նախապատրաստուած պէտք է լինեն համապատասխան մասնաւոր ծանօթութիւններով. այդպիսով միայն աշակերտը կը կարողանայ հասկանալ բոնակալութիւն, ուամկավարութիւն, սահմանադրութիւն, յեղափոխութիւն, բարենորոգում պատմական գաղափարները և ձեռք բերել մնայունը պատմական երևոյթների հոսանքում. այս դէպքում ևս ուրեմն պէտք է վերլուծել և համադրել:

Բնական զիտութիւններն ես չեն բաւականանում միմիայն թանձրացեալ օրինակներով, այլ գործ են ածում նաև ընդհանուր զաղափարներ. դասաւանդութեան միջոցին էլ չը պէտք է միայն նիւթը կուտակել, այլ հոգ տանել, որ նիւթը մտաւորապէս մշակուի. չը պէտք է միայն բաւականանալ տեսակով, կամ առանձին իրողութիւնով, այլ պէտք է դիմել դէպի սեռը և օրէնքը. հայեցողութեանը պէտք է բաւարարութիւն տալ, բայց և չարհամարհել գաղափարը. Դասաւանդութիւնը ապարդիւն կը լինի, եթէ նա միմիայն նիւթ է մատակարարում և այդ չէ մշակում աշակերտի մտածողութեան համար:

§ 4. Ուսման նիւթի յօդաբաշխման արժեքը ստացութեան, հասկացողութեան եւ ամրապնդման համար

Դասաւանդութեան միջոցին պէտք է ի նկատի առնել աւանդելի նիւթի բնական յօդաբաշխութիւնը, որպէս զի սանը հեշտութեամբ այն իւրացնէ. դիգակտիկական ձեակերպութիւնը արդէն նիւթի յօդաբաշխման համար ընդհանուր տեսակէսներ տուեց. և մենք դտանք օրդա-

նական միութեան և գենետական յաջորդութեան սկզբունքները. Դիգակտիկական արուեստը պէտք է գործադրէ դիգակտիկական ձեակերպութեան սահմանած սկզբունքները:

Նիւթի յօդաբաշխումը, ինչպէս յիշեցինք, կարեւոր է իւրացման հեշտութեան համար: ա) Ստացութիւնը հեշտանում է, եթէ ուսման նիւթի մասերը իրարից որոշակի են զանազանում: բ) Հասկացողութիւնը դիւրին է դառնում, եթէ ի նկատի է առնուում մասերի յարաբերութիւնը, կապակցութիւնը և գրութիւնը ամբողջութեան մէջ. և երբ բոլոր մասերը ամփոփուում են մի կարգաւորեալ սիստեմում: գ) Վարժութեան և գործադրութեան համար նպաստաւոր են շարժական անդամները, որոնցով կարելի է հեշտութեամբ զանազան տեսակ բարդումներ անել, իսկ յիշաղութիւնն ամբազնելու համար կարեւոր են կարճ, բայց ամուր զուգորդուած շարքեր:

ա.) Ուսուցման արուեստը հին ժամանակներից սկսած մեծ կարեւութիւն է տուել նիւթի պարզութեանը, իսկ դրա համար առաջնակարգ ծառայութիւն կարող է մատուցանել նիւթի բաժանումը. այդ վկայում է նաև հին լատինական խօսքը՝ qui bene distinxuit, bene docet. (նա է լաւ ուսուցանում, ով լաւ է բաժանում): Նիւթի բաժանումը կամ յօդաբաշխումը չը պէտք է կամայական լինի, այլ, ինչպէս յիշեցինք, որոշ սկզբունքից բղխած. Նիւթի քմահաճ անդամահատումը, նամանաւանդ եթէ միութիւնը աչքաթող է արւում, իւրացումը աւելի է դժուարացնում, քան թէ հեշտացնում. մասերն ուրեմն ոչ շատ մեծ պէտք է լինեն և ոչ շատ փոքր. եթէ մեծ լինեն, չեն պարզուի, եթէ փոքր լինեն, չեն որոշուի: Նիւթի բաժանումը այն ժամանակ կարելիէ յաջող համարել, երբ իւրաքանչիւր անդամ իր արժեքի համաձայն կարեւութիւն կը ստանայ. Երկրորդականը չը պէտք է աւելի զնահատուի, քան զըլ-խաւորը. մի անդամը չը պէտք է խիստ պայծառ լուսաւորուի, իսկ մնացածները մութ մնան. մի զուցէ այդպի-

սով ամբողջութեան մասին թիւր հասկացողութիւն կազմուի. պարզութիւնը պահանջում է, որ լոյսը և ստուերը ուղիղ բաժանուեն: Պարզութեանը վնասում է նիւթի սեղմ և կարճ ձեւը. ստացութեան համար աւելի նպաստաւոր է վիպական ընդարձակութիւնը, քան թէ պատմական տախտակը կամ անունների ու թուերի չոր ցուցակը: Աշակերտին ոչ միայն կենդանու կմախքը պէտք է առաջարուի, այլ կենդանին իր ամբողջ շինուածքով և նոյն իսկ եթէ հնարաւոր է, ողջ կենդանին, իր արտայայտիչ գեղեցկութեամբ:

բ) Վերոյիշեալից սակայն գեռ չըպէտք է հետևեցնել, որ կենդանու կմախքը կամ պատմական տախտակը դասաւանդութիւնից գուրս պէտք է նետուեն. հասկացողութեան և ամրապնդման համար հարկաւոր են սեղմ տեսութիւններ և շարքեր այն ամենի, ինչ որ նախապէս լրիւծաւալուել է հայեցողութեան առաջ. այդպիսով ամփոփւում է ցըռւածը և տարածուածը և խառնում են կարեւորն ու էականը որոշ և ամուր ձեի մէջ: Նիւթի կարեւոր և էական կողմն ըմբռնելով, պարզում է մեզ համար նրա հիմնական իդեան, ելակէտը և կէտ նպատակին: Հասկացողութեան նպատակն է իցերի հիմքը, էութիւնը ըմբռնել. իսկ այդ հնարաւոր է, երբ զատում է էականը ոչ էականից. այդ միջոցով նաև երևան կը գան մասերի ներքին առընչութիւնն և օրգանական կապը. ուսուցիչը կամ անձամբ պէտք է պարզէ այդ ներքին կապը և կամ աշակերտին գտնել տայ. էականի զատմամբ և ներքին կապի ըմբռնումով հասկացողութիւնն արդէն պատրաստ է. յաճախ մի սեղմ տեսութեամբ կամ պատմական տախտակով կարելի է ցուցադրել և հայեցողական դարձնել այս ներքին կապը. սակայն ուսուցման արուեստի պաշտօնն է դասսանդութեանն այնպիսի ընթացք տալ, որ այս տեսութիւնն ինքն իրան կատարուի, որպէս արդիւնք նախորդ աշխատանքի:

գ) Այսպիսի տեսութիւնները նպաստում են յիշողութեան մէջ տպաւորելուն և ամուր պահելուն, յիշողութեան աշխատանքը հեշտացնում են կարճ և սեղմ շարքերը. անհրաժեշտ չէ, որ շարքերի մէջ ներքին կապ պահպանուի. բաւական է, որ նրանց մէջ արտաքին նմանութիւն և յաջորդութիւն լինի (հնչիւնի, յանդի, ոտքի ևայլն): Յիշողութեան աշխատանքը դիւրացնելու համար ցանկալի է զատել ոչ էականը և ոչ կարեւորը, որպէս զի նիւթի կուտակումը չըխանդարէ էականը մտապահելուն և վստահ յիշելուն. անպայման պէտք է զատել և հեռացնել այն ամենը, ինչ որ աշակերտն ինքը գտնել կամ լրացնել կարող է: Թուերի և անունների չոր ցուցակը և պատմական տախտակը որչափ էլ վնասակար են որպէս դասագրքեր, նոյնչափ օգտակար կարող են լինել որպէս յուշամատեաններ:

Յիշողութեանը նպաստում է բացի վերոյիշեալից նաև կրկնութիւնը, որի միջոցով մի անգամ սովորածը ամուր տպաւորւում է յիշողութեան մէջ (պարզ կրկնութիւն), կամ յիշողութեան մէջ թերին ու պակասը ուղղում և լրացնում է (լրացուցիչ կրկնութիւն), ուսուցչի համար պարզում է, թէ որչափ է առաջափիմել աշակերտի հասկացողութիւնը (վերստուգող կրկնութիւն), և վերջապէս հնարաւորութիւնն է տալիս սովորածը ազատ գործադրելու (հրահանգող կրկնութիւն):

Բացի յօդաբաշխումից և կրկնութիւնից, յիշողութեան գործը դիւրացնում են նաև գործադրութիւնն ու վարժութիւնը. ինչ որ յաճախ գործադրութիւն է, հարկաւոր չէ առանձին վարժութեան նիւթ դարձնել. բայց ինչ որ անհրաժեշտ է, որպէս զի գործադրութիւնը հնարաւոր դաւնայ, կարեւոր է նախօրօք իւրացնել. վարժութիւնը կատարում է հասկացած նիւթի նոր դարձուածներով, շընուներով և բարդումներով, որոնք կենդանի են պահում հետաքրքրութիւնը, նպաստում են առարկայի խորը

թափանցելուն և յիշողութիւնը սրելուն. ուրեմն պէտք է կարելի եղածի չափ օգտուել նրանցից։ Աշխարհազրութիւնը գործադրում է այդ միջոցները, երբ դասաւանդութեան միջոցին որոնել և գտնել է տալիս աշխարհազրական երևյթների նոյնութիւնը, նմանութիւնը, տարբերութիւնը և հակադրութիւնը։ Նոյնն է անում և պատմութիւնը, եթէ պատմական մի ամփոփ շրջան զանազան տեսակէտներից նորից դիտել է տալիս. նոյնը կարելի է անել նաև լեզուի դասաւանդութեան միջոցին, երբ մի անգամ ընթերցածը զանազան և նոր տեսակէտներից աշքի ենք անցկացնում։

Բացի վերոյիշեալներից, կամ նաև զանազան արուեստական միջոցներ, յիշողութեան բեռը թեթևացնելու համար. դասաւանդութեան միջոցին պէտք է օգտուել այդպիսի միջոցներից, բայց պէտք է զգուշանալ չափազանցութիւններից։ Զանազան *versus memoriales*-ները, պատմական անձնաւորութիւնների գործածած կարճ նախադասութիւնները, «բանուկ» և օտար խօսքերը հեշտութեամբ են մնում յիշողութեան մէջ։ Խմբովին և բարձրածայն ընթերցանութիւնը, մարմնական շարժումները (խօսքը շեշտելիս ձեռքի շարժումը), ինչպէս նաև յուշարուեստի զանազան հնարները օժանդակ միջոցներ են, սրանցից կարելի է խելացի կերպով օգտուել։

§ 6. Դասաւանդութեան ձեւեր

ա) չ ե թ ի Ս Ա Կ Ա ն Կ Ա Մ Դ Ա Կ Ա ն Դ Ա Ս

Եթէ ուսման նիւթն աւանդելու միջոցին վերոյիշեալ բոլոր տէսակէտներն ևս ի նկատի առնուելու լինեն, այսինքն ինսամբ տարուի ստացութեան, հասկացողութեան և վարժութեան կամ ամրապնդման համար, մի և նոյն ժամանակ առջին գործադրուի անալիզը կամ սինթէզը և ուսման նիւթը յօդաբաշխութի՝ պահպանելով իր օրգանական

—զենետական բնոյթը, կարևի կը լինի երաշխաւորել թէ նիւթի յաջող աւանդման և թէ սանի բուզմակողմանի հետաքրքութեան զարգացման համար։ Դասաւուն, սակայն, պէտք է ի նկատի առնէ, որ սանին մտաւոր սնունդ մատակարարողը միայն ինքը չէ. ուստի և չպէտք է փորձէ մեռցնել յօդուտ իր գասի՛ սանի գէպի ուրիշ կողմն ուղղուած հոգեկան գործունէութիւնը հետաքրքութիւնը. խիստ վտանգաւոր բան է դասաւանդելի նիւթի քանակով «մտաւոր ծանրաբեռմամբ» ընդհատել հոգու այլ կողմն ուղղուած զարգացումը. բոլորովին այլ բան չ, երբ դասաւանդութեանը յաջողւում է իր շրջանակից դուրս ևս գործել և ազատ գործունէութեան ձգտումը կենդանի պահնել. այդ գէպը նաև կընպաստէ նաև ուրիշ դասերին, եթէ վերջիններս հետաքրքրում են, թէ աշակերտը ինչ ծանօթութիւններ է բերում ուրիշ մասնագիտութիւններից և փորձառութիւնից։ Անհրաժեշտ է, որ սանի մաքերը, որոնք փորձառութիւնից են առել իրանց սկիզբը, ուսուցչի առաջնորդութեամբ վերլուծուեն, ճշտուեն և լրացուեն, որ ուսուցիչը օգնութեան համնի աշակերտի խառնաշփոթ զաղափարներին, որպէսզի վերջինիս փորձառածը և սովորածը ուղիղ յարաբերութեան մէջ զնէ և փորձառութեան տուած պաշարին պարզութիւն և լեզուուկան արտայայտութիւն ընծայէ. այսպիսով որոշուած կը լինի ինսթրուտութեան ենթակայական կողմը. բայց այստեղ կայ նաև մի առարկայական կողմ. երբ մենք աւանդելի նիւթն ենք ՚ի նկատի առնում, տեմնում ենք, որ յաճախ դասաւանդութեան միջոցին աւանդածը աշակերտի համար միշտ նորութիւն չի լինում. այստեղից ուրեմն հետևում է, որ ամեն ուսման նիւթ միշտ միևնույն ժամանակ ուսուցման նիւթ չէ. եթէ դասաւուն այս հանդամանքն աչքաթող անէ և ինչ որ ուսուցման ընթացքում հանդիպելու լինի, հաւասարաշափ որպէս նորութիւն աւանդէ, հետեանքն այն կը լինի, որ կըցրուի սանի ու-

շագրութիւնը և կը թուլանայ հետաքրքրութիւնը. դասաւանդութեան պաշտօնը պէտքէ լինի այս դէպքում շահագործել սանի բերած ծանօթութիւնների պաշարը և նպաստել որ աւանդած նիւթը ուղիղ կերպով ճիւղաւորուի մտքէ շրջանում հին պաշարի մէջ, այլապէս ասած առաջ բերել կապակցութիւններ հնի և նորի մէջ. այս նպատակին հասնելու համար պէտք է գարգացնել սանի մտաւոր գործողութիւնը. աշակերտը ինքը պէտք է գտնէ, թէ իր առաջուայ ծանօթութիւնը ինչպիսի կապակցութեան մէջ պիտի մտնէ նորի հետ. նա պէտք է մտքի ինքնուրոյն գործունէութեամբ նման առարկաներից շարքեր կազմէ, նըրանց յատկութիւնները համեմատէ. այդպիսով առարկայի մտսին նրա ունեցած առաջուայ պատկերը բոլորովին այլ կերպ կը լուսաբանուի: Դասաւանդութիւնը պէտք է նըրապատէ, որ շատ բաներ աշակերտը ինքը զժնէ. և եթէ այդ բանը նրան յաջողուի, աշակերտը ձեռք կը բերէ նոր իմացութիւն, որը նրան չի ծանրաբեռնէ, այլ ընդհակառակը կուրախացնէ, ներշնչելով նրան սեփական ոյժի գիտակցութիւնը:

Որովհետեւ այդպիսի դասի նպատակը չէ նիւթ մատակարարել, այլ աշակերտի մտաւոր գործունէութիւնը կենդանի պահել, կարող ենք այն հերիստական (գտական) դաս անուանել, որովհետեւ նրա միջոցով նոր հայեցողութիւններ են ձեռք բերում, գտնուում, մինչդեռ իսկական՝ ներկայացնող դասը (թէտիկականը) նոր նիւթ է մատակարարում: Հերիստական դասը վերլուծում է սանի մըտքերը, սակայն նա չը պէտք է բաւականանայ միմիայն դըրանով, այլ պէտք է ձգուե որևէ կողմով բազմացնել ծանօթութիւնը և խմացութիւնը:

Եթէ հերիստական դասը առաւելապէս ստացութիւնն ի նկատի ունի և զբաղւում է էմպիրական նիւթերով, կարելի է այն էմպիրական հերիստական դաս անուանել. իսկ եթէ, ընդհակառակը, նրա նպատակն է դասաւանդութեան

մատակարարած նիւթը ինքնագործունէութեան ուժի վերածել և գործադրել՝ կարող է կոչուել տեխնիքական հերիստական դաս: Էմպիրական հերիստական դասը յինւում է փորձառութեան վրայ, այն ինչ տեխնիքական հերեստականը առաջնորդում է դէպի նորանոր փորձառութիւններ. երկուսի մէջ գտնուում է թէտիկական դասը: Մենք արգէն յիշատակել ենք, որ ստացութեան և գործադրութեան մէջ գտնուում է ըմբռնումը կամ մտաւոր իւրացումը. այլապէս ասած էմպիրական և տեխնիքական մոմենտների մէջ գտնուում է տրամաբանականը. այս տեսակէտից կարող ենք մի արամաբանական դաս ևս սահմանել, որի նպատակը պէտք է լինի գաղափարների, դատողութիւնների և եղրակացութիւնների միջոցով նոր իմացութիւններ ձեռք բերել: Սոկրատեան հերիստիկան, ինչպէս այդ Պղատառն իր դիալոգների մէջ ներկայացնում է, առաւելապէս տրամաբանական հերիստական բնոյթ է կրում: Տրամաբանական հերիստիկան գործադրութիւն կարող է գտնել մեկնաբանող և զարգացնող դասերի մէջ: Ընդհանրապէս հերիստական ընթացքի համար ամենալաւ հրահանգը կը լինէր, ոչինչ չասել, ինչ որ աշակերտը ասել կարող է և ոչինչ ցոյց չը տալ, ինչ որ նա գտնել կարող է: Դասաւանդութեան ընթացքում պէտք է ողջունուի իւրաքանչիւր միջոց, որ հնարաւորութիւն է տալիս աշակերտի կրաւորականութիւնը (reception) ընդհատել հոգեկան գործունէութեամբ (action): Հերբարտն այս առթիւնկատում է, որ վերլուծական (հերիստական) դասը անհամբեր է գարձնում ուսուցչին, բայց նոյնչափ անհամբեր է դառնում աշակերտը համադրական (թէտիկական) դասի միջոցին:

բ) Ն Ե Ր Կ Ա Յ Ա Յ Ն Ո Ղ Դ Ա Ս

Իւրացման աստիճանների համաձայն որոշեցինք դասաւանդութեան տարբեր ձևերը. (Գլ. Դ. § 3.), նայած թէ

նիւթի մէջ էմպիրական, տրամաբանական թէ տեխնիքական մոմենտն է գերակշռում, դասաւանդութիւնն ևս տարբեր ձև է ընդունում: Սկզբից արդէն մասնացոյց արինք այն համգամանքի վրայ, որ դասաւանդութեան տարբեր ձևերը սերտ կերպով պէտք է շաղկապուեն միմեանց հետ, իսկ թէ այն ինչ ձևով պէտք է կատարուի, կը պարզուի «Փորմալ աստիճանների» ուսմունքի մէջ (տես Գլ. Ե Տ. 6.), որը ցուցումներ կը տայ, թէ ինչպէս և ինչ կարգով պէտք է գործադրուեն ուսացման մեթոդները և դասաւանդութեան ձևերը մի դասաւանդական կամ մեթոդական «միութեան» ընթացքում: Դասաւանդութեան զիսաւոր ձևերի համար կարելի է սահմանել ընդհանուր նորմեր, որոնցով յատկապէս զբաղուելու է ուսուցման արուեստը:

Ներկայացնող դասի մէջ գերակշռում է էմպիրական մոմենտը, ներկայացնող դասի նպատակն է ա) տալ ծանօթութիւն կամ առաջ բերել նոր իմացութիւն. բ) նոր իմացութիւնը կարգաւորել սանի ամբողջական իմացութեան շըջանում, գ) հանդէս բերել նոր ծանօթութիւնն կամ իմացութեան կրթիչ ոյժը. բայց որովհետեւ մատակարելի նիւթը մասամբ կարող է ծանօթ լինել աշակերտին, (ամեն ուսման նիւթ ուսուցման առարկայ չէ. Գլ. Ե. Տ. 5.) ուսուցման արուեստի գործն է նիւթի ծանօթ մասերը երևան հանել, իսկ նոր և անծանօթ մասերը կապել նրանց հետ:

Ներկայացնող դասի նիւթի մի մասը յաճախ հնարաւոր է հայեցողական դարձնել. այդ դէպքում կունենանք ցուցական դաս. աչքով տեսածն աւելի լաւ է տպաւորւում, քան միայն ականջով լսածը. ուսուցիչը պէտք է միշտ արթուն լինի և ներկայացումը կենդանի դարձնէ, առարկաների, տեսարանների, պատմական վայրերի և անձնաւորութիւնների պատկերներով. պէտք է սակայն զգուշանալ չափազանցութեան մէջ ընկնելու վտանգից, տպա-

թէ ոչ աշակերտի մտքերը կը ցրուենք փոխանակ խորացնելու:

Ներկայացնող դասը՝ նիւթին, կարող է լինել պատմողական կամ նկարագրական: Պատմուում են, ինչպէս յիշել ենք, դէպքերը կամ եղելութիւնները. նկարագրուում են առարկաները, երեսոյթները, անձնաւորութիւններն և այլն: Պատմութիւնը զօրեղ ազգեցութիւն է թողնում մանկան հոգու վրայ և տաքացնում է նրա սիրատը. հետաքրքրութիւնն այստեղ ընդառաջ է գալիս դասաւանդութեանը: Փոքրիկ երեխաներն արդէն մեծ սիրով լսում են զանազան պատմութիւններ և նոյնը կրկնում. նըրանք չեն յոգնում միենոյն պատմութիւնը յաճախ լսելուց, եթէ միայն լաւ է պատմում: Դասաւանդութեան միջոցին, ի հարկէ, պատմութեան համար պէտք է ընտրել կլասիկ հատուածներ. վէպը՝ իւր հանգիստ ընթացքով և հարուստ բազմօրինակութեամբ կարող է օրինակ համարուել: Չպէտք է մոռանալ նաև, որ լաւ պատմութիւնը ոչ միայն աշակերափ ծանօթութիւնն է հարստացընում, այլ և զրգուում է նրա երեխակայութիւնը և սընունդ է տալիս մասնակցութեան և անձնուիրութեան զգացմունքներին: Նկարագրական դասն ևս, որ յաճախ միանում է ցուցականի հետ, նոյնչափ կարող է աշակերտի մէջ հետաքրքրութիւն արթնացնել և այն վառ պահել, յեթէ միայն ուղիղ ձևով գուծադրուի: Ներկայացնող դասի աջողութեան զիմանը գրաւականն է, որ ուսուցիչը կատարեալ կերպով տիրապետէ աւանդելի նիւթին. միմիայն նիւթի լրիւ և բազմակողմանի ծանօթութիւնը հնայտ աւորութիւն կը տայ ուսուցչին դասաւանդութեան միջոցին ընարել նիւթի յարմար մասերը և լուսաբանել. ուսուցման ոչ մի արուեստ չէ կարող ծածկել ուսուցչի ազիտութիւնը. ուսուցիչը պէտք է մատակարարելի նիւթը կապակցութեան մէջ դնէ նախորդ ծանօթութիւնների հետ, պէտք է ձիւղաւորէ այն աշակերտի հետաքրքրու-

թեան և մտքի շրջանում, ուսման բոլոր ճիւղերի մէջ փոշիադրձ յարաբերութիւն պէտք է ստեղծէ. ուրեմն նա պէտք է թէ աշակերտին լաւ ճանաչէ և թէ նիւթին լաւ ծանօթ լինի:

գ) Մ Ե Կ Ն Ա Բ Ա Ն Ո Ղ Դ Ա Ս

Թէպէտ մեկնաբանող դասի պաշտօնն է բացատրել նաև բնութեան առարկաները և արուեստի արտադրութիւնները (այս դէպէտում ցուցական դասը կը միանայ մեկնաբանականի հետ), բայց սովորաբար ի նկատի է առնւում առաւելապէս զբական երկերի մեկնութիւնը, որը և դասաւանգութեան ամենահին ձևն է համարւում: Դիդակտիկական մեկնութեան սրացունն է հնարաւոր դարձնել կարդացած բնագրի ուղիղ հասկացողուրինը: Բնագրը պէտք է աշակերտի համար ծանօթութեան անսպառագրիւր լինի և լեզուական կարողութեան համար օրինակ ու հրահանգ տայ. ուրեմն մեկնութիւնը պէտք է ուշադրութիւն դարձնէ ինչպէս լեզուի, այնպէս և իրական ծանօթութեան վրայ, ուստի և բաժանուում է անուանական և իրական մեկնութեան, անուանական մեկնութեան միջոցին ևս կարելի է ՚ի նկատի առնել խօսքերն ու նըրանց շարայարութիւնը և կամ արտայայտութիւնների առուեստական կարգաւորութիւնն ու զործածութիւնը. առաջինն է նեղ իմաստով բառական մեկնութիւն, որի օժանդակ միջոցներն են՝ բառգիրքն ու քերականութիւնը. երկրորդն է լեզուական արուեստական մեկնութիւն, որի օժանդակ միջոցներն են՝ ճարտասանութիւնը, հոետորիկան և պոէտիկան: Իրական մեկնութիւնն ևս կարող է երկու տեսակ լինել. նա կարող է ծանրանալ հեղինակի մըտքերի պարզաբանութեան վրայ և ցոյց տալ նըրանց յաջորդականութիւնն ու ներքին կապը և կամ նիւթը լուսաբանելու համար այլ գիտութեան սահմաններից բերել պատմական, բնագիտական, աշխարհագրական, ուազմագիտա-

կան, քաղաքակրթական և այլ ծանօթութիւններ. առաջինը կարելի է անուանել Տրամարտանական, իսկ վերջինը՝ զուտ իրական մեկնութիւն:

Բացի վերոյիշեալից կարևոր է նաև յաճախ հարց տալ, թէ բնագրի բովանդակութիւնը ճշմարիտ է թէ ոչ. և կամ մեր իմացութեան ու կեանքի համար որ և է արժեք ունի, թէ ոչ. ինչ նիւթը որ զուրկ է այդպիսի արժեքից, պէտք է դադարի դասաւանդութեան նիւթը լինելուց. կարևոր է նաև բնագրում նկարագրուած անձնաւորութիւնների բնաւորութիւնն ու զործադութիւնը բարոյական չափի տակ առնել և տեսնել արգեօք համապատասխանում են մեր բարոյական աշխարհահայեացքին. յամենայն դէպս լեզուական, տրամաբանական և իրական մեկնութեանց միջոցին չպէտք է անուշադիր թողնուի բարոյական տեսակէտը: Այսպիսով մեկնութեան համար մենք ստացանք մի հնգանդամ շարք, որ սակայն դեռ լրիւ չէ, որովհետեւ մեկնութիւնը ոչ միայն հասկացողութեանը պէտք է նպաստէ, այլ և զործադրութիւնն ի նկատի առնէ, որովհետեւ ընթերցանութեան նիւթը պէտք է օրինակ դառնայ և նորմեր տայ լեզուական կարողութեան համար բառագիտութեան (օնոմատիկա), ֆրազաբանութեան (ֆրազոլոգիա), ոճաբանութեան (ստիլիստիկա) և այլ միջոցներով:

Սակայն յաճախ պատահում է, որ դպրոցում կարդացւում և մեկնաբանուում են նաև օտար լեզուի երկեր. այդ դէպէտում վերոյիշեալ մեկնաբանական միջոցների վրայ աւելանում է նաև մի առաջնակարգ միջոց, այն է՝ օտար լեզուից փոխադրելն ու վերածելը մալրենի լեզուի. փոխադրութեան միջոցին ելակէտ պէտք է լինեն մայրենի լեզուի օրէնքները. պէտք է փոխադրել որչափ կարելի է հաւատարիմ և որչափ հարկաւոր է ազատ:

Մեկնաբանութեան և յաջող փոխադրութեան համար

(էթէ բնագիրն օտար լեզուով է) կարելի է սահմանել հետեւել կանոնները՝ 1) նիւրի մշակումի ա) արամաբանական մեկնութիւն, բ) իրական մեկնութիւն, գ) բարոյական արժէքի մոմենտը, դ) լեզուական և արուեստական մեկնութիւն (ճարտասանութեան, պոէտիկայի տեսակէտից), ե) օրինակներ լեզուական կարողութեան համար (քերականութեան և բառագիտութեան տեսակէտից), զ) կարեւորը գործածութեան համար (ոճաբանութեան և ֆրազաբանութեան տեսակէտից):

2) *Փոխագութիւն*. ա) նախազատըաստութիւն), ցուցումներ աշակերտին տնային աշխատանքի համար և լեզուական գժուարութիւնների ու խոչընդուների վերացումը, բ) տնային աշխատանք, գ) սրբագրութիւն ընկերների աջակցութեամբ և ուսուցչի ներկայութեամբ, դ) լրացուցիչ բացատրութիւններ և ե) նոր և օրինակելի փոխագրութիւն ուսուցչի առաջնորդութեամբ՝ ի նկատրանելով առաւելապէս մայրենի լեզուի օրէնքները:

Այս դէպքում ևս կարեոր է յիշատակել, որ անհրաժեշտ չէ մեկնաբանութեան միջոցին անպայման կերպով և ամեն դէպքում գործադրել այս ամբողջ բազմանդամ շղթան, աքեման միայն նրա համար է, որ յենակէտներ և տեսակէտներ տայ ուսուցչին և ոչ թէ մեքենական և շաբանական կերպարանք տայ դասաւանդութեանը. ինչպէս ամեն, այնպէս և մեկնաբանական դասի համար ուսուցիչը պէտք է պատրաստ ծրագիր ունենայ. բայց այդ ծրագիրը պէտք է շարժական լինի և ոչ մեխուած. ուսուցիչը կարող է նախօք կարծել, որ մի բան մեկնութեան կարոտ է և դասաւանդութեան միջոցին միայն նկատում է, որ սխալ է եղել իւր ենթագրութիւնը, բայց կարող է պատահել նաև հակառակը:

Եթէ վերոյիշեալ շարքի բոլոր անդամները հաւասարաչափ և համընթաց առաջ տանելու լինենք, դասաւանդութիւնը կը դանդաղի, կը ձգձգուի, ձանձրալի կը դա-

նայ և հեղինակն ու իր երկը հանդէս չեն դայ և գնահատուի արժանի չափով. միայն նա ազատ կը լինի այդ վտանգից, ով միշտ աչքի առաջ կունենայ երկի օրգանական բնոյթը, որի համաձայն ամեն մի մասը ամբողջի տեսակէտից պէտք է պարզաբանուի, որպէսզի մասերի բացատրութիւնը ամբողջի համացողութիւնը հնարաւոր դառնայ. հեղինակը ինքը պէտք է միշտ խօսողը լինի. ոչ մի ծանօթութիւն չպէտք է քերել դրաից, ինչ որ կարելի է հանել գրքից. իսկ բերածը պէտք է սերտ կապելնրահետ. մեկնութիւնը միջոց է և ոչ նպատակ, ուստի և չպէտք է զանազան երկրորդական և անարժեք ծանօթութիւններով հսեմացնել գրական երկի ամբողջութիւնը և գեղեցիկ ձեւը: Բնագիրը ինքը պէտք է ընթերցանութեան արագութեան կամ դանդաղութեան համար չափ դառնայ. պէս է կամ գործակառակը. Եթէ կարեւոր է ամբողջի կարաւոր է, կամ բնդիակառակը. Եթէ կարեւոր է ամբողջի կապակցութիւնը չկորցնել, պէտք է արագ առաջ գնալ. Իսկ պակցութիւնը չկորցնել, պէտք է արագ առաջ գնալ. Այս եթէ հնարաւոր է մանրամասնութիւնների վրայ կանոնական հեղինակին աչքից փախցնելու, կարելի է դանդաղ քայլերով առաջ գնալ: Վէպն աւելի արագ է կարգացւում քայլերով առաջ գնալ. «Կեսարը» կարելի է քանի քնարերգութիւնը և դրաման. «Կեսարը» պէտք է հիմնաւոր թուցիկ կարգալ, «Տագիտոս»ը պահանջում է հիմնաւոր պահանջանք լրացնել առաջնորդութիւն. չպէտք է մոռանալ ի հարևանութեան կէ աշակերտների պատրաստութիւնը և ըմբռնողութեան չափը:

Այս մեկնութիւնը, որ առաւելապէս ի նկատի ունի ամբողջութիւնը՝ կարող է լինել. ա) գրական երկի գենետական մեկնութիւնը՝ հիմնական իդէայից. բ) կենսագրական-գինետական. գ) գեղարուեստական և դ) գրական կամ քաղաքակրթական պատմական մեկնութիւն: Այս կերպով կարող են մեկնաբանուել առաւելապէս մայրենի գրական արտադրութիւնները. օտար գրական երկերը՝ ամբողջի ընթերցանութիւնից յետոյ, կարելի է տրամա-

բանօրէն յօդաբաշխել և գեղարուեստական արժէքը զնահատել։ Այս ընթացքը մեզ զգուշացնում է նաև մի մեծ մոլորութիւնից. այդ այն է, որ սովորաբար մայրենի և օտար գրական երկերն ուսումնակիրելիս՝ նախ քան բուն երկին անցնելը, ուսուցիչը «նախապատրաստօրէն» հեղինակի մասին գանազան «ներածութիւններ» է անում, կամ գրականութեան պատմութիւնից «պատրաստի դատողութիւններ» է տալիս հեղինակի և նրա շրջանի մասին և ապա, այդ դատողութիւնները հաստատելու համար, որպես օրինակ՝ բերում է հեղինակից «նմուշներ»։ Այս օրինակ ընթացքով աշակերտին կարելի է միայն թութակութեան ընտելացնել և ոչ թէ նրա մէջ ինքնուրոյն մտածողութիւն զարգացնել։

7) զ Ա Ր Գ Ա Ց Ւ Ղ Վ Ա

Դասը կոչւում է զարգացնող, երբ ուսուցիչը աշա-
կերտի մասնակցութեամբ՝ բազմօրինակ մասնաւոր օրի-
նակներից և ծանօթութիւններից դիմում է դէպի ընդհա-
նուր օրէնքը, որ հասրաւոր է դարձնում թափանցել իրե-
րի խորը և ըմբռնել նրանց էութիւնը. կամ, ընդհակա-
ռակը, ընդհանուրից իջնում է դէպի թանձրացեալը, մաս-
նաւորը և օրինակը: Զարգացնող դամն, ուրեմն, կարող է
ընթանալ թէ վերլուծաբար և թէ համազրաբար. (տես.
Գլ. Դ § 4): Զարգացնող դամը կարող է գործադրուել
ինչպէս էմպիրական (փորձառական), այնպէս էլ ոացիօ-
նալ (բանական) առարկաների նկատմամբ. այսպէս, օրի-
նակ, փորձը կամ փորձառութիւնը ուսուցանում է, որ
երկաթը տաքութիւնից լայնանում է, բայց այդ երեսյթը
միայն մասնակի չէ, այլ կը կնուռում է նաև միւս մետաղ-
ների նկատմամբ. այդտեղից կարելի է ընդհանուր բնա-
գիտական օրէնք հանել, որ մետաղները տաքութիւնից
լայնանում են: Յայտնի է նմանապէս, որ չուրը տաքու-
թեան միջոցով գոլորշիանում է. մի քանի հեղուկների

պատասխանում են. — Կապաստակը կարողանում է ազատուել իրեն հալածող թշնամուց, ա) շնորհիւ իր գոյնի (նապաստակների գոյների իրազննութիւնը և նրանց պաշտպանողական նշանակութեան բացարութիւնը), բ) շնորհիւ իր ուշադրութեան (նրա զգայարանների, յատկապէս աչքի և ականջի երազնութիւնը, բացարութիւնն ննրանց սուր զգայութեան). դ) շնորհիւ իր արագունութեան (առաջի և յետել ուսների երազնութիւնը, նրանց նպատակայարմարութեան բացարութիւնը): Սխալ կլինի վերլուծարար զարգացնող դասի ընթացքը, եթէ մասնաւոր օրինակները ըստ արժանույն չեն լուսաբանուում և ընդհանուր դատողութիւնը՝ որպէս մի նոր բեռ, ծանրանում է յիշողութեան վրայ, փոխանակ վերջինիս համար նեցուկ դասնալու: Անարժէք է մտքի հրահանգման համար նաև համարդրաբար զարգացնող դասը, եթէ ընդհանուր դատողութիւնները դոգմատիկ կերպով կազմ և պատրաստ տրուում կամ թելադրուում են աշակերտին և նրանից պահանջւում, որ անդիր անէ: Սահմանումներն ևս սենթէզներեն և զգուշութեամբ պէտք է գործադրուեն. աւելի լաւ է, որի է վերացական յատկութիւն սահմաննելիս, նախապէս օրինակը սահմաննել. օրինակ, փոխանակ մի անգամից սահմանելու, թէ ինչ է ժլատութիւնը, աւելի նպատակայարմար է նախ որոշել, թէ ինչպիսի մարդն է ժլատ կոչւում:

բ) Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ո Ղ Դ Ա Ս

(տես Ե զլ: § 4, հատուած Գ — § 5, հատուած Ա. — § 6, Ե աստիճան.)

§ 6. Կառաւանդուրեան ժօրմալ աստիճանները

Նախորդ զլուխներում փորձեցինք սահմաննել ուսուցման մեթոդները և դասաւանդութեան ձևերը. առաջ արգելն յիշատակեցինք, որ դասաւանդութեան տարբեր ձևերը միշտ անջատ չեն հանդէս դալիս, (տես. Ե զլ § 5, հատուած Երկրորդ) ալ միանում են՝ նպատակայարմար

նիւթի բազմակողմանի իւրացումը: Դասաւանդութեան ֆօրմալ աստիճանների ուսմունքը իրան տեսակէտ ունի այն սկզբունքը, որ ուսման մէծածաւալ նիւթը պէտք. է վերածուի «դասաւանդական միւթիւնների», որպէսզի աշքածելի դառնայ. իսկ ուսուցման եղանակը բազադրուած պէտք է լինի «մեթոդական միւթիւններից կամ աստիճաններից», որպէս զի հնարաւոր լինի աստիճանաբար և անշեղ կերպով հանել դասաւանդութեան նպատակին:

Առաջին ֆօրմալ աստիճանն է՝ նախապատրաստորիններ կամ անալիզը. այս սահմաննելիս մենք առաջնորդուում ենք հոգեբանական այն օրէնքով, որ իւրաքանչիւր նոր իմացութիւն կամ ծանօթութիւն ձեռք է բերւում շնորհիւ այն պատկերացումների և գաղափարների, որ արդէն ունենք. ուրմն, հախքան դասաւանդական պենսումի մատակարարելը, պէտք է նրա մէջ որոշել ծանօթ մասերը, կամ վերաբարելը, աշուկերուի փորձառութեան շրջանի մէջ վերաբարել աշուկերուի փորձառութեան շրջանից սաման կամ ազգակից պատկերացումները, այլ խօսքով սամած պէտք չէ անմիջապէս դունից սենեակը մտնել: Նոր նիւթի իւրացումը հին պատկերացումների միջոցով կոչւում է, ինչպէս զիտենք, ապակերեցիպցիա. (տես. Ե զլ § 2, հատուած հինգերորդ). արդ զէպքում հին պատկերացումները կլինեն իւրացնողները, իսկ նոր պատկերացումները՝ նոր իւրացնելիները: Հին պատկերացումները պէտք է նորի համար հող պատրաստեն, յինակէտներ, տեսակէտներ և յարաբերակեաներ տան. որչափ պակաս և ազօտ են լինում հին՝ իւրացնող պատկերացումները, այնքան գժուարութեամբ են մուտք գործում նորերը. այստեղից հետեւում է, որ նախ քան նոր նիւթի մատակարարմանը՝ բուն դասին անցնելը, պէտք է վերաբարելըն կամ տրուեն այն բոլոր ծանօթութիւնները, որոնք գիւրացնուում կամ ընդհանրապէս հնարաւոր են դարձնում նոր նիւթի իւրացումը. այլապէս ասած պէտք է աշակերտին փոխադրել այն մասը որ շրջանը, որին պատկանում է մատակարարելի նիւթը.

այսպէս օր. տարրական թուաբանութեան մէջ անծանօթը և նորը պէտք է բացարել ծանօթի և յայտնի միջոցով. Եթէ աշակերտին անծանօթէ, որ $2 \times 3 = 6$. բայց յայտնի է, որ $2+2+2=6$. առաջինը՝ բազմապատկումը պէտք է վերածել երկրորդին, գումարումի. գործադրական հաշուեղութեան մէջ օրինակները միշտ պէտք է վերցնել աշակերտի փորձառութեան շրջանից, ինչպէս՝ օրավարձը, տան վարձը, աշխատանքի վարձը, մթերքների գները և այլն. Նախապատրաստութեան կամ անալիզի համար կարելի է օգտուել բացի ծանօթից՝ նաև նման կամ ազգակից երկոյթներից. օր. այծեամը, եղնիկը կարելի է պատկերացնել այծի միջոցով, օտար կըկնորոճները՝ հայրենի երկրի կըկնորոճների, աղուէսը և գայլը՝ շան, առիւծը և վագրը՝ տնային կատուի միջոցով և այլն. Լեզուի մէջ էլ օտար լեզուների քերականական համաձայնութեան և խօսքերի կազմութեան համար մայրենի լեզուից կարելի է վերցնել նման օրինակերը. Աշխարհազրութեան դասաւանդութեան ժամանակ ևս, եթէ պէտք է մատչելի դարձնել աշխարհազրական անծանօթ գաղափարներ, ինչպէս՝ գետ, գետաբերան, ջրվէժ, ջրանցք, կիրճ, քարանձաւ ևն, անհրաժեշտ է դիմել հայրենի երկրի նման երեսոյթներին. Ի հարկէ, ինչպէս ամեն դէպքում, այստեղ էլ չպէտք է խիստ ֆօրմալիս՝ ձևապաշտ լինել. Եթէ աշակերտի իմացութիւնը և ծանօթութիւնները այնքան ճկուն և դիւրաշարժին որ նոր պատկերացումները առանց դժուարութեան իւրացուել կարող են—մի բան, որ բարձր կարգի դպրոցներում աւելի շուտ հնարաւոր է, քան տարրական ուսումնարաններում—կարելի է առանց որևէ նախապատրաստութեան անցնել բուն նիւթին, մտնել և medias res. Եթէ, օրինակ, պատմում է մի հեքիաթ կամ վէպիկ, ուր հանդէս են դալիս քաջքեր, հերոսներ, վիշապներ, դղեակներ, պալատնիր ևն. կարեւոր չէ նախապատրաստական ծանօթութիւններ առաջ նախապատրաստութեան միջոցին գլխաւոր բանն

է՝ նպատակն աչքից չ'փախցնել և այնքան ծանօթութիւններ տալ կամ պատկերացումներ վերաբարեկել, որչափ որ անհրաժեշտ է նոր նիւթի իւրացման համար. Պէտք է զգուշանալ նախապատրաստութիւններին (ներածութեան) կերպարանք տալուց, որ յաճախ շատ աւելի նորութիւններ է պարունակում իր մէջ, քան իւրացնելի նոր նիւթը: Նախապատրաստութիւնը նպատակիցը շեղում է, եթէ «նախապատրաստօրէն» արդէն մատակարարում է բուն նիւթը և այդպիսով միանգամայն թուլանում և բթանում է աշակերտի սպասողական և լարուած հետաքրքրութիւնը նոր նիւթի հանդէս: Պէտք է նմանապէս սահմանափակել կամ կարձել նախապատրաստութիւնը, եթէ նախորդ դասի նիւթը աշակերտի միջ այնպիսի խնդիրներ, հարցեր և լկանկածներ է առաջ բերել, որոնք իրենց լուծումը կամ ուսաբանութիւնը ստանալու են նոր դասի մէջ: Ընդհանրապէս որչափ հասուն, վարժ և արթուս է աշակերտը, այնչափ պէտք է փոքրանայ նախապատրաստութեան ծաւալը: Պէտք է սակայն զգուշանալ նիւթի մատակարարման միջոցին կտոր ծանօթութիւններ տալ կամ վերաբարել իւրացնող պատկերացումները. մտածողութիւնը անդամանաւում է, երբ պատմական որևէ նիւթ մատակարաբերու միջոցին կամ մաթեմատիկական որևէ օրէնք կամ թէորեմա ալգացուցանելիս, ամեն տեսակ կողմնակի ծանօթութիւններով ընդհանաւում է գասաւան դութիւնը. այս պատմանում է յաճախ, երբ ուսուցիչը դասի համար նախապատրաստուած չի լինում և տեղի անտեղի, ժամանակ անժամանակ ծանօթութիւններով համեմում, աւելի ճիշտ ասած անհամացնում է դասը:

Գասաւանդութեան երկրորդ աստիճանն է՝ մատակարաւումն կամ սինթեզը. ամեն արգելք և դժուարութիւն, որ կարող է կասեցնել նիւթի մատակարարումը, պէտք է նախապատրաստական դասի միջոցին արդէն վերացուած լինի. Ուսուցիչը պէտք է հանաչէ աշակերտի պատրաստու-

թեան և ըմբռնողութեան չափը և ըստ այնմ յօդաբաշ-
խէ մատակարարելի նիւթը (տես. գլ Ե § 4). նիւթի կու-
տակումը խառնում և ընկճում է աշակերտի մտածողու-
թիւնը, մինչ դեռ քայլ առ քայլ առաջ գնալը դիւրացնում
է իւրացման ընթացքը և յուսազրում աշակերտին։ Հան.
գստեան կէտերը, յետադարձ հայեացքը, նիւթի բացարու-
թիւնը սեղմ և ամփոփ տախտակի վրայ գրելը, պատ-
մելու միջոցին բանուկ և նշանակալից խօսքերը տեղին և
պատշաճաւոր կերպով գործ ածելը մեծ ծառայութիւն կտ-
րող են մատուցանել մատակարարմանը։ Աշակերտն ստա-
ցած նիւթն անդրադարձնելիս համարձակ և վստահ պէտք
է լինի իր գիտեցածի վրայ. եթէ նրան չի յաջողուում մի
թուաբանական խնդիր լուծել, մի բան պատմել, մաթե-
մաթիկական մի թէորեմա ապացուցանել, աշխարհագրա-
կան քարտէզ նկարել, մի պատմական երեսյթի պատճառն
ու հետեանքն ուղիղ որոշել, անձնաւորութիւններիներքին
դրդիչները բացադրել կամ բնոյթները նկարագրել — ու-
սուցիչը կարող է մի ակնարկով, մի խօսքով կամ մի կէ-
տի լուսաբանութեամբ ճանապարհը ցոյց տալ. պէտք է,
սակայն, ըստ կարելոյն թողնել, որ աշակերտն իր սեփա-
կան ճանապարհով գնայ, որպէսզի նա չթութակէ առանց
հասկանալու, այլ մաքերն յղանայ ինքնուրոյն կերպով։
Ամենավստահելի փորձաքարը, թէ մէկը մի բան ըմբռնել
է, այն է, որ նա այդ բանը ներկայացնէ իր եղանակով
և իր սեփական խօսքերով (Հերբարտ)։ աշակերտը պէտք
է մի բան ներկայացնէ իր հասակին յատակ և ժողովրդական
ոգուն հաւատարիմ, պարզ արտայայտութիւններով։ մի
բանի բառացի և անգոյն կրկնութիւնը, առաց սրաի, մտ-
քի և երեակայութեան կենդանի մասնակցութեանը, դա-
սին մեքենական կերպարանք է տալիս, ճնշում է աղատ
մտածողութիւնը, գաղարում է հետաքրքիր լինելոց և
կորցնում է իր կրթիչը ոյժը։

Դաստանդութեան երրորդ ստափանն է՝ զուգողու-

րիւնը՝ ասսօցիացիան. զործնականի մէջ դժուար է տ-
ուածին երկու աստիճանները՝ անալիզը և սինթէզը զատել
զուգորդութիւնից, որովհետև նախապատրաստութեան և
մտակարարման միջոցին ճանապարհ է հարթուում զու-
գորդութեան համար։ Զուգորդութիւնը կապակցութեան
մէջ է դնում իմացութեան նիւթերը՝ կարեսը և աժէքա-
ւորը սրոնելով, իսկ անարժէքն ու ոչ կարեսորը՝ մերժելով
(ասսօցիատիւ և դիսսօցիատիւ) և մտմնաւոր ու թանձրա-
ցեալ օրինակները խնամքով համեմատելով ու ընդհանուր
օրէնքը, գաղափարը, կանոնը գտնելով։ Մինչդեռ չորրորդ
ստափաննը՝ ամփոփումը կամ սիստեմը, սահմանումէ վե-
րոյիշեալ եղանակով գտած օրէնքը, կանոնը, գաղափարը
և գտնում է լեզուական համուպատասխան, ձշգրիտ ար-
տայայտութիւն։ Զուգորդութեան գործողութիւնը կարելի
է նմանեցնել մի ճանապարհորդութեան, որի ընթացքում
մասնաւոր խոչընդոտները յաղթելով՝ բարձրանում ենք լե-
րան կատարը. այն ինչ սիստեմը այդ կատարն է, հանգս-
տի կէտը, որտեղից հնարաւոր է հանգիստ հայեցողու-
թեամբ յետագարձ հայեացք ձգել անցած ճանապարհի
վրայ, որովհետև ձեռք ենք բերել ընդարձակ տեսագաշտ
և կարողենք յետ գտնեալ՝ ինչ ուղղութեամբ որ կամե-
նանք։ Այս արդիւնաւոր զուգորդութիւնը միշտ պէտք է
ուղեկցէ կրաւորական ստացութեանը, սրովհետև կրաւո-
րական ստացութիւնը թմբեցնում է մատաղ հոգին, մինչ
գեռ զուգորդութիւնը կենդանի հետաքրքրութիւն է առաջ
բերում։ Ով որ կամենում է զրաւել աշակերտների աշխա-
տակցութիւնը և վառ պահել նրանց մասնակցութիւնը՝
պէտք է ձգտէ հետաքրքիր հարցեր և ինսդիրներ տալ առ-
սօցիատիւ և դիսսօցիատիւ մտածողութեան ճանար։ Ա-
ռանձնապէս բնական զիտութիւնների գասաւանդութեան
միջոցին մեծ արդիւնք է խոստանում այս երկու աստի-
ճանների գործածութիւնը. այսպէս, օրինակ, շան ընտա-
նիքը (սիստեմ) ճանաչելու համար, ի նկատի ենք առնում

շան, աղուէսի, զայլի ընդհանուր յատկութիւնները, պատում ենք մասնաւոր յատկութիւնները և համադրելով ընհանուրները՝ սահմանում ենք արդիւնքը։ Աշխարհագրութեան դասին՝ երկրները կարելի է համեմատել ըստ մեծութեան, ազգաբնակութեան թուի, լեզուի, դաւանանքի, տնտեսական դրութեան և պատկերացուների ընդհանուր խմբեր կազմելով՝ վերջը վերածել սիստեմի։ Ընդհանուր պատմութեան մէջ, օրինակ, կայսրների և պատերի յարաբերութիւնը ամփոփ պատկերացնելու համար, կարելի է համեմատել Կարլոս Մեծին և Ոթոն I, Հինրիխոս III և Սուտրին, Ենրիկոս IV և Կանոսսան, Բարբարոսսան և Վենետիկիլ։ Զուգորդութիւններ հնարաւոր և ցանկալի են նաև ուսման տարբեր ճիւղերի մէջ, որոնք որևէ կրդմով իրար հետ առընչութիւն ունեն. այդպէս են, օրինակ, լեզուի և պատմութեան, պատմութեան և աշխարհագրութեան դասի նութերը. մտածողութեան համար այդպիսով հաղորդակցութեան ձանապարհներ են բացւում. Որչափ բազմակողմանի լինեն զուգորդութիւնները, այնքան կարգաւորւում է իմացութեան պաշարը և ազաւում մոռացութեան վասնգից։ Զուգորդութեան օրէնքների համաձայն կարգաւորուած իմացութիւնը նման է մի զբուագրանի, որի մէջ ամէն գիրք իր սեփական տեղն ունի միւս զբքերի շարքում և գանւում է գիւրութեամբ, չնորհիւ աջ ու ձախ կողմի հարեան զբքերի։ Այս զբուարանի օրինակը ակներե է դարձնում, որ միշտ նմանութիւնը, նոյն օրինակութիւնը չէ, որ զուգորդութեան համար յինակէտ է դաւանում, ոյլ յաճախ հակադիր, հակօրինակ պատկերացումներն աւելի սերտ են զուգորդուում։ Հոգեբանական այս իրողութիւնը միշտ պէտք է տչքի առաջ ունենալ. քերականական կանոնները, պատմական անձնաւորութիւնները, բնագիտական երևոյթները այն գէպում են հեշտութեամբ զուգորդուում, երբ իրար նըկատմամբ աչքառու հակադրութեան մէջ են մտնում. նոյն

կամ նմանօրինակութիւնը սովորաբար անգոյն և աղօտ է լինում, մինչդեռ այլ կամ հակօրինակութիւնը գօրեղ է գունաւորւում և աւելի լաւ տպաւորւում յիշողութեան մէջ. այնպէս, ինչպէս որ զբագարանում աւելի դիւրին է գտնել մի մեծ գիրք, եթէ նա ընկած է երկու փոքր գըրքերի մէջ. այս բանը հաստատում է նաև լատինական խօսքը exceptio firmat regulam (բացառութիւնն հաստատում է օրէնքը):

Դասաւանդութեան չորրորդ ֆօրմալ աստիճանն է, ինչպէս յիշատակեցինք՝ ամփոփումը, որ զուգորդութեան շնորհիւ զտած ընդհանուր գագափարները ամփոփում ու սահմանում է և վերածում սիստեմի։ Նախապատրաստական և մատակարարող գասերից ստացուած նիւթերը՝ զուգորդութեան շնորհիւ զտուելով և կապակցութեան մէջ մտնելով գանուում են մայուն սեփականութիւն, որից յետոյ սիստեմը սահմանում է նախորդ աշխատանքի արդիւնքը։ Ի հարկ է կարենը չէ որ այս չորս աստիճաններն էլ (նախապատրաստումն, մատակարարում, զուգորդութիւն և ամփոփումն) միշտ նոյն կարգով, նոյն ընդարձակութեամբ իրար յետեկց շղթայուած հանդէս գան. երեմն կարելի կլինի թոփչքներով առաջ գնալ. ուրախ և զուարթ մանկութեանը յատուկ են մարմնական թոփչքներ, ինչու թոյլ չըտալ աեզին նաև մտաւոր թոփչքներ. որովհետեւ յաճախ, առանց երկար ու բարակ հարց ու փորձեր անելու, կարելի է անմիջապէս ամփոփումներ անել և սիստեմներ կազմել. երբ, օրինակ, մի բանի արամաբանական ճշմարտութիւնը այնքան ակներե և աշքառու է, որ ապացոյցները ձանձրալի իմաստակութիւններ են դառնում. իիստ տաղտկալի է, երբ մէկը սովորական կեանքում երկար ու ձիգ բացագրութիւններով պնդում կամ պաշտպանում է մի բան, որի մասին բնաւ կասկած չէ յատնուած։ Դասաւանդութեան չորրորդ աստիճանը՝ սիստեմը, չպէտք է միան գործ ունենայ ընդհանուր ճշմարտութիւնների հետ,

այլ պէտք է ձգուէ իրականութեան հետ հաղորդակցութեան մէջ մնալ, օրինակներ տալ կամ գտնել, անդադար և անվերջ խորասուզուել փորձուութեան իրազննական և թանձրացեալ աշխարհը՝ թարմանալու և վերացական գաղափարների սահմանում շրջելու համար:

Միտեմ կազմելով ամեն բան գեռ վերջացած չէ. դասծ և սահմանած գաղափարները պէտք է գործադրուեն. սիստեմին պէտք է հետեւ, որպէս հինգերորդ առտիճան, գործադրութիւնը կամ այլառէս ասած՝ մերոյն, որով ոտք ենք դնում ինքնուրոյն հետախուզութութեան ճանապարհը: Իմացութիւնը՝ շնորհիւ գործադրութեան, կը փոխուի կարողութեան. աշակերտը պէտք է ձեռք բերած ընդհանուր գաղափարները և կանոնները զանազան տեսակէտներից ստուգէ, ինքնուրոյն կերպով գործադրէ բազմօրինակ մասնակի դէպքերի նկատմամբ. ամենից շատ այդպիսի վարժութիւններ կատարւում են մաթեմատիկայի դասերին. իւրաքանչուր թուաբանական, երկրաչափական ինդիր աշակերտի համար մի օպերացիա է, որի ընթացքում նա աշխատում է փորձել կամ հաստատել ընդհանուր կանոնը. որչափ յաճախ են կատարւում այդպիսի վարժութիւններ, այնչափ դիւրանում է գործադրութիւնը: Մատեմատիկայի դասերի համար այդ վարժութիւնները անհրաժեշտ են համարում, բայց միւս առարկաների համար՝ ոչ. Եթուի դասաւանդութեան միջոցին, օրինակ, սովորաբար բաւականանում են կանոնով ենթադրելով, որ եթէ կանոնը ուղիղ ըմբռնուած է, գործադրութիւնն ևս ապահոված է. մի բան, որ մեծ մոլորութիւն է:


«ործադրութիւնը դիւրացնելու և արդիւնաւոր դարձնելու համար օգտակար միջոց է իմացութեան նիւթը յաճախ հին կապակցութիւնից լուծել և նոր ձեւ տակ դնել, սովորածի կարգը զանազան տեսակէտներից փոփոխել և ոչ թէ նոյն բանը շարունակ միևնույն կարգով յիշողաբար վերաբարել: Պատմութեան դասաւանդութեան միջոցին,

օրինակ, ժամանակագրական հասկացողութիւնը կարելի է գործ դնել զանազան երևոյթների նկատմամբ և տարբեր տեսակէտներից, աշխարհագրութեան դասի միջոցին յայտնի աշխարհագրական օրէնքներով բացադրել անծանօթերկրները, անծանօթ բոյսերը որոշել՝ համաձայն արդէն յայտնի կարգերի, մաթեմատիկական ինդիրները լուծել՝ ծանօթ թէորեմաների օժանդակութեամբ, լեզուական յայտնի կանոնները որոնել հեղինակների երկերում և գործադրել վարժութիւնների և թարգմանութիւնների միջոցով: Բացի այս ակադեմիական գործադրութիւնը, բոլոր ձեռք բերած պատուական ձշմարտութիւնները, թուաբանական և երկրաչտփական թէորեմաները, բնագիտական օրէնքները պէտք է ներկայի կորիքների և ինդիրների հետ առընչութեան մէջ դնել. այդպիսով գալոցը նախապատրաստած կլինի կեանքի համար, կապ կպահպանէ կեանքի հետ և չի կզկանայ կեանքից, ինչպէս այդ սովորաբար պատահում է:

Ֆօրմալ աստիճանների նշանակութիւնը այն է, որ նա հիմք ունենալով իւրացման հոգեբանական օրէնքները (ստացութիւն, հասկացողութիւն և ամրապնդումն), ուսուցչին մեթոդական յինակէտներ է տալիս. նրանց բացարձակ և շարլոնական գործադրութիւնը դասաւանդութեանը միայն վասել կարող է. ուսուցչի անհատական տակտին և հմտութեանն է թողնուում, իւրաքանչիւր դէպքում ուղիղ գնահատել, թէ որչափ կարեոր է կանգ առնել այս կամ այն աստիճանի վրայ, որպէսզի դասաւանդութիւնը ընթանայ աշակերտի ստածողութեան համաձայն և ոչ ընդհակառակը. Պէտք է նկատել, որ այս ամբողջ ապաբարատը միայն այն դէպքում պէտք է գործողութեան մէջ դընել, երբ ձեռք են բերուելու նոր ձշմարտութիւնները, ընդհանուր դատողութիւններ և գաղափարները, որոնք գործադրուելու են յաջորդ գասերին. այդպէս լինում է յաճախ բնական գիտութիւնների դասաւանդութեան միջոցին:

ցին. այս դէպքերում, երբ, ինչպէս պատմութեան, բնական պատմութեան, աշխարհագրութեան և լեզուի լասաւանդութեան միջոցին, պէտք է իւրացուեն իմացութեան թանձրացեալ և մասնակի նիւթեր, շաբլոնը կարելի է մի կողմր ձգել. կե՛ դանի և բազմակողմանի իրազննութիւնն ամեն բան կարող է փոխարինել: Բացի այդ, եթէ գաղափարը վերացական և դիտակտիկական ձեռվ ոլարաստի տուած է, կարեոր չէ այլ ևս անցնել բոլոր աստիճանները, այդ դէպքում մնում է աշակերտին իջեցնել փորձառութեան և իրազննութեան աշխարհը՝ հաստատելու համար ընդհանուր ճշմարտութիւնը, որ արդէն տուած է և կարիք չը կայ այլ ևս որոնելու: Ֆօրմալ աստիճանների կործածութիւնը պէտք է սահմանափակել նաև աշակերտի տարիքի տեսակէտից. ստորին դասարաններում զգուշութեամբ պէտք է վերացական զաղափարներ կազմել տալ, որովհետև աշակերտները գեռ ընտելացած չեն լինում փիլիսոփայական մտածողութեան և նրանց ծանօթութիւնը դեռ այնքան ընդարձակ և բազմակողմանի չէ, որ կարողանան ընհանուր և պարտադիր արժէք ունեցող դատողութիւններ կազմել. այդպիսի դէպքերում կարելի բաւականանալ պատկերացումների խմբեր կազմելով, որոնք պարունակում, բայց չեն արտայտում ընդհանուր գաղափարները: Ուսուցիչը ստիպուած է յաճախ միայն առաջին երկու կամ երեք աստիճանները կիրառնել, իսկ մնացածները հանգիստ խղճով պատճենացն և պատեհ առթին թողնել:





48.618

